Եվրոպական միություն

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

www.ichd.org

Հայաստանում ընտանեկան բռնությանը բազմաոլորտային արձագանքի տրամադրման առկա պրակտիկայի և նախաձեռնությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված

Որակական հետազոտություն

Զեկույց

Սույն հետազոտությունը պատրաստվել է Եվրոպական միության և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ՝ «Հայաստանում գենդերային բռնության դեմ պայքարին ուղղված ուսումնասիրություններ, տեղեկությունների տարածում և իրավական աջակցություն» ծրագրի շրջանակում: Սույն հետազոտության բովանդակության պատասխանատուն բացառապես Մարդկային զարգացման միջազգային կենտրոնն է, և այն որևէ կերպ չի արտացոլում Եվրոպական միության և/կամ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի տեսակետները:

Երևան – 2017թ.

1. Բովանդակություն

1. Բովանդակություն 1
2. Երախտիքի խոսք 3
3. Հապավումներ 5
4. Մեթոդաբանություն 6
4.1. Հետազոտության խնդիրները 6
4.2. Ֆոկուս խմբային քննարկումներ 7
4.3. Փորձագիտական հարցազրույցներ 10
5. Պատկերացումներ և ընկալումներ ընտանեկան բռնության մասին. ֆոկուս խմբային քննարկումների արդյունքները 12
5.1. Ընկալումներ ընտանեկան բռնության սահմանման և դրսևորումների մասին 12
5.2. Մեղք բարդելը 15
5.3. Ընկալումներ ընտանեկան բռնության առաջացման և դրա դրսևորումներին նպաստող գործոնների վերաբերյալ 17
5.4. Բռնություն վերապրած անձի և բռնարարի վարքը 26
5.5. Ընկալումներ ընտանեկան բռնությանը միջամտելու վերաբերյալ 34
5.6. Միջամտության մասին ընկալումներն՝ ըստ դերակատարների 36
5.7. Շարունակական աջակցություն ընտանեկան բռնություն վերապրած անձանց 42
5.8. Ընկալումներ ընտանեկան բռնությունը կանխելու վերաբերյալ 44
6. Ոլորտում կարևորագույն լիազորություններ ունեցող, գործառույթներ իրականացնող և ծառայություններ մատուցող կառույցների պատկերացումները և ընկալումները ընտանեկան բռնության կանխարգելման քաղաքականության գործիքների մասին. հարցազրույցների արդյունքները 46
6.1. Իրազեկվածություն 46
6.2. Աջակցություն ընտանեկան բռնություն վերապրած անձանց 50
6.3. Բռնություն գործադրողի հետապնդում և վերականգնում 60
7. Ոլորտում կարևորագույն լիազորություններ ունեցող, գործառույթներ իրականացնող և ծառայություններ մատուցող կառույցների պատկերացումները և ընկալումները ընտանեկան բռնության կանխարգելման քաղաքականության մշակման, իրականացման և վերահսկողության մասին. հարցազրույցների արդյունքները 63
7.1. Փաստա-վիճակագրական հենք 63
7.2. Իրավական կարգավորման շրջանակ 65
7.3. Ինստիտուցիոնալ կարողություններ 68
7.4. Համագործակցություն 72
8. Ամփոփում 78
8.1. Ընկալումներ ընտանեկան բռնության դրսևորումների վերաբերյալ 78

8.2. Ընտանեկան բռնության առաջացմանը նպաստող պատճառներ և գործոններ 78
8.3. Բռնություն վերապրած անձի և բռնարարի վարքը 80
8.4. Ընկալումներ ընտանեկան բռնությանը միջամտելու վերաբերյալ 81
8.5. Աջակցություն ընտանեկան բռնություն վերապրած անձանց 82
8.6. Բռնություն գործադրողի հետապնդում և վերականգնում 83
8.7. Հանրային իրազեկվածությունն ընտանեկան բռնության և դրան արձագանքելու համար առկա ծառայությունների վերաբերյալ.....83
8.8. Կանոնակարգման շրջանակ.....84
8.9. Փաստա-վիճակագրական հենք 85
8.10. Կանխարգելում 85
9. Հավելված 1.Ընտանեկան բռնության և այս ոլորտում լիազորություններ ունեցող, գործառույթներ իրականացնող և ծառայություններ մատուցող ֆորմալ և ոչ ֆորմալ կառույցների և ներկա պրակտիկայի վերաբերյալ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրության ֆոկուս խմբերի հարցաշար.....87
10. Հավելված 2. Փորձագիտական հարցազրույցներին մասնակցած ինստիտուտների ցանկ 89
11. Հավելված 3. Ընտանեկան բռնության և այս ոլորտում լիազորություններ ունեցող, գործառույթներ իրականացնող և ծառայություններ մատուցող ֆորմալ կառույցների ներկա պրակտիկայի իրավիճակային ուսումնասիրության փորձագիտական հարցազրույցի ընդհանրական հարցաշար 90

2. Երախտիքի խոսք

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը մեծապես շնորհակալ է բոլոր նրանց, ովքեր աջակցել են մեզ Հայաստանում ընտանեկան բռնությանը բազմաոլորտային արձագանքի տրամադրման առկա պրակտիկայի և նախաձեռնությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված որակական հետազոտության իրականացման ողջ ընթացքում: Մենք շնորհակալ ենք մեր աշխատանքի ընթացքում ձեր արտահայտած ոգեշնչող գաղափարների, անգնահատելի կառուցողական քննադատության և բարեկամական խորհուրդների համար: Մեր ջերմ երախտագիտությունն ենք ուղղում մեր բոլոր գործընկերներին՝ հետազոտությանը վերաբերվող տարբեր հարցերի կապակցությամբ հնչեցված պայծառ ու խորիմաստ մտքերի համար:

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնն իր խորին երախտագիտությունն է հայտնում Միավորված ազգերի բնակչության հիմնադրամին, որի օժանդակությամբ հնարավոր դարձան սույն հետազոտությունն ու հրապարակումը: Այս գործում մեծ երախտիք ունեն ՄԱԲՀ հայաստանյան գրասենյակի գործադիր ներկայացուցիչ պարոն Գարիկ Հայրապետյանը և Ծրագրի համակարգող տիկին Անուշ Խաչատրյանը, ում անգնահատելի ներդրումը գաղափարների ձևավորման գործում օգնել է մեզ համակարգել հետազոտության աշխատանքները և մշակել սույն հրապարակումը:

Ձեզ ներկայացվող հետազոտության աշխատանքների իրականացումն անհնար կլիներ առանց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի, ՀՀ կրթության և գիտության նախարարության և Կրթության ազգային ինստիտուտի, ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ ոստիկանության, Քննչական կոմիտեի և Գլխավոր դատախազության, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ Շիրակի և Գեղարքունիքի մարզպետարանների և դրանց աշխատակազմերի Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության ու ազգագրության ինստիտուտի, Հանրային խորհրդի և հիարկե՝ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի շահագրգիռ աջակցության: Այս մարմինները, դրանց ղեկավարներն ու մասնագետները մշտապես արձագանքել են տեղեկությունների հավաքման աշխատանքներին. առանց նրանց գործուն աջակցության հնարավոր չէր լինի ընթացիկ զարգացումների վերաբերյալ հուսալի տեղեկություններ, ինչպես նաև մի շարք փորձագետների և հարցվողների մասնակցությունն ապահովել հետազոտության ընթացքում:

Շնորհակալության խոսք ենք ուղղում նաև «Տաթև-95» հոգեբանական աջակցության և խորհրդատվության կենտրոնին, մասնավորապես Անահիտ Թևոսյանին և Վահե Բունիաթյանին, Մարտունու կանանց համայնքային խորհրդին և դրա նախագահ Անահիտ Գևորգյանին, «Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամին և Հայաստանում հիմնադրամի ներկայացուցիչ Նելլի Մեսրոպյանին՝ սերտ համագործակցության և սույն հետազոտության մեջ կարևոր դերակատարման համար:

Այնուհետև, մենք երախտապարտ ենք Երևանի թիվ 1 պոլիկլինիկային, Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոնին, Համայնքային զարգացման և սոցիալական աջակցության կենտրոնին, Նուբարաշենի Երեխայի և ընտանիքի աջակցման կենտրոնին, Աջափնյակի ցերեկային կենտրոնին, Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոնին, Քաղաքացիական հասարակության ինստիտուտին, «Սոցիալական արդարություն» հասարակական կազմակերպությանը, Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամին, Հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամին, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Քրիստոնեական դաստիարակության կենտրոնին, «Դիսըբիլիթի ինֆոն» տեղեկատվական հասարակական կազմակերպությանը, Պանարմենիան Մեդիա Գրուպին և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամին, որոնք հնարավորություն տվեցին մեզ հարցազրույցներ անցկացնել իրենց աշխատակիցների և շահառուների հետ, ինչպես նաև օգտագործել ուսումնասիրության համար անհրաժեշտ նյութերը:

Հաշվի առնելով հետազոտության առարկայի յուրահատկությունները և թեմայի զգայունությունը՝ մեր ջերմ ու առանձնահատուկ շնորհակալությունն ենք հայտնում Երևանում, Գյումրիում և Մարտունիում ֆոկուս խմբերի բոլոր մասնակիցներին և հատկապես բռնություն վերապրած կանանց, ովքեր վստահելով հետազոտական թիմին, անկեղծորեն ներկայացրին իրենց կենսափորձը՝ օգնելով թիմին վեր

հանել բռնություն վերապրած անձանց համար հասանելի աջակցության պրակտիկայի վերաբերյալ ընկալումներն ու խնդիրները Հայաստանում:

Պատիվ ենք համարում նաև մեր խորին երախտագիտության խոսքն ուղղել ՀՀ ԱՍՀՆ Կանանց հիմնահարցերի բաժնի պետ Արմենուհի Թանաշյանին, ՀՀ առողջապահության նախարարության Մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի պետ Գայանե Ավագյանին, ՀՀ արդարադատության նախարարության Միջազգային իրավական փոխօգնության և արտաքին կապերի վարչության պետ Քրիստինե Գրիգորյանին, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրավական վերլուծության վարչության պետ Լուսինե Սարգսյանին և վարչության աշխատակից Շուշանիկ Խուրշուդյանին, ՀՀ Հանրային խորհրդի անդամ Անահիտ Աղոյանին, Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժնի պետ Լիլիթ Գորգինյանին, Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժնի պետ Մամիկոն Գալոյանին, Երևան քաղաքի ավագանու անդամ Զարուհի Բաթոյանին, Երևանի քաղաքապետարանի Ընտանիքի, կանանց, երեխաների պաշտպանության բաժնի պետ Իդա Խաչատրյանին, Երևանի քաղաքապետարանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Հովիկ Ղալեչյանին, ՀՀ գլխավոր դատախազության դատախազ Ալիսա Ամիրխանյանին, դատախազ Անդրանիկ Մանուկյանին, ՀՀ քննչական կոմիտեի Իրավական ապահովման և վիճակագրական վարչության պետ Դավիթ Թումասյանին, Երևանի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժնի պետ Տիգրան Թամամյանին, Լոռու մարզային քննչական վարչություն ավագ քննիչ Հրաչ Պողոսյանին, ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչության պետ գնդապետ Նելլի Դուրյանին, վարչության պետի տեղակալ գնդապետ Արթուր Վարդանյանին, ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության ոստիկանության Գավառի բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի պետ մայոր Արթուր Գնդոյանին, ՀՀ ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ փոխգնդապետ Կարեն Գևորգյանին, Անչափահասների գործերով բաժանմունքի պետ մայոր Արթուր Ղազարյանին, բաժանմունքի ավագ տեսուչ ավագ լեյտենանտ Լուսինե Համբարձումյանին, բաժանմունքի տեսուչ ավագ լեյտենանտ Այծեմիկ Գևորգյանին, բաժանմունքի տեսուչ ոստիկանության կապիտան Լիանա Խաչատրյանին, Պանարմենիան Մեդիա Գրուպի լրագրող Մանու Իրիցյանին, Քաղաքացիական հասարակության ինստիտուտի նախագահ Արտակ Կիրակոսյանին, ՔԴԿ ծրագրերի գծով փոխտնօրեն Ելենա Հարությունյանին, ԵՀԽ Կլոր Սեղան հիմնադրամի ծրագրերի համակարգող Կարինե Քոչարյանին, «Սոցիալական արդարություն» ՀԿ ղեկավար Արշակ Գասպարյանին, Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն Միրա Անտոնյանին, Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոնի սոցիալական աշխատողներ Գայանե Գալոյանին և Եղսիկ Բաղդասարյանին, Համայնքային զարգացման և սոցիալական աջակցության կենտրոնի գործադիր տնօրեն Անի Պետրոսյանին, Երևանի քաղաքապետարանի թիվ 1 պոլիկլինիկայի տնօրեն Ռուզաննա Հայրապետյանին և բժիշկ Էլմիրա Խառատյանին, Սոցիալական աջակցության «Գյումրի-2» տարածքային բաժնի տնօրեն Էդուարդ Բաղրամյանին, Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ղեկավար Տանյա Ռադոչային, ՀՀ ԱՍՀՆ Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի Սոցիալական աջակցության և սոց. Ինովացիաների բաժնի պետ Արմինե Մխիթարյանին, ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի փորձագետ Անուշ Ալեքսանյանին, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության ու ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Ռուզաննա Ծատուրյանին՝ շահագրգիռ քննարկումների և արժեքավոր մտքերի համար, որոնք մեծապես օգտակար են եղել սույն հետազոտության համար, թե՛ տեսական, թե՛ գործնական առումով: Ձեր խորհուրդներն ու կարծիքներն անգնահատելի են:

3. Հապավումներ

ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոցներ
ՀԱԵ	Հայ Առաքելական Եկեղեցի
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԿԳՆ	Կրթության և գիտության նախարարություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԲՀ	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍԱՏԲ	Սոցիալական աջակցության տարածքային բաժին
ՍԱՏԳ	Սոցիալական աջակցության տարածքային գործակալություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՔԿ	Քննչական կոմիտե

4. Մեթոդաբանություն

4.1. Հետազոտության խնդիրները

1. Հետազոտության նպատակն է բացահայտել Հայաստանում ընտանեկան բռնությանը բազմաոլորտային արձագանքի տրամադրման առկա պրակտիկայի առանձնահատկությունները՝ ընտանեկան բռնության դեմ պայքարի և այն կանխելու ներկա և հետագա նախաձեռնությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, ինչպես նաև ներկայացնել համապատասխան առաջարկներ: Նշված նպատակի իրագործման համար հետազոտության շրջանակում սահմանվել են հետևյալ խնդիրները՝

   - վեր հանել ընտանեկան բռնության վերաբերյալ ընկալումները, պատկերացումները և վերաբերմունքը.
   - վեր հանել ընտանեկան բռնությանն արձագանքելու գործում լիազորություններ ունեցող, գործառույթներ իրականացնող և ծառայություններ մատուցող ֆորմալ կառույցների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը, ինչպես նաև ֆորմալ և ոչ ֆորմալ կառույցների միջամտության վերաբերյալ ընկալումները և վերաբերմունքը.
   - համադրելով փորձագիտական և ոչ փորձագիտական կարծիքներն ու տեսակետները՝ ներկայացնել առաջարկներ, որոնք հնարավորություն կընձեռեն ընտանեկան բռնությանը բազմաոլորտային արձագանք տրամադրող դերակատարներին առավել արդյունավետորեն կանխել ընտանեկան բռնությունը:

2. Հետազոտության մեթոդաբանական գործիքներն ընտրված են որակական հետազոտությունների մեթոդաբանության դասական գործիքակազմից՝ ֆոկուս խմբային քննարկումներ և փորձագիտական հարցազրույցներ:

3. Սույն հետազոտության մեջ կիրառված մի շարք եզրույթների առումով հարկ է նշել, որ ընտանեկան բռնության հիմնախնդրի հետազոտական և գործնական տարբեր աշխատանքներում ներգրավված շահագրգիռ կառույցները նույն երևույթի նկարագրության համար տարբեր եզրույթներ են կիրառում և շրջանառում: Այսպես, հասարակական կազմակերպությունները, պետական կառույցները և միջազգային զարգացման գործընկերները երբեմն տարբեր եզրույթներ են կիրառում՝ հասցեագրելով այն անձանց ում հանդեպ կիրառվել է բռնություն: Հատկանշական է, որ հասարակական կազմակերպությունները և միջազգային զարգացման գործընկերները նախընտրում են «ընտանեկան բռնություն վերապրած անձ» եզրույթը, թեև առաջինները երբեմն կիրառում են նաև «ընտանեկան բռնությունից տուժած» եզրույթը: Միաժամանակ, պետական նորմատիվ փաստաթղթերում գերազանցապես կիրառվում է «ընտանեկան բռնության ենթարկված անձ» եզրույթը: Սույն հետազոտության շրջանակներում կիրառվել է «ընտանեկան բռնություն վերապրած անձ» եզրույթը, բացառությամբ այն դեպքերի, երբ մեջբերում է արված կանոնակարգման պետական փաստաթղթերից և պետական պաշտոնյաների հետ իրականացված փորձագիտական հարցազրույցներից:

4. Թերևս հետագա պարզաբանման կարիք ունեն նաև հետևյալ եզրույթները՝ երկրորդային զոհացում, կրկնակի զոհականացում և կրկնազոհացում: Որոշակի տարընթերցման տեղիք է տալիս «կրկնակի զոհականացում» եզրույթը, որով տարբեր կառույցների ներկայացուցիչներ բնութագրում են ընտանեկան բռնություն վերապրած անձի՝ բռնության ենթարկվելուց հետո նույն փորձառությունն այլ համատեքստերում վերապրելու երևույթը: Իրավապահ մարմիններն իրենց աշխատանքում առավելապես կիրառում են «երկրորդային զոհացում» եզրույթը, բնութագրելով բռնություն վերապրած անձի կողմից ևս մեկ անգամ այդ փորձառությունը վերապրելու հանգամանքը, որը կարող է պայմանավորված լինել ծառայություն մատուցողների կողմից ցուցաբերված ոչ պատշաճ, երբեմն մեղադրական վերաբերմունքով. «երկրորդային զոհացում՝ հանցագործության ուղղակի հետևանք չհանդիսացող զոհացումն է, որը պայմանավորված է տուժողի հետ աշխատող մարմինների և կառույցների ներկայացուցիչների կողմից տուժողի նկատմամբ ցուցաբերված՝ երեխաների նկատմամբ ոչ զգայուն մոտեցմամբ»: Միաժամանակ, այս երևույթը այլ շահագրգիռ կառույցների ներկայացուցիչները, այդ թվում՝ ՀԿ-ների և այլ պետական մարմինների ներկայացուցիչներ, սահմանում են որպես «կրկնակի զոհականացում»: Մինչդեռ իրավապահ մարմինների ներկայացուցիչները

«կրկնակի զոհականացումը» սահմանում են բոլորովին այլ կերպ. «Կրկնակի զոհականացումը տեղի է ունենում այն դեպքերում, երբ նույն անձը կամ նույն վայրը որոշակի ժամանակահատվածում դառնում է մեկից ավելի հանցագործության թիրախ»: Միաժամանակ, «կրկնազոհացում» եզրույթը սահմանվում է որպես առաջնային զոհացման, այսինքն բռնության փորձառության և դրան հաջորդող երկրորդային զոհացման ամբողջականություն:

5. Սույն զեկույցում կիրառվել են իրավապահ մարմինների կողմից կիրառվող եզրույթները, քանի որ վերը նկարագրված երևույթների մասին հիմնականում խոսվում է հենց իրավապահ մարմինների համատեքստում:

4.2. Ֆոկուս խմբային քննարկումներ

6. Ֆոկուս խմբային քննարկումների մեթոդն ընտրվել է Երևանում, Գեղարքունիքի և Շիրակի քաղաքային և գյուղական համայնքներում կանանց և տղամարդկանց՝ ընտանեկան բռնության վերաբերյալ ընկալումները, վերաբերմունքը, ծառայություններ տրամադրողների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը, ինչպես նաև ընտանեկան բռնությանն արձագանքող ֆորմալ, մասնավորապես բազմաոլորտային արձագանքման գործընթացում լիազորություններ ունեցող կառույցների, և ոչ ֆորմալ դերակատարների միջամտության վերաբերյալ վերաբերմունքը և գնահատականները վեր հանելու համար:

7. Հետազոտության ընթացքում կազմակերպվել է 13 ֆոկուս խմբային քննարկում, յուրաքանչյուրում՝ 6-15 մասնակից: Մասնակիցների ընտրությունը կատարվել է ըստ երեք հիմնական չափանիշի՝ սեռ, տարիք և բնակության վայր: Չորս առանձին ֆոկուս խմբային քննարկում է կազմակերպվել նաև այն կանանց հետ, որոնք իրենց կյանքի որևէ ժամանակահատվածում ենթարկվել են ընտանեկան բռնության:

8. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հետազոտության առարկան ոչ թե ընտանեկան բռնության փորձառության վերհանումն է կամ երևույթի տարածվածության բացահայտումը, այլ երևույթի վերաբերյալ ընկալումները, ինչպես նաև բազմաոլորտային արձագանքի մասին իրազեկվածության և դրա որակի վերաբերյալ կարծիքները, ընտանեկան բռնություն վերապրած կանանց ներգրավվածությամբ հետազոտական աշխատանքների նախընտրելի մեթոդ համարվող անհատական հարցազրույցների փոխարեն ընտրվել է ֆոկուս խմբային քննարկումը, որը հետազոտական նման շրջանակում համարվում է միանգամայն ընդունելի մեթոդ[1]: Ավելին, քննարկումն, ի տարբերություն անհատական հարցազրույցների, հնարավորություն է ընձեռում անմիջականորեն դիտարկել կարծիքների տարբերությունները և ֆոկուս խմբերի մասնակիցների արձագանքն այդ տարբերություններին, որն ընկալումների և վերաբերմունքի վերաբերյալ հետազոտություններում թույլ է տալիս վերհանել որոշ կարևոր արդյունքներ, մասնավորապես.

- ոչ միայն մասնակցի կողմից «ճիշտ» և «օրինակելի» համարվող, մասնակցի և իր կողմից ընդունելի համարվող սոցիումի ակնկալիքներին համապատասխանող ընկալումները և պատկերացումները երևույթի վերաբերյալ, որոնք մասնակիցն ավելի է հակված ներկայացնելու անձանոթին (սույն հետազոտության պարագայում ֆոկուս խմբային քննարկումը վարողին և խմբի այլ անդամներին), այլ խմբում առկա անձնային դինամիկայի և փոխանակված կարծիքների ազդեցության ներքո, բարձրաձայնել նաև այն անհատական ընկալումներն ու պատկերացումները, որոնցով մասնակիցը պայմանավորում է իր ընտրությունը որոշումների կայացման գործընթացում և դրանով պայմանավորված վարքը.
- քննարկումը թույլ է տալիս բացահայտել նաև տարբեր տեսակետների հանդեպ հանդուրժողականության դրսևորումը, որն առավել քան կարևոր է այն դեպքում, երբ հետազոտական շրջանակը ներառում է երևույթի կանխմանը միտված առաջարկների փաթեթի մշակում:

9. Գիտակցելով հետազոտական նպատակին ավելի համահունչ մեթոդի կիրառման առավելությունը, այդուհանդերձ փորձ է արվել հնարավորինս նվազեցնել բռնություն վերապրած կանանց կողմից

[1] Ellsberg M, and Heise L. Researching Violence Against Women: A Practical Guide for Researchers and Activists. Washington DC, United States: World Health Organization, PATH; 2005.

բռնության փորձառությունը մեկ անգամ ևս վերապրելու (երկրորդային զոհացման) հավանականությունը՝ ներգրավելով արհեստավարժ, նման կանանց հետ աշխատանքի փորձ ունեցող վարողներ և մանրակրկիտ կերպով մշակելով մասնակիցների ներգրավման մի շարք մեխանիզմներ:

10. Մասնակիցների ներգրավման նպատակահարմարությունը քննարկվել է նաև պետական կառավարման տարածքային մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների պետական և հասարակական մի շարք կազմակերպությունների հետ, որոնք տարբեր ոլորտներում աջակցություն են տրամադրում սոցիալապես խոցելի խմբերին, այդ թվում՝ ընտանեկան բռնություն վերապրած կանանց: Այսպես, Շիրակի մարզում բռնություն վերապրած կանանց որպես ֆոկուս խմբի մասնակիցներ ներգրավելու համար հետազոտական թիմը խորհրդակցել է մարզպետարանի Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի, «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Համայնքային զարգացման և սոցիալական աջակցության կենտրոն» ԲՀԿ-ի հետ, քանի որ նրանց շահառուների թվում են նաև բռնություն վերապրած կանայք, անգամ եթե այս կանայք դեռևս չեն գիտակցում իրենց հանդեպ ընտանիքի որևէ անդամի կողմից իրականացվող բռնության դրսևորումը, կամ անգամ գիտակցելու դեպքում, չեն բարձրաձայնում այդ մասին: Նման պարագայում, մարզային և համայնքային մակարդակներում խորհրդակցությունները հատկապես արժեքավոր են, որովհետև փոքր համայնքներում, իսկ այս մարզերում անգամ մարզկենտրոն համարվող քաղաքային համայնքները մեծ չեն, այս կառույցների աշխատակիցները հնարավորություն ունեն նույնականացնելու բռնություն վերապրած կնոջը, եթե անգամ այդ նույնականացումը անուղղակի է և ոչ պաշտոնական:

11. Գեղարքունիքի մարզում ֆոկուս խմբեր կազմակերպվել են «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» հասարակական կազմակերպության հետ սերտ համագործակցությամբ, քանի որ կազմակերպությունը 2000 թվականից զբաղվում է մարզի կանանց հիմնախնդիրներով և վստահություն է վայելում համայնքներում: Ավելին, այն անմիջականորեն առնչվում է ընտանեկան բռնության խնդրին որպես ծառայություն մատուցող՝ ժամանակավոր կացարան տրամադրելով ընտանեկան բռնություն վերապրած կանանց:

12. Այսպիսով, Շիրակի և Գեղարքունիքի մարզերում բռնություն վերապրած կանանց ֆոկուս խմբերի մասնակիցները կանայք էին, ովքեր ենթարկվել կամ ենթարկվում են ընտանեկան բռնության, անկախ այն հանգամանքից, թե իրենք արդեն իսկ որևէ կերպ արձագանքել են իրենց հանդեպ ընտանեկան բռնության դրսևորումներին, կա՛մ նախընտրել են որևէ կերպ չանձագանքել՝ համարելով, որ դա ընտանեկան հարաբերություններում անխուսափելի է, կա՛մ պարզապես չեն գիտակցում, որ իրենց հանդեպ վերաբերմունքն ընտանեկան բռնության դրսևորում է:

13. Երևանում նման ֆոկուս խումբ կազմակերպելու համար հետազոտական թիմը համագործակցել է «Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամի հետ, որն ընտանեկան բռնություն վերապրած կանանց ապահովում է ապաստարանով, «Տաթև-95» հոգեբանական աջակցության և խորհրդատվության կենտրոնի, Նուբարաշենի Երեխայի և ընտանիքի աջակցման կենտրոնի, Աջափնյակի ցերեկային կենտրոնի և Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոնի հետ:

14. Երևանյան առաջին ֆոկուս խմբին մասնակցում էին բռնություն վերապրած յոթ կին, որոնցից հինգը հեռացել էին բռնարարից. հետազոտության իրականացման պահին նրանք կա՛մ գտնվում էին աջակցություն տրամադրող կազմակերպության հոգածության ներքո, կա՛մ էլ փորձում էին ինքնուրույն վաստակել: Երկու կին շարունակում էր ապրել ամուսնու հետ և վերջինիս կողմից ենթարկվել բռնության: Կանանցից վեցը բռնության էր ենթարկվել ամուսնու կամ ամուսնու և վերջինիս հարազատների կողմից, մեկ կին, ընդ որում ազգությամբ՝ եզդի, ծնողների կողմից, ովքեր ստիպել էին վաղ տարիքում ամուսնանալ:

15. Երկրորդ ֆոկուս խմբին մասնակցում էր 33-46 տարեկան վեց կին, որոնցից մեկը ֆիզիկական տեղաշարժման հատուկ կարիքներով: Այս կանայք ընտանեկան բռնության արդյունքում հոգեբանական աջակցության համար դիմել էին «Տաթև-95» հոգեբանական աջակցության և խորհրդատվության կենտրոն: Նրանցից հինգն ամուսնալուծված են:

16. Ֆոկուս խմբերի մասնակիցներին ներգրավելու նման մոտեցման առավելություններից մեկն էլ այն էր, որ տեղական պետական և հասարակական կազմակերպությունների աշխատակիցները փորձել են տղամարդկանց խմբերում ներգրավել նաև տղամարդկանց, ովքեր ընտանիքում բռնություն են գործադրել կնոջ կամ երեխայի նկատմամբ: Այս տղամարդիկ հետապնդման չեն ենթարկվել, քանի որ

բռնության դեպքերը չեն ուղղորդվել իրավապահ մարմիններին: Սակայն սոցիալական աշխատողները նրանց հետ աշխատել են անուղղակիորեն՝ փորձելով նրանց հետ հոգեբանական վերականգնողական աշխատանքներ տանել հանուն երեխայի բարօրության: Մասնակիցների մասին նման տեղեկատվությունն անշուշտ գաղտնի է, սակայն այն հնարավորություն է ընձեռում ֆոկուս խմբերի վարողներին, պահպանելով հետազոտական էթիկայի կանոնները, փորձել համադրել մասնակիցների կողմից «օրինակելի» համարվող ընկալումներն ու մոտեցումները նրանց վարքի հետ, և այդպիսով դիտարկել նաև մասնակիցների անկեղծության խնդիրը: Ֆոկուս խմբերի կառուցվածքը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Ֆոկուս խմբերի կառուցվածքը

	Սեռ	Տարիք	Համայնք	Մասնակիցների թվաքանակ
1.	Տղամարդիկ	18-32	Երևան	17
2.	Տղամարդիկ	50-70	Վերին Գետաշեն	8
3.	Տղամարդիկ	37-45	Գյումրի և հարակից գյուղական համայնքներ	6
4.	Կանայք	23-37	Երևան	16
5.	Կանայք	29-68	Ներքին Գետաշեն	17
6.	Կանայք	29-45	Ծովինար	8
7.	Կանայք	50+	Գյումրի	7
8.	Կանայք	25-50	Լուսակերտ	15
9.	Կանայք (ընտանեկան բռնություն վերապրած)	17-45	Երևան	7
10.	Կանայք (ընտանեկան բռնություն վերապրած)	31-46	Երևան	6
11.	Կանայք (ընտանեկան բռնություն վերապրած)	20-57	Մարտունի և հարակից գյուղական համայնքներ	8
12.	Կանայք (ընտանեկան բռնություն վերապրած)	31-43	Գյումրի	8
13.	Կանանց և տղամարդկանց խառը խումբ	31-55	Երևան	12 (7 կին, 5 տղամարդ)

17. Ֆոկուս խմբերի իրականացման համար, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հետ սերտորեն խորհրդակցելով, մշակվեց նաև հետազոտության խնդիրներին համահունչ ընդհանրական հարցաշար (*տե՛ս՝* Հավելված 1):

18. Այսպիսով, նշված ֆոկուս խմբերը թույլ տվեցին վեր հանել ընտանեկան բռնության վերաբերյալ առկա ընկալումների և պատկերացումների օրինաչափությունները, ինչպես նաև առկա նորմերի, վերաբերմունքի, իրազեկվածության որակական պատկերը: Այս ֆոկուս խմբերի նպատակը ոչ թե ընտանեկան բռնության տարածվածության վերաբերյալ տվյալների կամ ընտանեկան բռնության համապարփակ իրավիճակային վերլուծության համար անհրաժեշտ տվյալների վերհանումն էր, այլ այնպիսի տվյալներ ստանալը, որոնք թույլ կտային հասկանալ բազմաոլորտային արձագանքի ներկա պրակտիկայի վերաբեյալ քաղաքացիների գնահատականները, համադրել դրանք արձագանքող ֆորմալ կառույցների գնահատականների հետ և փորձել բարելավել թե՛ ներկա պրակտիկան, թե՛ ավելի արդյունավետորեն մշակել ընտանեկան բռնության կանխարգելմանը միտված նախաձեռնությունները:

4.3. Փորձագիտական հարցազրույցներ

19. Հետազոտության ընթացքում 30 խորացված փորձագիտական հարցազրույց է իրականացվել ընտանեկան բռնության դեմ պայքարի ոլորտում լիազորություններ ունեցող և ծառայություններ մատուցող կառույցների ներկայացուցիչների հետ (տե՛ս՝ Հավելված 2), այդ թվում՝

- քաղաքականություն մշակողների և իրականացնողների՝ ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության և ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի ներկայացուցիչների, Երևանի քաղաքապետարանի, Շիրակի և Գեղարքունիքի մարզպետարանների Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների ղեկավարների հետ.
- փաստավիճակագրական հենք ապահովող կառույցների՝ ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայության ներկայկացուցիչների հետ.
- իրավապահ մարմինների ներկայացուցիչների՝ համապատասխան մասնագիտական փորձ ունեցող ոստիկանության աշխատակիցների, ՀՀ Քննչական կոմիտեի ներկայացուցիչների, ՀՀ դատախազության ներկայացուցիչների հետ.
- առողջապահության և սոցիալական ոլորտում պետական ծառայություններ մատուցողների ներկայացուցիչների՝ բժիշկների, պոլիկլինիկայի ղեկավարության, ՍԱՏԲ ղեկավարության և սոցիալական աշխատողների հետ.
- ծառայություն մատուցող և փաստավիճակագրական հենք ապահովող հասարակական կազմակերպությունների, գիտական հաստատությունների և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչների հետ.
- ՋԼՄ ներկայացուցիչների հետ:

20. Հարցազրույցների վարման նպատակով մշակվել է ընդհանրական հարցաշար, որի առանցքում դրվել է երկու հիմնական խնդիր՝ բացահայտել փորձագետների կարծիքներն ու գնահատականներն ընտանեկան բռնության դեմ պայքարի և կանխարգելմանը միտված քաղաքականության առկա գործիքների (policy instruments) և քաղաքականության մշակման, իրականացման և վերահսկողության վերաբերյալ (*տե՛ս*՝ Հավելված 3): Հարցերի առաջին խումբը ներառում է հանրային իրազեկվածության, բռնություն վերապրածներին հրատապ և շարունակական աջակցության տրամադրման և բռնություն գործադրողի հետապնդման և վերականգնման խնդիրները, իսկ երկրորդում ներառված են քաղաքականության մշակման համար անհրաժեշտ փաստավիճակագրական հիմքի, կանոնակարգման շրջանակի և ինստիտուցիոնալ կարողությունների խնդիրները:

21. Հարցազրույցի հրավերին արձագանքեցին վերը նշված բոլոր կառույցների ներկայացուցիչները, բացառության մի շարք հասարակական կազմակերպությունների, մասնավորապես Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի: Հրավերը մերժվեց հետևյալ գրավոր հիմնավորմամբ՝

> *«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի մի շարք անդամներ հրավեր են ստացել «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպությունից՝ «Հայաստանում ընտանեկան բռնության որակական հետազոտություն» ծրագրի շրջանակներում մասնակցելու փորձագիտական խորին հարցազրույցների և ծրագրին օժանդակելու անհրաժեշտ տեղեկություններով ու տվյալներով:*
>
> *Թե՛ «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ն, թե՛ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը քաջատեղյակ են Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի դիրքորոշման մասին վերոնշյալ ծրագրի վերաբերյալ: Այս նամակով հայտնում ենք, որ Կոալիցիայի դիրքորոշումը շարունակում է մնալ անփոփոխ: Մենք ակնկալում ենք եռակողմ հանդիպում Եվրոպական միության պատվիրակության և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի ներկայացուցիչների հետ՝ քննարկելու ծրագրի խնդրահարույց կողմերը, ստանալու անհրաժեշտ պարզաբանումներ ու մշակելու իրատեսական լուծումներ:*

Հարգանքով՝

Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա»

22. Թեև նամակում նշվում է, որ «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ն քաջատեղյակ է Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի դիրքորոշման մասին վերոնշյալ ծրագրի վերաբերյալ», այդուհանդերձ ՄԶՄԿ-ն այդ դիրքորոշման վերաբերյալ պաշտոնապես չի հայտնվել: ՄԶՄԿ-ն տարբեր ոչ պաշտոնական աղբյուրներից անուղղակիորեն տեղեկություններ էր ստացել կոալիցիայի քննադատության վերաբերյալ: Այդ լուրերն անարձագանք չթողնելու մտադրությամբ ՄԶՄԿ-ն պաշտոնապես պատրաստակամություն էր հայտնել ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (որպես ծրագրի պատվիրակողի) միջնոդրությամբ քննարկելու բարձրացված խնդիրները և համագործակցության եզրեր գտնել, սակայն ՄԶՄԿ այս առաջարկին Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան պաշտոնապես չարձագանքեց:

23. Այսպիսով, թեև փորձագիտական գնահատականներում բացակայում են ընտանեկան բռնություն վերապրածներին աջակցություն տրամադրող և ընտանեկան բռնության կանխարգելմանը միտված նախաձեռնություններ իրականացնող մի շարք ՀԿ-ների անմիջական կարծիքներն ու գնահատականները, այդուհանդերձ նրանց կողմից հրապարակայնորեն արտահայտված կարծիքներն ու գնահատականները հետազոտության խնդիրների վերաբերյալ դիտարկվել են վերլուծության շրջանակներում՝ հիմնվելով մասնավորապես 2017թ. հուլիսի 27-ին Մեդիա կենտրոնում կազմակերպված «Ընտանեկան բռնության դեպքերը 2017-ին. օրենսդրական բացերն ու կանխարգելման միջոցները» մամլո ասուլիսի[2] ընթացքում հնչած կարծիքների և դիրքորոշումների վրա, որին մասնակցում էին «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի երեք կառույցների՝ Կանանց իրավունքների կենտրոնի, Կանանց ռեսուրսային կենտրոնի, «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի ներկայացուցիչները:

[2] Մամլո ասուլիսի տեսագրությունը հասանելի է հետևայլ հղումով՝ https://goo.gl/r1MH28:

5. Պատկերացումներ և ընկալումներ ընտանեկան բռնության մասին. ֆոկուս խմբային քննարկումների արդյունքները

5.1. Ընկալումներ ընտանեկան բռնության սահմանման և դրսևորումների մասին

24. Բոլոր ֆոկուս խմբերում ընտանեկան բռնությունը հիմնականում սահմանվում է որպես ֆիզիկական և հոգեբանական բռնություն ընտանիքի որևէ անդամի հանդեպ: Որպես բռնության ենթարկվող անձ՝ մասնակիցներն ավելի հաճախ դիտարկում են կնոջն ու երեխային: Գրեթե բոլոր խմբերում որոշ մասնակիցներ անդրադառնում են նաև ընտանեկան բռնության այլ տեսակներին՝ տնտեսական և սեռական, թեև այս մասնակիցներն ավելի սակավաթիվ են: Հատկանշական է, որ թեև *տնտեսական* բռնության զոհ հիմնականում համարվում են կանայք, սակայն սա ընտանեկան բռնության գրեթե միակ տեսակն է, որի զոհ թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ համարում են նաև տղամարդուն:

25. Մասնակիցները կանանց հանդեպ տնտեսական բռնության հիմնականում երկու դրսևորում են շեշտում.

- ամուսինը կամ սկեսուրը տնօրինում է կնոջ եկամուտները.
- ամուսինը վերահսկում է կնոջ տնտեսական գործունեությունը, հաճախ ստիպելով կնոջը հրաժարվել աշխատանքից, կամ ընդհանրապես թույլ չի տալիս նրան աշխատել:

26. Տղամարդկանց հանդեպ կանանց կողմից տնտեսական բռնություն է համարվում տղամարդու եկամտի տնօրինումը, առանց վերջինիս կարծիքը հաշվի առնելու (հատկապես այն դեպքում, երբ ամուսինն աշխատանքային միգրանտ է), ինչպես նաև կնոջն ու ընտանիքին ֆինանսապես ապահովելու շարունակական պահանջները, որոնք հաճախ ուղեկցվում են հեռանալու կամ երեխաներին հորից հեռացնելու սպառնալիքներով:

> *«Կինը սպառնում է, որ եթե ամուսինը փող չտա, նա երեխային կվերցնի ու կգնա տնից»:*
>
> ***Գյումրի, տղամարդկանց խումբ***
>
> *«Երբ ամուսինը վերադառնում է խոպանից, կինը վերցնում է ձեռքից ամբողջ գումարը ու ծախսում իր նախաձեռնությամբ: Եթե ամուսինը առարկում է, ապա կինը սկսում է վիճել նրա հետ՝ ասելով. «Քո՞ աշխատավարձն է, թե՞ մերը»:*
>
> ***Լուսակերտ, կանանց խումբ***

27. Հատկանշական է, սակայն, որ Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն գյուղում 50 տարեկանից մեծ տղամարդիկ, ի տարբերություն Գյումրիում, կարծում են, որ կնոջ շարունակական պահանջը, թե տղամարդը պարտավոր է վաստակել և ֆինանսապես ապահովել իր ընտանիքը, ինչպես նաև դրանից բխող փոխհարաբերությունների լարվածությունը և կոնֆլիկտները տնտեսական բռնության դրսևորումներ չեն: Տղամարդկանց մեծամասնությունն այստեղ պնդում է, որ կինն իրավունք ունի տղամարդուն նախատել չաշխատելու համար և դա բռնություն չէ.

> *«Մեր հասարակությունում այդպես է ընդունված. տղամարդը պարտավոր է աշխատել և իր ընտանիքը պահել»:*

28. Հատկանշական է, որ գյուղում տղամարդկանց զգալի մասն արտագնա աշխատանքով է ապահովում ընտանիքի սոցիալ-տնտեսական բարեկեցությունը:

29. Սեռական բռնության մասին նշում են նաև Երևանում բռնություն վերապրած կանանցից մի քանիսը, թեև ի տարբերություն այլ տեսակների՝ բռնության այս տեսակի դրսևորումների մասին քննարկում չի ծավալվում.

> *«Հայկական ընտանիքներում ավելի տարածված է հոգեբանական ու սեռական բռնությունը, նվաստացումն ու անտեսումը»:*

30. Միայն հպանցիկ անդրադարձը սեռական բռնությանը թերևս փաստում է հայաստանյան հասարակությունում սեռականության և սեռական հարաբերությունների հանրայնորեն քննարկելուց խուսափելու մշակույթի առկայությունը, սակայն անուղղակիորեն մատնանշում է նաև խնդրի բացահայտման և դրան արձագանքելու անհրաժեշտությունը:

31. Մասնակիցների զգալի մասն ընտանեկան բռնությունը **սահմանում է** որպես *«ֆիզիկական բռնություն» տղամարդու կողմից կնոջ հանդեպ*, թեև մի քանիսը շեշտում են, որ ընտանեկան բռնության մասին լսելիս, իրենք առաջինը պատկերացնում են *բռնություն ծնողի կողմից երեխայի հանդեպ*: Մասնակիցներից ոմանք նշում են նաև այն մասին, որ հաճախ ծնողներն ու երեխաները չեն գիտակցում, որ ծեծը ևս բռնություն է, քանի որ հայկական մշակույթում, հատկապես ընտանիքում, ծեծը համարվում է դաստիարակության ընդունելի մեթոդ.

> *«Երեխային ծեծելը շատ վատ բան է, բայց երբ շատ եմ ջղայնանում, կարող եմ մի երկու հատ հասցնել»:*
>
> ***Գյումրի, տղամարդկանց խումբ***

32. Հատկանշական է, որ Գեղարքունիքի գյուղական խմբերում երեխային ծեծելը համարվում է առավելապես դաստիարակության միջոց, այլ ոչ թե բռնության դրսևորում.

> *«Ծեծն ու ճլոտին անհրաժեշտ է տարբերել: Ժողովրդի մեջ մի խոսք կա՝ ապտակով սնված տղեն առանց աստիճան չի մնա»:*
>
> ***Վերին Գետաշեն, տղամարդկանց խումբ***

33. Հատկանշական է, որ բռնության դրսևորումների և սահմանումների մասին պատկերացումները քննարկելիս, Գեղարքունիքի Վերին Գետաշեն գյուղում կազմակերպված տղամարդկանց ֆոկուս խմբում բավականին հաճախ հնչում էր այն կարծիքը, թե ընտանեկան բռնության ընկալումների վրա Հայաստանում սկսում են մեծ ազդեցություն ունենալ եվրոպական իրողություններն ու արժեքները, որոնք, ըստ մասնակիցների, միշտ չէ, որ համընկնում են հայ ավանդական արժեքներին ու իրողություններին, և դրանց միջև հակասությունները երբեմն հանգեցնում են բռնության.

> *«Մենք Եվրոպա չենք, մենք ավանդական հասարակություն ենք. հիմա երեխային ծնողական դաստիարակության համար ծեծելը ինչպե՞ս կարելի է բռնություն համարել»:*

34. Ֆոկուս խմբերի արդյունքները ցույց են տալիս, որ իր տարբերություն Գեղարքունիքի և Շիրակի մարզերի մասնակիցների՝ Երևանի մասնակիցները երեխայի ծեծը հիմնականում դիտարկում են որպես բռնություն:

35. Երևանյան մասնակիցներից ոմանք շեշտում են այն հանգամանքը, որ եթե բռնությունը երեխայի հանդեպ հանրային խարանի է արժանանում, և տղամարդիկ թաքցնում են նման դեպքերը, ապա կնոջ հանդեպ բռնությունը երբեմն հպարտանալու առիթ է դառնում, հատկապես տղամարդու ընկերական շրջապատում: Թերևս ընտանեկան բռնության հանդեպ անհանդուրժողականության ձևավորման հիմնական խոչընդոտներից մեկն էլ հենց սա է՝ առնականության վերաբերյալ պատկերացումներում կնոջ հանդեպ իշխանության բռնի դրսևորումն ընդունելի համարելու հանգամանքը: Տղամարդու կողմից նման ընկալումն ու դրանից բխող վերաբերմունքը հանգեցնում են նոր բռնությունների՝ բռնարարի մոտ ստեղծելով իր վարքի ու արարքների անպատժելիության ընկալում:

36. Մասնակիցներից շատերի կարծիքով երեխայի հանդեպ բռնությունն ավելի թաքնված է, քան կնոջ հանդեպ բռնությունը, և շատ ավելի վտանգավոր է թե՛ կարճաժամկետ, թե՛ հատկապես երկարաժամկետ առումով, որովհետև երեխան ավելի անպաշտպան է և չի կարողանում, անգամ չի ցանկանում պաշտպանվել իր ծնողներից բռնության դրվագների դեպքում, իսկ երկարաժամկետ առումով, նա կա՛մ որդեգրում է բռնություն կիրառողի կա՛մ զոհի վարքագծային մոդելները: Առաջինն ավելի հատուկ է տղաներին, իսկ երկրորդն աղջիկներին:

«Եթե երեխան տեսնում է անհարգալից վերաբերմունք մոր հանդեպ, ապա ինքն էլ է այդպիսի վերաբերմունք ցուցաբերում՝ սկզբում մոր հանդեպ, իսկ ապագայում՝ նաև կնոջ»:

Լուսակերտ, 20-50տ. կանանց խումբ

«Եթե տանը բռնություն կա, ապա այն ազդում է երեխայի վրա, և նա կարող է կրկնել նման վարքը, երբ մեծանա»:

Գյումրի, տղամարդկանց խումբ

37. Ընտանեկան բռնությունն այն խմբերում, որտեղ բռնություն վերապրած անձինք չկան, սահմանվում է ոչ միայն որպես ֆիզիկական բռնություն, այլև որպես արգելքների և սպառնալիքների կիրառում, մինչդեռ բռնություն վերապրած կանանց խմբում ընտանեկան բռնության սահմանման առանցքները ֆիզիկական և հոգեբանական բռնության դրսևորումներն են: Հատկանշական է, որ բոլոր խմբերում որոշ մասնակիցներ հոգեբանական բռնությունը շատ ավելի ծանր դրսևորում են համարում, քան ֆիզիկականը: Միաժամանակ, բռնություն վերապրած կանանց խմբերում մասնակցիների մեծամասնությունը հոգեբանական բռնությունն առավել ծանր դրսևորում է համարում, քան ֆիզիկական բռնությունը.

«Արհամարհանքը, անտեսումը, շարունակական վիրավորանքը շատ ավելի ճնշող են, քան խփելը»:

«Դու ի՞նչ մայր ես, ի՞նչ կին ես... Սրանից դաժան էլ ի՞նչ կարող է լինել...»

Գյումրի, բռնություն վերապրած կանանց խումբ

38. Սա թերևս կարելի է բացատրել առնվազն երկու հանգամանքով: Նախ, հոգեբանական բռնությունը շատ ավելի շարունակական և պարբերական բնույթ ունի, և դրա տևական դրսևորումների ազդեցությունն ավելի խորն ու ծանր է, քան ֆիզիկական բռնության դրսևորումները, որոնք թեև կարող են ավելի վտանգավոր ազդեցություն ունենալ բռնություն վերապրած անձի ֆիզիկական առողջության և անգամ կյանքի վրա, սակայն դրանց պատեհական բնույթը թույլ է տալիս որոշ, հատկապես ոչ ծայրահեղ դրսևորումների դեպքերում ավելի արագ վերականգնվել, քան շարունակական վիրավորանքի, մեկուսացման, սպառնալիքների, արհամարհանքի ու անտեսման դեպքում: Երկրորդ, այն խմբերում, որտեղ շարունակական բռնության ենթարկվելու փորձառություն չկա, հոգեբանական բռնության դրսևորումներիս արձագանքելու մեխանիզմներն ավելի ֆունկցիոնալ են, և մասնակիցները նշում են այն մասին, որ չեն հանդուրժի շարունակական հոգեբանական բռնությունը, այլ կփորձեն կա՛մ վերացնել նման իրավիճակների պատճառները, կա՛մ, եթե հաջողության չեն հասնում, ուղղակի հեռանալ զուգընկերոջից:

39. Կնոջ հանդեպ ընտանիքում բռնություն կիրառելու վերաբերյալ ընկալումներում որոշակի առանձնահատկություն է նկատվում Գեղարքունիքի կանանց ֆոկուս խմբերում: Ինչպես և Շիրակի խմբերում, այստեղ ևս բավականին հաճախ շեշտվում է կնոջ նկատմամբ բռնությունն սկեսրոջ կողմից.

«Սկեսուրը հարսին կարող է չթողնել շրջապատի՝ ծնողների, հարազատների, հարևանների ու ընկերների հետ շփվել»:

Ծովինար, կանանց ֆոկուս խումբ

40. Ըստ կանանց մեծամասնության՝ նախկինում սկեսուրի և ամուսնու կողմից կիրառվող բռնությունն ավելի լայնածավալ էր: Ներկայում, թե՛ հարսները, թե՛ սկեսուրները ավելի գրագետ են, կանայք ավելի տեղեկացված են իրենց իրավունքների մասին և ավելի քիչ են բռնության ենթարկվում.

«Ժամանակները, դարը փոխվել է: Սկեսուրներն էլ են առաջադիմել և ավելի գրագետ են դարձել: Բացի այդ, մենք այն սերունդն ենք, որ սկեսրոջ կողմից բռնություն է տեսել: Այդ պատճառով էլ մեր հարսների վրա այն երբեք չենք կիրառի»:

Ծովինար, կանանց ֆոկուս խումբ

41. Տարբերվում են քաղաքային և գյուղական համայնքներում ֆոկուս խմբերի մասնակիցների ընկալումները քաղաքում և գյուղում բռնության տարածվածության վերաբերյալ: Այսպես, քաղաքաբնակ մասնակիցները համոզված են, որ գյուղում բռնությունն ավելի տարածված է՝ պայմանավորելով դա գյուղի ավանդական մշակույթով, ավելի ցածր կրթական ցենզով և իրավակագիտակցության ցածր մակարդակով, ինչպես նաև ընդգծված հակվածությամբ՝ թաքցնելու բռնության երևույթները: Մինչդեռ գյուղաբնակները համոզված են, որ գյուղում ընտանեկան բռնության դրսևորումներն ավելի սակավաթիվ են, քանի որ գյուղական սոցիումն ավելի ակտիվորեն է մասնակցում ընտանեկան կյանքին, հակված է միջամտել և այդպիսով սոցիալական մեխանիզմներով կանխել ընտանեկան բռնության դրսևորումները: Այդուհանդերձ, թեև գյուղաբնակների շրջանում տարածված այս կարծիքը կիսում են թե՛ Գեղարքունիքում, թե՛ Շիրակում, բոլոր ֆոկուս խմբերում նշվում է գյուղացի կնոջ առավել հանդուրժողական լինելու մասին, որը հաճախ պայմանավորում է գյուղում ընտանեկան բռնության դեպքերի թաքնված լինելու հանգամանքը:

5.2. Մեղք բարդելը

42. Ընտանեկան բռնության դրսևորումների վերաբերյալ քննարկումների անքակտելի մաս է բռնության հրահրման և առաջացման համար կողմերից որևէ մեկի վրա ընտանիքում լարվածության էսկալացիայի մեղքը բարդելը: Այս հետազոտության շրջանակում կազմակերպված ֆոկուս խմբերը նույնպես արծարծել են այս թեման:

43. Բոլոր խմբերում գրեթե հավասարապես կնոջը համարում են առանձին դեպքերում ընտանիքում լարվածության, վեճերի ու կոնֆլիկտների էսկալացիայի հրահրող: Հատկանշական է սակայն, որ մեղքը կնոջ վրա բարդելու միտումը հատուկ է միայն բռնության ոչ պարբերական դրվագների վերաբերյալ քննարկումներին, մինչդեռ բռնության շարունակական, պարբերաբար կրկնվող և ծայրահեղ դրսևորումների պարագայում մասնակիցները հակված չեն էսկալացիայի մեղքը բարդել կնոջ վրա:

44. Մասնակիցները նշում են դեպքեր, երբ իրենց կարծիքով կնոջ վարքագիծը նպաստում է ընտանեկան լարվածությունը բռնության վերաճելուն.

- ամուսնու գործազրկության կամ ընտանիքի բարեկեցության ակնկալիքներին անհամապատասխան վաստակի դեպքում տնտեսական անհամարժեք պահանջներ ներկայացնելը.
- ալկոհոլի կամ թրմադեղերի ազդեցության տակ գտնվող ամուսնուն որոշակի պահանջներ ներկայացնելը.
- դիտավորյալ թաքցրած հաշմանդամություն:

45. Հատկանշական է, որ Գեղարքունիքի ֆոկուս խմբերում թերևս ավելի զգալի է հակվածությունը՝ մեղադրելու կնոջը բռնություն հրահրելու մեջ և ակնկալելու, որ նա պարտավոր է հանդուրժել բռնությունը՝ հանուն ընտանիքը պահպանելու: Նման ընկալումը թերևս կիսում են թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք.

«Կնոջ լեզվից շատ բան է կախված, եթե կինը շատ չհակաճառի, ծեծը կընդհատվի»:

Ծովինար, կանանց ֆոկուս խումբ

«Եթե կինն իրեն լավ չի պահում, ընտանիքում ավելի շատ լարվածություն ու կոնֆլիկտներ կլինեն: Լավ չպահելը լայն հասկացություն է և միայն բարոյականությանը չի վերաբերում»:

Վերին Գետաշեն, տղամարդկանց ֆոկուս խումբ

5.3. Ընկալումներ ընտանեկան բռնության առաջացման և դրա դրսևորումներին նպաստող գործոնների վերաբերյալ

46. Ֆոկուս խմբային քննարկումների արդյունքները թույլ են տալիս հստակեցնել ընտանեկան բռնության դրսևորումների պատճառների և նպաստող գործոնների շուրջ ընկալումները, որոնք ընդհանուր առմամբ բոլոր խմբերում գրեթե նույնական են: Այդուհանդերձ, տարբեր խմբերում, կախված սեռից և բնակության վայրից, ուրվագծվում են նաև որոշակի յուրահատկություններ, որոնք պայմանավորված են գործոնների դասակարգմամբ, այսինքն, տարբեր խմբերում տարբեր գործոններ են համարվում կարևոր և առաջնային:

47. Ստորև ներկայացված են **Երևանում,** երիտասարդ տղամարդկանց, կանանց և սեռային խառը կազմ ունեցող խմբերում ընտանեկան բռնության առաջացման և դրա դրսևորումներին նպաստող առաջնային գործոնները:

5.3.1. Կնոջ և տղամարդու դերերի վերաբերյալ ոչ արդիական, ավանդական կարծրատիպերն ու պատկերացումները

> *«Կարծրատիպերի համաձայն տղամարդը պետք է իշխող ու կոպիտ լինի, իսկ կինը միշտ պետք է ենթարկվի ու հաշտվի»:*
>
> *«Ո՞նց են հիմա շատերը կին ընտրում: «Լավ աղջիկ» պետք ա լինի, որը նշաբակում ա, հնազանդ, չհակաճառվող, տղամարդու ամեն մի քմահաճույքը բավարարող: Բայց կինը նրանով չի լավը, որ լուռ պետք ա հանդուրժի տղամարդու տրամադրության ցանկացած տատանում»:*
>
> ***Երևան, երիտասարդ տղամարդկանց խումբ***
>
> *«Տղամարդիկ վերահսկելով փորձում են իրենց ուժը ցույց տալ: Շատ կանայք կան, որ իսկզբանե զոհի կարգավիճակում են, անգամ մտքի ծայրով չեն անցկացնում, որ կարելի է ինքնուրույն լինել: Նրանք նախընտրում են «օբյեկտ» լինել»:*
>
> ***Երևան, երիտասարդ կանանց խումբ***

48. Ավելի երիտասարդ մասնակիցները նշում են, թե երիտասարդ աղջիկների զգալի մի խումբ տղամարդու վերահսկողությունը, արգելքներն ու սպառնալիքները համարում է իր հանդեպ սիրո դրսևորում.

> *«Անգամ հպարտանում են, որ իր ընկերը թույլ չի տալիս հանդիպել ընկերուհիների հետ, ինչ-որ տեղ գնալ...»*
>
> ***Երևան, երիտասարդ տղամարդկանց խումբ***

49. Ըստ խմբի՝ նման ընկալումները կնոջն ի սկզբանե անպաշտպան են դարձնում և նախապայման են դառնում տղամարդու կողմից շարունակական վերահսկողության և արդյունքում նաև՝ բռնության կիրառման համար:

5.3.2. Հայրիշխանական կարծատիպերի վրա հիմնված դաստիարակությունն ու կրթությունը

> *«Մեզ մոտ ինչպե՞ս է. տղամարդը պետք է ծեծով ապացուցի, որ ինքը տղամարդ է: Կինը հանգիստ ընդունում է, որ իր տեղը խոհանոցն է»:*
>
> *«Տղային ու աղջկան վաղ մանկությունից տարբեր են դաստիարակում: Տղային ասում են՝ դու ուժեղ պիտի լինես, խելացի, աղջկան՝ գեղեցիկ, խմամված: Տղային՝ ամեն ինչ, նրան պատրաստում են լայն հնարավորությունների համար, աղջկան՝ կոնկրետ դերերի՝ կին, մայր»:*

Երևան, երիտասարդ տղամարդկանց խումբ

«Տղաները վերահսկում են աղջիկներին, և դա դուր է գալիս նրանց, քանի որ մտածում են, որ դա սիրո արտահայտում է: Նման վերահսկողությունը վկայում է, որ ապագայում բռնություն է կիրառվելու»:

Երևան, երիտասարդ կանանց խումբ

50. Հատկանշական է, որ տղամարդկանց խմբում այս գործոնն ավելի շատ է շեշտվում, քան կանանց խմբում: Կանանց խմբում գերակշռում է այն ընկալումը, թե տղամարդը փորձում է կնոջ և երեխայի հաշվին ինքնահաստատվել, ինչն անուղղակիորեն թույլ է տալիս եզրակացնել, որ կանայք ևս կարևորում են հայրիշխանական կարծրատիպերի նշանակությունը, որպես ընտանեկան բռնության դրսևորումների հիմքում ընկած առանցքային պատճառ: Սակայն նրանք ընդգծում են դրանցով պայմանավորված տղամարդու վարքը, ոչ թե այդ վարքին նպաստող գործոնը, ի տարբերություն տղամարդկանց:

5.3.3. Բռնության վարքագծային մոդելի վերարտադրությունը

51. Բռնության վարքագծային մոդելի վերարտադրությունը սկսվում է վաղ մանկության տարիքում: Երեխայի և դեռահասի զարգացման տարբեր փուլերում այդ մոդելը շարունակաբար կիրառվում է նրա ընտանիքում և պատշաճ այլընտանքներ չստանալով հանրակրթական հաստատություններում, ամրապնդվում է և փոխանցվում ամուսնու և երեխաների հետ փոխհարաբերություններում:

52. Ըստ մասնակիցների զգալի մասի՝ ընտանեկան բռնության հավանականությունը մեծ է այն ընտանիքներում, որտեղ ամուսինները դեռ մանկության ժամանակ ականատես են եղել բռնությամբ խնդիրներ լուծելու վարքագծի և հետագա դաստիարակության ու կրթության ընթացքում նրանց որևէ այլընտրանք չի առաջարկվել: Ավելին, ընտանիքում և շրջապատում հետևողականորեն խրախուսվել է «ուժեղ տղայի» և «խելոք աղջկա» կերպարը: Այսպիսով, սոցիալականացման առանձին փուլերում տղաները հանգում են այն եզրակացությանը, թե բռնությունը խնդիր լուծելու ամենաարդյունավետ միջոցներից է, և վարքային որոշումներ են կայացնում՝ հիմնվելով բռնության իրենց «հաջողված» փորձի վրա այնպիսի մի միջավայրում, որտեղ բռնության որոշ տեսակներ ընկալվում են որպես իրավականորեն անպատժելի, իսկ հանրային զսպամիջոցները, օրինակ՝ ամոթը, որպես սոցիալական արգելք կամ երևույթի հանդեպ անհանդուրժողականությունը, եթե անգամ չեն բացակայում, ապա կիրառվում են բացառապես փոքրաթիվ սոցիալական խմբերից կողմից, որոնց նա կարող է և չպատկանել:

5.3.4. Լրատվամիջոցների և հատկապես հեռուստատեսության ազդեցությունը ընտանեկան կոնֆլիկտները լուծելու մոդելների վրա

53. Նման ազդեցության հիմքում բռնության այս կամ այն տեսակն է՝ հատկապես հոգեբանական և տնտեսական: Ըստ մասնակիցներից շատերի՝ դրանք ակնհայտորեն նպաստում են կնոջ և տղամարդու դերերի ավանդական ընկալման և հայրիշխանական կարծրատիպերի վերարտադրությանը: Մասնակիցները միաձայն են այն հարցում, որ ընտանեկան բռնություն հրահրող գործոններից մեկն էլ *հայկական հեռուստասերիալներն* են, որոնց հիմնական լսարանը կանայք են, և որտեղ տղամարդու դրական կերպարը հաճախ ներկայացվում է որպես իշխող, կնոջը որոշումների գործընթացում չներառող, կոնֆլիկտներն ուժի, երբեմն անգամ ծեծի միջոցով լուծող, իսկ կինը՝ որպես հնազանդ, առօրյան սուրճի բաժակի շուրջ անցկացնող և մանր դավադրություններ հյուսող: Մասնակիցների կարծիքով՝ քանի որ մեդիան նման կերպարները չի ներկայացնում որպես անընդունելի և անգամ դատապարտելի, այլ հակառակը, արդարացնում է նման մոտեցումը նրանով, թե «մենք արտապատկերում ենք իրականությունը», նույն անընդունելի իրականությունը շարունակվում է վերարտադրվել, հատկապես երիտասարդների շրջանում:

5.3.5. Կոնֆլիկտների լուծման մշակույթում հաղորդակցության համապատասխան հմտությունների բացակայությունը

54. Համապատասխան հմտությունների բացակայության հետևանքով ընտանիքներում ստեղծված լարված իրավիճակը ոչ թե պարպվում է, այլ ենթարկվում էսկալացիայի.

> *«Զույգերը, կինն ու տղամարդը չգիտեմ ինչպես հաղորդակցվել. Մի փոքր անհամաձայնություն եղավ, սկսում են գոռգոռալ իրար վրա, կողքից էլ մեկը թե խառնվեց, հատկապես, եթե կնոջ կողմից է, բանը բանից անցնում է: Չեն նստում իրար հետ նորմալ խոսում, փորձում հասկանալ վեճի պատճառները»:*
>
> ***Երևան, երիտասարդ տղամարդկանց խումբ***
>
> *«Կարծում եմ, որ քննարկումներն ու պարզաբանումները ամուսու ու կնոջ միջև կարող են նպաստել խնդրի լուծմանն ու բռնության կանխմանը: Սակայն շատ դեպքերում նման քննարկումներ չեն էլ լինում»:*
>
> ***Երևան, երիտասարդ կանանց խումբ***
>
> *«Եթե կինը նախաձեռնություն է ցուցաբերում, որի հետ տղամարդը համաձայն չէ, դա առաջացնում է վեճ, որը կարող է ավարտվել բռնությամբ, քանի որ տղամարդը միշտ մտածում է, որ ինքն է իրավացի: Բռնության ծագման պատճառ կարող են լինել վեճերը լուծելու անկարողությունը ու հաղորդակցման հմտությունների պակասը»:*
>
> ***Երևան, կին/տղամարդ խումբ***

55. Բացի վերոհիշյալ պատճառներից և գործոններից, Երևանի խմբերի մասնակիցները նշում են նաև մի շարք այլ գործոններ, որոնք շարադրված են ստորև:

5.3.6. Գիտելիքի՝ հատկապես ծնողավարության, և կնոջ իրավունքների վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակը

> *«Ծնողներին անհրաժեշտ է սովորեցնել, թե ինչպես պիտի դաստիարակեն երեխային: Իրենք տարրական գիտելիքներ չունեն ու շարունակում են հին մեթոդներով դաստիարակել»:*
>
> ***Երևան, երիտասարդ կանանց խումբ***

5.3.7. Անցյալում տրավմատիկ փորձառությունը, ներառյալ պատերազմական գործողություններին մասնակցությունը

56. Մասնակիցների մեծամասնության կարծիքով՝ ընտանիքում բռնություն են կիրառում հատկապես այն մարդիկ, ովքեր մինչև ընտանիք կազմելն անձամբ այնպիսի փորձառություն են ունեցել, երբ կա՛մ հենց իրենց նկատմամբ է կիրառվել բռնություն, կա՛մ անձամբ ականատես են եղել իրենց հարազատ մարդկանց միջև բռնության կիրառման:

> *«Ես գիտեմ ազատամարտիկի, որը մինչև պատերազմին մասնակցել շատ լավ ամուսին էր, իսկ հիմա պարբերաբար կարող է բռնության երթարկել կնոջն ու երեխաներին»:*
>
> ***Երևան, երիտասարդ կանանց խումբ***

5.3.8. Նախաամուսնական հարաբերությունների ներկա մշակույթը

57. Նախաամուսնական հարաբերությունների ներկա մշակույթը, որի արդյունքում երիտասարդ զույգերը չեն կարողանում ձևավորել ընտանիք կազմելու համար անհրաժեշտ հմտություններ, այսպիսով փորձելով բանակցել և վերաբանակցել ընտանիքում կնոջ ու տղամարդու դերերի շուրջ արդեն ամուսնության վաղ շրջանում: Այս գործընթացն առավել բարդանում է կնոջ և տղամարդու հարաբերությունների ֆորմալ փուլում, քանի որ մեծանում է գործընթացի բնույթի և ելքի վրա ազդող դերակատարների թիվը: Եթե

նախաամուսնական փուլում բանակցության գործընթացի հիմնական կողմերը կինն ու տղամարդն են, ապա ամուսնությունից հետո դրան են միանում ընդլայնված ընտանիքի անդամները, հատկապես տղայի և կնոջ մայրերը: Ավելին, քանի որ սոցիալական միջավայրն այնպիսին է, որ խրախուսում և վերարտադրում է տղամարդու և առնականության մասին ավանդական պատկերացումները, նոր ընտանիքում տղամարդն ընտրում է միանձնա իշխանության դրսևորման տարբերակը, որն էլ որոշ իրավիճակներում հանգեցնում է բռնության:

5.3.9. Շրջապատի ակնկալիքները

58. Կարևորվում է շրջապատի ակնկալիքները, թե ինչպիսին պետք է լինի իդեալական ընտանիքը, կինը ու դրանով պայմանավորված միջամտությունը ներընտանեկան հարաբերություններին: Մասնակիցների զգալի մասը պնդում է, թե իրենց սոցիալական միջավայրը շարունակում է ժամանակակակից ամուսիններից ակնկալել ավանդական դերակատարում, անգամ եթե ամուսիններն իրենք պատրաստ են փոխել իրենց՝ ավանդական դերով պայմանավոված վարքը:

> *«Շրջապատը խանգարում է, որպեսզի ընտանիքն ինքնուրույն որոշումներ կայացնի: Հաճախ ես լսում. «Դու ի՞նչ տղամարդ ես, որ թույլ ես տալիս կինդ որոշի...»»:*
>
> ***Երևան, երիտասարդ տղամարդկանց խումբ***

5.3.10. Ընտանեկան նորմալ փոխհարաբերությունների որակի փոփոխության դեպքում ինստիտուցիոնալ ծառայություններին դիմելու մշակույթի բացակայությունը

> *«Նորմալ հաղորդակցությունն իհարկե կարևոր է, սակայն երբեմն դա էլ է անբավարար, քանի որ ընտանիքում կարող են ծագել հոգեբանական, սեռական բնույթի խնդիրներ, որոնք ամուսիններն ինքնուրույն արդեն չեն կարող լուծել: Սակայն մեր մշակույթում չկա դիմել մասնագետի օգնությանը, քանի որ բոլորն ամեն ինչի մասնագետ են»:*
>
> ***Երևան, երիտասարդ տղամարդկանց խումբ***

5.3.11. Ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը

59. Հատկանշական է, որ ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը, մասնավորապես՝ աղքատությունը, կենցաղի բարեկեցության մասին պատկերացումների տարբերությունները և գործազրկությունը ավելի ընդգծված են կանանց խմբում.

> *«Ընտանիքում բռնության հրահրման պառճառներ կարող են լինել կենցաղային խնդիրները, ֆինանսական դժվարությունները»:*
>
> ***Երևան, երիտասարդ կանանց խումբ***

5.3.12. Երեխայի դաստիարակության վերաբերյալ պատկերացումների անհամապատասխանությունը և այս գործընթացում դերակատարների միջև իշխանության բաշխման խնդրով պայմանավորված փոխհարաբերությունները

60. Այս գործոնին ավելի հաճախ անդրադարձ է արվում կանանց խմբում, քան տղամարդկանց, որը թերևս կարելի է բացատրել նրանով, որ հայաստանյան ընտանիքներում երեխայի դաստիարակության հիմնական բեռը կրում են կանայք:

5.3.13. Ընկալումը, թե ընտանեկան բռնությունն անպատժելի է

61. Խմբերում մեծամասնությունը իրազեկված չէր, թե արդյոք ընտանեկան բռնությունը քրեորեն պատժելի է, թե ոչ, թեև տղամարդկանց խմբում որոշ մասնակիցներ նշում են այն մասին, որ բռնության ծայրահեղ դրսևորումներն ամեն դեպքում քրեորեն պատժելի են, անկախ այն հագամանքից, թե որտեղ և ում

կողմից է բռնություն գործադրվել: Այդուհանդերձ, մասնակիցների մեծամասնությունը կարծում է, որ շատ դեպքերում ընտանեկան բռնությունը, համարվելով ներընտանեկան խնդիր և չբարձրաձայնվելով, մնում է անպատժելի, ինչը պայմանավորում է ընտանեկան բռնության շարունակական բնույթը:

> *«Բոլոր երկրներում կան կոնֆլիկտներ ու բռնություն: Իմ կարծիքով անպատժելիությունն ու պատասխանատվության պակասն է բերում բռնության»:*
>
> ***Երևան, կին/տղամարդ խումբ***

5.3.14. Տարբեր նյութերի չարաշահում և կախվածություններ

62. Հատկանշական է, որ տարբեր նյութերի չարաշահման և կախվածությունների, մասնավորապես ալկոհոլիզմի, թմրամոլության և խաղամոլության մասին խոսում են կանայք՝ նշելով, որ տղամարդիկ հաճախ չեն կարողանում կառավարել իրենց վարքը՝ լինելով տարբեր նյութերի ազդեցության տակ.

> *«Բռնարարը հաճախ աֆեկտի վիճակում է, նաև հարբած կամ թմրանյութ օգտագործած»:*
>
> ***Երևան, երիտասարդ կանանց խումբ***

5.3.15. Հոգեբանական խնդիրներ, հոգեկան խանգարումներ

63. Այս գործոնի մասին նշում են հատկապես բռնություն վերապրած կանանցից մի քանիսը, որոնք պնդում են, թե ամուսինը սկսում է ավելի ագերսիվ վարք ցուցաբերել և բռնություն կիրառել, երբ հոգեկան խանգրաման դրսևորումների սրացում է լինում, իսկ օգնության դիմելու կնոջ խնդրանքն ու պահանջը հաճախ անտեսվում են, քանի որ ամուսնու հարազատները թաքցնում են այս խնդիրները.

> *«Ամուսինս ալկոհոլային կախվածությամբ էր տառապում և հոգեկան խնդիրներ ուներ, ես նրան խնդրում, համոզում էի բուժվել, սկեսուրս չթողեց՝ ասելով, որ «գիժը» ես եմ»:*

64. **Շիրակի** և **Գեղարքունիքի** ֆոկուս խմբերում մասնակիցների զգալի մասը ևս կիսում է երևանյան մասնակիցների կողմից նշված գործոնները, թեև այլ առաջնությամբ:

65. Ի տարբերություն Երևանի ֆոկուս խմբերի, Շիրակի և Գեղարքունիքի բոլոր երեք խմբերում առաջնային գործոն է համարվում **ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը**, մասնավորապես գործազրկությունը, որը շեշտում են հատկապես տղամարդիկ.

> *«Վիճում են փող, աշխատանք չլինելու պատճառով: Բայց վեճերը լինում են ոչ միայն փողի համար»:*
>
> ***Գյումրի, երիտասարդ տղամարդկանց խումբ***

66. Լուսակերտում, Գյումրու հարակից գյուղերից մեկում, թեև այս գործոնի մասին խոսվում է, սակայն ավելի շատ շեշտվում է **կնոջ նկատմամբ հարգանքի բացակայությունը և որոշումների կայացման գործընթացում կնոջ կարծիքը հաշվի չառնելը.**

> *«Տղամարդիկ միշտ կարծում են, որ իրենք են ամենաճիշտը ու հաշվի չեն առնում կնոջ ասածը, օրինակ՝ միասին չեն քննարկում, թե ինչ կարելի է ցանել»:*
>
> ***Լուսակերտ, կանանց խումբ***

67. Հարկ է նշել, որ ի տարբերություն Գյումրու խմբերի, այս խմբի բարեկեցության մակարդակն ակնհայտորեն ավելի բարձր էր, որն էլ թերևս պայմանավորում է գործոնների դասակարգման նման ընկալումը:

68. Ի տարբերություն Լուսակերտի ֆոկուս խմբի մասնակիցների՝ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն համայնքի կանանց կարծիքով գյուղատնտեսական աշխատանքներում կնոջ ու տղամարդու հավասար մասնակցությունը նպաստում է բռնության դրսևորումների նվազմանը.

> *«Երբ միասին հողի վրա աշխատում են, ընտանիքն ավելի համերաշխ է լինում»:*

69. Բացի սոցիալ-տնտեսական գործոնից, Շիրակի և Գեղարքունիքի բոլոր խմբերում առաջնային գործոններ են համարվում նաև *բռնության վարքագծային մոդելի վերարտադրության և շրջապատի ազդեցության գործոնները*:

70. Գյումրիում՝ բռնություն վերապրած կանանց խմբում որպես գործոն շեշտվում է նաև **տղամարդու վերահսկող վարքը,** մասնավորապես խանդից և իշխանությունը հաստատելու ցանկությունից դրդված, թեև խմբի մասնակիցները չեն դատապարտում հայրիշխանական կարծրատիպերն ու դրանցով պայմանավորված տղամարդկանց վարքագիծը, ինչպես դա անում են երևանյան խմբերը: Շատերի համար առնականության և իդեալական տղամարդու կերպար շարունակում է մնալ ավանդական դերեր ու գործառույթներ ունեցող տղամարդը: Այս խմբում տղամարդու ուժեղ և վաստակող մոդելը շարունակում է մնալ ընդունելի և նախընտրելի.

> *«Տղամարդը պետք է ուժեղ լինի, խոսքը թրի նման պետք է կտրի: Աշխատող, տուն բերող: Խիստ պետք է լինի, հա ի՞նչ անենք, թող մի քիչ էլ սահմանափակի կնոջ իրավունքները, բայց արդար, հարգանքով լինի»:*
>
> *«Իդեալական տղամարդը պիտի լինի խիստ ու հեղինակավոր: Միայն այդ դեպքում նրան կհարգի ու կընդունի հասարակությունը»:*
>
> ***Գյումրի, բռնություն վերապրած կանանց խումբ***

71. Այսպիսով, ի տարբերություն Երևանի մասնակիցների, Շիրակի բոլոր մասնակիցների ընկալումներում և ակնկալիքներում, անկախ սեռից, տարիքից և բռնության փորձառությունից, շարունակում է գերակշռել «վաստակող-տղամարդու» մոդելը:

72. Շիրակի և Գեղարքունիքի կանանց խմբերում, հատկանշական է, որ նաև տարեց կանանց խմբերում, որոնց մի մասը հենց սկեսուրներ են, բավականին ընդգծված է նաև **սկեսրոջ գործոնը,** մասնավորապես նրա կողմից հոգեբանական բռնության, ինչպես նաև բռնության այլ տեսակներ հրահրելու հանգամանքը, անգամ եթե նա ընդլայնված ընտանիքի անդամ չէ.

> *«Սկեսուրները հրահրում են իրենց տղաներին ու միշտ նրանց կողմը բռնում»:*
>
> ***Գյումրի, բռնություն վերապրած կանանց խումբ***
>
> *«Հաճախ բաժանվում են հենց սկեսուրի պատճառով. էնքան է ճնշում հարսին, սա էլ թողնում գնում է»:*
>
> ***Գյումրի, տարեց կանանց խումբ***

73. Երևանի և Շիրակի կանանց խմբերում այս գործոնի վերաբերյալ քննարկումներում դիտարկվում է մի առանձնահատկություն ևս: Այսպես, երեխայի դաստիարակության վերաբերյալ պատկերացումների անհամապատասխանության և դաստիարակության գործընթացում դերակատարների միջև իշխանության բաշխման խնդրով պայմանավորված փոխհարաբերությունների գործոնի մասին խոսելիս Շիրակի մասնակիցներն առանձնացնում են սկեսուրների դերը, որոնց հետ երեխաների դաստիարակության շուրջ անհամաձայնություններով պայմանավորված բախումները երբեմն հանգեցնում են բռնության, կանանց դեպքում՝ հիմնականում հոգեբանական դրսևորումներով, իսկ երեխաների դեպքում՝ ծեծով.

> *«Տատիկները պաշտպանում են թոռներին և մեղադրում ծնողներին, պարզ է, հիմնականում հարսին: Ծնողները ջղայնանում են ու ծեծում երեխաներին»:*

Գյումրի, բռնություն վերապրած կանանց խումբ

74. Հատկանշական է, որ գրեթե բոլոր խմբերում կարևորելով բռնարարի վարքագծային մոդելի վերարարտադրության հանգամանքը՝ ոչ ոք չի անդրադառնում այն հանգամանքին, որ աղջիկ-կին/մայր-սկեսուր դերային փոփոխության ընթացքում չեն վերարտադրվում աղջիկ և կին լինելու դերային ընկալումներն ու դրանով պայմանավորված վարքը, այսինքն նույն կինը սկեսուր դառնալով վերարտադրում է ոչ թե իր աղջիկ և կին դերերով պայմանավորված ընկալումներն ու վարքը, այլ տվյալ սոցիալական միջավայրում սկեսրոջից ակնկալվող ընկալումներն ու վարքը:

75. Մեկ այլ գործոն, որի դերը **շատ ավելի ընդգծված է Շիրակում** կանանց ֆոկուս խմբային քննարկումներում *տղամարդկանց կողմից տարբեր նյութերի չարաշահումն ու կախվածություններն* են, որը թերևս զարմանալի չէ, քանի որ կախվածություն առաջացնող նյութերի չարաշահման և աղքատության մակարդակի միջև հարաբերակցության կապը հաստատված է տարբեր հետազոտություններով.

> *«Բռնության հարցում մեծ նշանակություն ունեն ալկոհոլիզմն ու խաղամոլությունը»:*
>
> ***Լուսակերտ, կանանց խումբ***

76. Շիրակի խմբերում, թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց, բավականին հաճախ է արծարծվում կնոջ **առցանց ներկայության և սոցիալականացման գործոնը**: Երկու խմբերում էլ մասնակիցները բացասական կարծիք ունեն կնոջ առցանց ներկայության և սոցիալականացման վերաբերյալ, թեև տարբեր պատճառներով: Տղամարդկանց կարծիքով, նման ներկայությունն ազդում է կնոջ բարոյական կերպարի վրա՝ երբեմն առիթ դառնալով դավաճանությունների.

> *«Բռնությանը նպաստող գործոնները բոլոր տարածայնություններն են ու վեճերը՝ հատկապես ինտերնետի պատճառով: Ինտերնետում «շատ կեղտ կա», այդ պատճառով կռիվներ են առաջանում»:*
>
> ***Գյումրի, տղամարդկանց խումբ***

77. Մինչդեռ կանայք կարծում են, որ կնոջ առցանց ներկայությունը և սոցիալականացումը հանգեցնում են երեխայի և ամուսնու նկատմամբ խնամքի և հոգածության նվազեցման, անգամ անտեսման.

> *«Ամբողջ օրն ինտերնետում է, մոռանում է երեխու տակն է փոխի...»*
>
> ***Լուսակերտ, կանանց խումբ***

78. Հատկանշական է, որ անկախ տարիքից՝ այս կարծիքը կիսում են գրեթե բոլոր այն կանայք, որոնք բացասական վերաբերմունք ունեն կնոջ առցանց ներկայության վերաբերյալ:

79. Գեղարքունիքում այս գործոնին անդրադարձել է միայն միջին տարիքի կանանց խումբը Ծովինար գյուղում՝

> *«Ես այդպիսի մի դեպք գիտեմ. կին և ամուսին ուրիշ մարդկանց անունների տակ շփվել են կայքով, ամուսինը ավելի ուշ պարզել է, որ կնոջ հետ է խոսում և բաժանվել է նրանից»:*

80. Այն հանգամանքը, որ այս գործոնին երևանյան խմբերը միայն հպանցիկ անդրադարձ են կատարել (կանանց խմբում 1-2 մասնակից) և այն էլ ավելի լայն՝ տղամարդու կողմից կնոջ վարքի վերահսկման համատեքստում, թերևս վկայում է այն մասին, որ մարզերում և մայրաքաղաքում բավականին տարբերվում է SS կիրառման պրակտիկան և դրա վերաբերյալ ընկալումները: Մասնավորապես մարզերում այն հիմնականում սահմանափակվում է սոցիալական մեդիայում սոցիալականացման և մասամբ տեղեկատվություն ստանալու գործառույթներով:

81. Ի տարբերություն Երևանի՝ **Շիրակում և Գեղարքունիքում** ֆոկուս խմբերի մասնակիցներն ընտանեկան բռնության առաջացմանը նպաստող գործոնների շարքում նշում են նաև *արտագնա աշխատանքը,* ինչն անշուշտ զարմանալի չէ՝ հաշվի առնելով այս մարզերում միգրացիայի ավանդականորեն ավելի բարձր մակարդակը[3]: Սակայն, կարծիքները միանշանակ չեն: Մի մասը համոզված է, որ արտագնա աշխատանքի արդյունքում փոխվում են ամուսինների ավանդական դերերը, ինչի արդյունքում կանայք ավելի ազատ վարք են դրսևորում, ընտանեկան կոնֆլիկտներում դառնում նվազ հանդուրժող.

> *«Միգրացիան ընտանիքների վրա խիստ բացասական ազդեցություն է ունենում: Ամուսինը նորահարսին թողնում է և 6-7 ամսով մեկնում, երբ հետ է գալիս, ընտանիքը չի կայանում և խնդիրներ են առաջանում»:*
>
> ***Վերին Գետաշեն, տղամարդկանց ֆոկուս խումբ***

82. Մինչդեռ մյուս մասը կարծում է, որ ընդհակառակը, արտագնա աշխատանքը նպաստում է ընտանեկան բռնության նվազեցմանը: Օրինակ՝ Գեղարքունիքի Ներքին Գետաշեն գյուղում կանայք կարծում են, որ տղամարդիկ աշխատելու համար գնալով Ռուսաստան, տեսնում են կայացած և ուժեղ կանանց, այնուհետև իրենց պատկերացումները կնոջ դերի մասին փոխած վերադառնում Հայաստան: Քանի որ նրանք ավելի հանդուրժող են դառնում կնոջ փոփոխվող ավանդական վարքի հանդեպ, բռնության դեպքերն իրենց համայնքում նվազում են:

83. **Գեղարքունիքում**, ի տարբերություն Երևանի և Շիրակի խմբերի, բավականին հաճախ որպես ընտանիքում բռնության առաջացման պատճառ նշվում է *ամուսինների սոցիալ-տնտեսական կարգավիճակի և կրթական մակարդակի անհամապատասխանությունը,* ընդ որում, այս դեպքում բռնության զոհը հիմնականում համարվում է տղամարդը, ինչպես նաև *վաղ տարիքում ընտանիք կազմելու հանգամանքը.*

> *«Եթե տղան և աղջիկը ամուսնանում են չկայացած՝ 18-19 տարեկանում, չեն կարողանում ընտանիքի խնդիրները լուծել, իսկ 25-26 տարեկանում ամուսնանալու պարագայում ընտանիքն ավելի կայուն և համերաշխ է լինում»:*
>
> ***Ներքին Գետաշեն, կանանց ֆոկուս խումբ***

84. Վերջապես, Լուսակերտի կանանց խմբում և Մարտունու բռնություն վերապրած կանանց խմբում նշվում է նաև **հաշմանդամության** գործոնը: Լուսակերտում, ըստ որոշ կանանց՝ հաշմանդամությունը կարող է հանգեցնել բռնության, եթե այն թաքցվել է մինչև ամուսնությունը.

> *«Ծնողները թաքցնում են իրենց զավակների հիվանդությունը: Եվ երբ ամուսնությունից հետո նրանց հիվանդությունը հայտնաբերվում է, այդ ժամանակ սկսում են վեճերն ու կռիվները»*
>
> ***Լուսակերտ, կանանց խումբ***

85. Մարտունու խմբում կանանցից մեկն, ով ֆիզիկական հաշմանդամություն ուներ, նշեց, որ հաշմանդամության պատճառով ենթարկվել է կրկնակի խտրականության.

> *«Ես հաշմանդամություն ունեմ և սկեսուրս չէր կարողանում հաշտվել այդ մտքի հետ: Թե՛ սկեսուրս, թե ամուսինս պարբերաբար ծեծում էին ինձ, ինչի հետևանքով առաջին երեխայիս կորցրի: Երկրորդ հղիության արդյունքում աղջիկ երեխա ունեցա, սակայն արդեն բաժանվել էինք և ես հորս տանն էի: Ամուսինս երկրորդ անգամ ամուսնացավ, սակայն կրկին անհաջող, ու քանի որ կողքիս սկսել էին հորդորել վերամիավորվել ինձ հետ և տեր կանգնել մեր երեխային, ամուսինս սկսեց ինձ համոզել հետ վերադառնալ:*

[3] Հայաստանում միգրացիայի վերաբերյալ տնային տնտեսությունների հետազոտության մասին զեկույց.- Եր.: Տիգրան Մեծ, 2014.- 214էջ:

Սկեսրոջս վերաբերմունքը նույնպես փոխվել էր: Ես էլ գիտեի, որ հաշմանդամությանս պատճառով երկրորդ անգամ ամուսնանալու հնարավորություն չեմ ունենա և որոշեցի ներել ամուսնուս»:

Մարտունի, բռնություն վերապրած կանանց խումբ

86. Հատկանշական է, որ Երևանի բռնություն վերապրած կանանց խմբերից մեկում մասնակիցներից մեկը ևս ֆիզիկական հաշմանդամություն ուներ, սակայն ընդհանրապես չանդրադարձավ այդ հանգամանքին, թեև ակտիվորեն մասնակցում էր ողջ քննարկմանը: Այս դիտարկումներից թերևս կարելի է եզրահանգել, որ հաշմանդամությունը կրկնակի խտրականության գործոն է նաև ընտանեկան բռնության դրսևորումներում, թեև այդ մասին բարձրաձայնելը դեռևս խնդրահարույց է հաշմանդամություն ունեցող անձանց համար:

87. Այսպիսով, կարելի է ամփոփել, որ թեև ընտանեկան բռնությանը նպաստող գործոնների վերաբերյալ ընկալումները գրեթե նույնական են բոլոր խմբերում, որոշակի տարբերություն այդուհանդերձ առկա է՝ պայմանավորված մասնակիցների բնակության վայրով և սեռով: Տարբերության առանցքը գործոնների կարևորության ընկալումն է, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, թե ինչպես են մասնակիցները ընկալում այդ գործոնների ազդեցությունն իրենց սահմանմամբ ընտանեկան բռնության դրսևորման վրա:

88. Բոլոր խմբերում, անկախ տարիքից և բնակության վայրից, առաջնային է համարվում բռնության վարքագծային մոդելի վերարտադրության գործոնը: Գրեթե բոլորը հավատացած են, որ «բռնությունը բռնություն է ծնում»: Սոցիալական միջավայրի ազդեցությունը ևս համարվում է գործոն, որը բոլոր խմբերը կարևորում են, թեև Շիրակում և Գեղարքունիքում այն ավելի է կարևորվում, քան մայրաքաղաքում, ու թերևս այն պատճառով, որ մայրաքաղաքային խմբերն ավելի երիտասարդ են և ապրում են մայրաքաղաքին ավելի հատուկ ինդիվիդուալիստական միջավայրում, ի տարբերություն մարզերի առավել կոլեկտիվիստական, ավանդական համայնքների:

89. Ակնհայտ է, որ Երևանի մասնակիցները, որոնց սոցիալական միջավայրն ավելի բազմաշերտ և փոփոխական է, սոցիալ-տնտեսական վիճակն՝ ավելի բարեկեցիկ, շարժունակության հնարավորությունները՝ ավելի լայն, կրթական ցենզն՝ ավելի բարձր, որոնք ուրբան միջավայրին հատուկ ճկունություն ունեն ընտրություն կատարելիս, ավելի ծանոթ են գենդերային հարցերի վերաբերյալ արևմտյան մոտեցումներին և ընկալումներին, հնարավորություն են ունեցել թե՛ անձամբ մասնակցելու այս հիմնահարցերի շուրջ իրազեկման միջոցառումներին, թե՛ տեղեկացված են ավանդական և ժամանակակից լրատվամիջոցներից, գործոնների դասակարգման ընթացքում առաջնություն են տալիս ընտանեկան բռնությանը նպաստող խորքային գործոններին՝ հայրիշխանական կարծրատիպերին ու դրանց վերարտադրությանը: Մինչդեռ մարզերում, որտեղ մասնակիցների սոցիալական իրողություններն այլ են, սոցիալական ավելի ստատիկ միջավայր, գործազրկության և միգրացիայի բարձր մակարդակ, ինչպես նաև այս գործոններով պայմանավորված բարեկեցության ավելի ցածր մակարդակ, շարժունակության և նոր իրողությունների հետ ծանոթանալու ավելի սահմանափակ հնարավորություններ, առաջնային գործոն է համարվում ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը:

90. Ի տարբերություն Երևանի, որտեղ միգրացիան չի դիտարկվում որպես ընտանեկան բռնության առաջացմանը նպաստող գործոն՝ մարզերում այն հաճախ է դիտարկվում որպես այդպիսին, թեև կարծիքները կիսվում են: Քիչ չեն մասնակիցները, որոնց կարծիքով, բացի ընտանիքի սոցիալ-տնտեսական բարեկեցությանը նպաստելուց՝ միգրացիան նաև հեշտացնում է ընտանիքում կնոջ և տղամարդու ավանդական դերերի այլակերպման գործընթացը և նպաստում այս փոփոխությունների հանդեպ տղամարդկանց կողմից ավելի հանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանը:

91. Հատկանշական է նաև երևանյան և մարզային ֆոկուս խմբերում կնոջ և տղամարդու, ինչպես նաև ընտանիքում ամուսինների դերերի վերաբերյալ ընկալումների փոփոխության միտումը: Երևանյան ֆոկուս խմբերի մասնակիցների քննարկումներն արտացոլում են կանացիության և առնականության, հետևաբար ընտանիքում ամուսինների դերերի վերաբերյալ ընկալումների փոփոխություն դեպի ավելի ազատական ընկալումներ՝ հավասար իրավունքներ և հնարավորություններ թե՛ կնոջ, թե՛ տղամարդու համար: Մինչդեռ մարզերում դեռևս նախապատվություն է տրվում կնոջ և տղամարդու ավանդական դերերին՝ անկախ փոփոխվող իրողություններից:

92. Թերևս միակ գործոնը, որի մասին բավականին հաճախ նշվում է Շիրակի խմբերում և գրեթե չի արծարծվում երևանյան խմբերում, կնոջ առցանց ներկայության և սոցիալականացման գործոնն է, որն ինչպես արդեն նշվեց, հիմնականում պայմանավորված է SS կիրառման պրակտիկայի տարբերություններով:

5.4. Բռնություն վերապրած անձի և բռնարարի վարքը

5.4.1. Բռնություն վերապրած անձի վարքը

93. Գրեթե բոլոր խմբերում բռնության անմիջական զոհ են համարում առավելապես կնոջն ու երեխային: Հատկանշական է, որ ֆոկուս խմբերում, որտեղ մասնակիցներն ընտանեկան բռնության անձնական փորձառություն չունեն բռնություն վերապրած կնոջ մասին խոսելիս գերազանցապես քննարկվում են կնոջ զգացմունքները և հավանական կամ նորմատիվային վարքը: Ավելի հազվադեպ է խոսվում նրան պաշտպանելու անհրաժեշտության մասին, մինչդեռ բռնություն վերապրած երեխայի դեպքում ավելի շատ շեշտվում է նրան պաշտպանելու անհրաժեշտությունը՝ առանց քննարկելու երեխայի վարքը կամ զգացմունքները:

94. Ի տարբերություն այդ խմբերի, բռնություն վերապրած կանայք կարևորում են թե՛ իրենց, թե՛ երեխաներին պաշտպանելու անհրաժեշտությունը՝ շեշտելով պաշտպանության սոցիալական և իրավական մեխանիզմների բացակայությունը և/կամ անվստահությունը դրանց արդյունավետության հանդեպ: Ըստ այս մասնակիցների՝ անկախ այն հանգամանքից, թե ամուսինները բռնանում են միայն իրենց, թե նաև երեխաների վրա, երկու դեպքում էլ վերջիններս մեկուսանում են կամ ագրեսիվ դառնում, որն արտահայտվում է նաև ընտանիքից դուրս սոցիալականացման ընթացքում:

95. Հատկանշական է ևս մի դիտարկում. բոլոր խմբերում բռնություն վերապրած անձի վարքի մասին խոսելիս մասնակիցները հակված են քննարկել իրենց ընկալմամբ *նորմատիվային վարքի դրսևորումներ*, կամ այնպիսի դրսևորումներ, որոնք, իրենց կարծիքով, *բնորոշ են ընտանեկան բռնություն վերապրած անձին ընդհանրապես*, այլ ոչ թե հղում անել կոնկերտ դրսևորումների, բացառությամբ երբ խոսք էր գնում բռնություն վերապրած կնոջ զգացմունքների մասին: Այս դեպքում, մասնակիցների դիտարկումներն ավելի մասնավորեցված և կոնկերտ էին:

96. Քննարկման նման դիսկուրսը հատուկ էր նաև բռնություն վերապրած այն կանանց, ովքեր գիտակցելով, որ իրենք ենթարկվում են բռնության, ընտրել են կամ ստիպված են եղել շարունակել բռնարարի հետ համատեղ կյանքը: Սակայն, անկախ բնակավայրից բռնություն վերապրած այն կանայք, ովքեր որոշել են կամ ստիպված են եղել հեռանալ ընտանիքից, հետազոտության իրականացման ընթացքում արդեն ամուսնալուծված էին կամ գտնվում էին ապաստարանում, հակված էին մանրամասնորեն ներկայացնել իրենց հետ կատարված բռնության կոնկրետ դրսևորումները և հանգամանալից նկարագրել իրենց և բռնարարի վարքը:

97. Բոլոր խմբերում նշվում են բռնություն վերապրած կնոջ վարքի և զգացմունքների մասին հետևյալ ընկալումները.

- Կինը մեկուսանում է: Ընկնում է նրա ինքնագնահատականը, և կինն սկսում է իրեն թերաժեք զգալ, անկարող որևէ բան իր կամ իր ընտանիքի կյանքում փոխելու: Շարունակական բռնության դեպքում նրա հուսահատությունը դառնում է սովորական:
- Կինը սովորաբար *հանդուրժում է / պետք է հանդուրժի* բռնությունը հանուն ընտանիքի և հատկապես հանուն երեխաների.
- Կնոջ՝ հանուն ընտանիքի բռնությունը հանդուրժելը, այդ մասին լռելն ու որևէ մեկի մոտ չբարձրաձայնելը, իրավապահ կառույցների կամ որևէ այլ պետական կամ հասարարական կառույցի չդիմելը կարծես թե այն նորմատիվ ընկալումն է բռնություն վերապրած կնոջ վարքի վերաբերյալ, որն արտահայտվել է բոլոր ֆոկուս խմբերում, անկախ մասնակիցների սեռից, տարիքից և բնակության վայրից: Մասնակիցներից շատերի համար շատ ավելի անընդունելի է «ընտանիք քանդելը», քան բռնությունը ընտանիքի որևէ անդամի հանդեպ:
- Բռնություն վերապրած կանանց կարծիքները բռնությունը հանդուրժելու վերաբերյալ պայմանավորված են այն հանգամանքով, թե արդյոք նրանք շարունակում են համատեղ բնակվել

բռնարարի հետ, թե հեռացել են: Վերջիններս, հետադարձ հայացք նետելով իրենց փորձառության վրա, համոզված են, որ հանդուրժելը հանուն ընտանիքի, իրականում վնասում է երեխաների ապագան.

> *«Կինը պետք է լռի, որ հանդարտեցնի մթնոլորտը»:*
>
> ***Գյումրի, բռնություն վերապրած կանանց խումբ***
>
> *«Ես թողել եմ ամուսնուս 26 տարի վերջինիս հետ ապրելուց հետո: Ես եղել եմ ավանդապաշտ կին, ինձ համար ընտանիքը պահելը ամեն ինչից վեր էր: Մի օր, սակայն, հասկացա, որ այդպես ապրել չեմ կարող, թողեցի ջահելությանս տարիներին ստեղծած ամեն ինչ և փախա: Կյանքիս քանի՞ տարիները կորցրի»: Առանց աչք թարթելու թողեցի տունս, որպեսզի երեխաս չտեսնի, թե ինչպես են վիրավորում, ծեծում իր մորը:*
>
> ***Երևան, բռնություն վերապրած կանանց ֆոկուս խումբ***

98. Այդուհանդերձ, անգամ այս կանայք բավականին երկար ժամանակ հանդուրժում են բռնությունը՝ հաստատելով մեծամասնության նորմատիվ կարծիքը հանդուրժողականության վերաբերյալ.

> *«Ամուսինս խոստացավ, որ երկու աղջիկ երեխաներից հետո եթե տղա ունենամ, կփոխի վերաբերմունքը, բայց 6 ամիս հետո ամեն ինչ նորից կրկնվեց: Ամուսնուս հանդուրժել եմ, որովհետև չէի ուզում, որ երեխաներս առանց հայր մեծանան»:*
>
> ***Երևան, բռնություն վերապրած կանանց ֆոկուս խումբ***

99. Թեև մեծամասնության կարծիքով սրանք նորմատիվ վարքի դրսևումներ են, որոնցով առաջնորդվում է «հայերի մեծամասնությունը», այդուհանդերձ կարծիքներն իրարամերժ են, և հակասությունը պայմանավորված է բռնության բնույթով և պարբերականությամբ: Օրինակ՝ թեև բոլոր խմբերում կարծում են, որ բռնության, հատկապես ֆիզիկական բռնության առաջին դեպքից հետո բռնություն վերապրածը պետք է փորձի հանդուրժել այն, փորձել լուծել խնդիրն ընտանիքի ներսում, ապա բռնության երկրորդ և հաջորդաբար կրկնվող դեպքերից հետո հանդուրժելու վերաբերյալ կարծիքներն արդեն կիսվում են, հատկապես կանանց շրջանում: Թե՛ բռնություն վերապրած կանայք, թե՛ այն կանայք, ովքեր նման փորձառություն չեն նշում, հակված են ավելի անհանդուրժողական վերաբերմունք ցուցաբերել և կոչ անել կնոջը հեռանալ ամուսնուց, պատշտոնական ապահարզան տալ և ամեն կերպ փորձել ինքնուրույն և ֆինանսապես անկախ կյանք վարել, եթե բռնությունը շարունակական է.

> *«Հանդուրժելով թույլ ես տալիս, որ դեպքերն անընդհատ կրկնվեն. մի անգամ զիջեցիր, ծեծը հա կրկնվելու է»:*
>
> ***Լուսակերտ, կանանց խումբ***

100. Սա թերևս բացատրվում է նրանով, որ կրկնվող բռնության դեպքում կանայք համոզված են, որ բացի իրենցից այլևս վտանգված է նաև իրենց երեխաների անվտանգությունը: Ավելին, նրանց կարծիքով ոչ միայն երեխայի անմիջական անվտանգությունն է վտանգված, այլև նրա հետագան, քանի որ երեխան սկսում է վերարտադրել ագրեսիվ վարքը և իր սոցիալականացումը կառուցել «ուժեղի»՝ բռնություն կիրառողի մոդելով:

101. Հանդուրժողականության առումով հստակ տարբերություն կա Երևանի և մարզերի մասնակիցների միջև: **Երևանում** երիտասարդ կանանց և տղամարդկանց մի մասն անընդունելի է համարում ընտանիքում բռնության հանդուրժումը, անգամ տղամարդու կողմից վերահսկողությունն ու սահմանափակումները, մինչդեռ **մարզերում** թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ ավելի հանդուրժող են այս երևույթների հանդեպ, ինչը թերևս բացատրվում է կանանց տնտեսական կախվածությամբ ամուսիններից, երբեմն նաև ամուսնու ընտանիքի անդամներից, տղամարդու և կնոջ դերերի վերաբերյալ առկա ընդհանուր առմամբ ավելի խորքային հայրիշխանական նորմատիվային ընկալումներով և մարզերում ընդլայնված ընտանիքների առկայությամբ:

102. Որոշակիորեն տարբերվում են նաև **գյուղական և քաղաքային համայնքների** կանանց կարծիքները: Հատկանշական է, որ **Լուսակերտում** կանայք սոցիալապես ավելի ապահովված են, ընդհանուր առմամբ ավելի ինքնավստահ և կայացած, սակայն այդուհանդերձ, ի տարբերություն Գյումրիի իրենց տարեկից երիտասարդ կանանց, շատ ավելի են հակված հանդուրժելու բռնությունը և ավելի հեշտությամբ են խոսում այդ մասին:

103. Սա թերևս բացատրվում է գյուղական համայնքի առանձնահատկությամբ: Փոքր համայնքում, որտեղ սոցիումի յուրահատկություններից մեկը մի քանի ընտանիքների միջև ընտանեկան և բարեկամական կապերի առկայությունն է, դրա անմիջական մասնակցությունն ընտանիքի սոցիալականացման գործընթացին ավելի ընդգրկուն և ինտենսիվ է: Որպես կանոն, նման սոցիումներն ավելի ավանդապաշտ են և հայրիշխանական նորմատիվ ընկալումների ու նշված յուրահատկության արդյունքում՝ կանայք հակված են առավել հանդուրժող լինել տղամարդու ուժի դրսևորումների հանդեպ, անգամ եթե դրանք բռնության են վերածվում:

104. Թերևս նման նորմատիվային ընկալումն անուղղակիորեն մատնանշում է, որ Լուսակերտում ֆիզիկական բռնության դրսևորումները սակավաթիվ են: Ավելին, բռնության հանդեպ հանդուրժողականության վերաբերյալ քննարկման ժամանակ խմբում գերիշխում էր հումորը, բռնության դրսևորումներին հումորային անդրադարձը: Մասնակիցների մեծ մասը բավականին հեշտությամբ էր խոսում բռնությունը հանդուրժելու մասին, որը բռնության փորձառություն ունեցող կամ անգամ բռնությանն ականատես լինելու դեպքում գրեթե անհնարին է, ինչպես օրինակ **Գյումրիում** բռնություն վերապրած կանանց դեպքում:

105. Վերջիններիս մոտ հանդուժողականության մասին քննարկումը շատ ավելի լարված և հակասական էր, և անգամ այն երկու մասնակիցների դեպքում, որոնք կարծում էին, թե բոլոր դեպքերում կինը պետք է հանդուրժի ընտանիքում իր հանդեպ բռնությունը, ակնհայտ էր, որ դա կնոջ հուսահատ ընտրությունն է իր պատկերացմամբ այլընտրանքների բացակայության պայմաններում.

> *«Չէ, իմ կարծիքով կինը պետք է հանդուրժի: Բա էրեխեքին առնի, ո՞ւր գնա»:*
>
> ***Գյումրի, բռնություն վերապրած կանանց խումբ***

106. Հանդուրժողականությունն ընտանեկան բռնության դրսևորումների հանդեպ նորմատիվային վարք է համարվում նաև **Գեղարքունիքում**, թեև այստեղ նման վարքն արդարացնելու համար մասնակիցները նշում են մեկ այլ պատճառ ևս՝ չհանդուրժելու և բարձրաձայնելու դեպքում կինն անուղղակիորեն, սակայն անմիջականորեն վտանգում է իր կին ազգականների ամուսնության հեռանկարը, քանի որ խաթարում է կնոջ ավանդականորեն ձևավորված և դեռևս մեծամասնության կողմից ամենաընդունելի համարվող հնազանդ կնոջ կերպարը.

> *«Կինը մտածում է. բա որ հիմա ես ձեն հանեմ, պատմություն դառնա, իմ երեք քույրերը ոնց են ամուսնանալու»:*
>
> ***Ներքին Գետաշեն, կանանց ֆոկուս խումբ***

107. Որոշ խմբերում մասնակիցները բռնության հանդեպ հանդուրժողական վերաբերմունքի պատճառ են համարում այն, որ կանայք տղամարդկանց կողմից վերահսկողությունը, սպառնալիքները և բռնության դրսևորումները համարում են նորմատիվ վարք.

> *«Հաճախ կինը բռնությունն ընկալում է որպես նորմա»*
>
> ***Երևան, երիտասարդ տղամարդկանց խումբ***

108. Հատկապես երիտասարդ տղամարդիկ և կանայք, անկախ բնակության վայրից կարծում են, որ դեռ վաղ մանկությունից կնոջը սովորեցնում են հանդուրժել իր հանդեպ տղամարդու վերահսկողության դրսևորումները, որը երբեմն ընկալվում է որպես սիրո դրսևորում: «Խփում է, ուրեմն սիրում է» ռուսական ասույթը մեջ է բերվել գրեթե բոլոր խմբերում, թեև ակնհայտորեն այն նորմատիվային ընկալում չէ ոչ մի

խմբում, քանի որ մեջբերմանը միշտ ուղեկցում էր հեգնանքը: Պարզորոշ կերպով նման ընկալումն այս խմբերը դիտարկում են որպես տարածված, սակայն անընդունելի վարք:

109. Կինը բարձրաձայնում է և/կամ պետք է բռնության մասին բարձրաձայնի միայն այն դեպքում, երբ այլևս անհնարին է լուծել ներընտանեկան խնդիրները ընտանիքի ներսում: Հաջորդ քայլը *ընտանիքի հարազատների, ընկերների կամ ամուսինների շրջապատում երկկողմանի հեղինակություն վայելող անձի օգնությանը* դիմելն է:

> *«Կինը բաժանվում է, երբ դանակն արդեն ոսկորին է հասել»:*
>
> ***Լուսակերտ, կանանց խումբ***

110. Մասնակիցների մեծամասնության կարծիքով բռնության մասին բարձրաձայնելը շղթայական գործընթաց է, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով՝ բռնության էսկալիացիայով և տարբեր փուլերում միջամտության արդյունավետությամբ.

Պատկեր 1. Բռնություն վերապրած կնոջ վարքի նորմատիվային ընկալումը ֆոկուս խմբերում.

111. Հատկանշական է, որ բոլոր խմբերը դժվարանում են հստակ նշել, թե որն է այն կարմիր գիծը, որից այն կողմ բռնություն վերապրած անձը պետք է այլևս չլռի և դիմի իրավապահ մարմիններին: Ըստ էության, այն բավականին էլաստիկ է, որովհետև գերակշռող մասը նախապատվություն է տալիս ընտանիքը պահպանելուն, անգամ եթե բռնությունը պարբերական է.

> *«Կանայք պիտի հանդուրժեն: Եթե չեն կարողանում, ապա պիտի բաժանվեն, որ երեխան չտուժի, քանի որ դա սթրես է երեխայի համար» :*
>
> ***Գյումրի, տարեց կանանց խումբ***

112. Այս հարցի շուրջ որոշակի սոցիալական ընկալման բացակայությունը և բազմաթիվ անհատական մեկնաբանությունների առկայությունը վկայում է այն մասին, որ դեռևս *չի ձևավորել հանրային ընկալում ընտանեկան բռնության կարմիր գծերի վերաբերյալ*: Եթե հանցագործությունները հանրային ընկալման մեջ ավելի միանշանակ վերաբերմունք են առաջացնում՝ «դրանք պետք է դատապարտել», ապա ընտանեկան բռնության դեպքում, անգամ դատապարտելով բռնության ծայրահեղ դրսևորումները, մասնակիցները փորձում են արդարացումներ ու բացատրություններ գտնել՝ շեշտելով հատկապես երեխաների գործոնը:

113. Բռնությունը հանդուրժելու վերաբերյալ կարծիքների հակասությունը բացատրվում է մասնակիցների՝ երեխայի լավագույն շահի ընկալմամբ: Այն մասնակիցները, որոնք կարծում են, թե պետք չէ հանդուրժել, նշում են երկու գործոն, որոնք, ըստ իրենց, հնարավորինս լավագույն կերպով են ապահովում երեխայի ներկան և ապագան՝ *կնոջ սոցիալ-տնտեսական անկախության աստիճանը և երեխայի նկատմամբ բռնության առկայությունը կամ բացակայությունը*: Նախ, եթե կինն ինքնուրուության որոշակի հնարավորություններ ունի՝ աշխատանք, սոցիալական կապիտալ, որը կարող է աջակցել իրեն, և կացարան, ապա պետք է հեռանա բռնարարից: Երկրորդ, նա պետք է հեռանա, եթե բռնության է

ենթարկվում երեխան, մինչդեռ եթե բռնությունը միայն իր նկատմամբ է, և նա սոցիալ-տնտեսական անկախություն չունի, ապա պետք է շարունակի հանդուրժել բռնությունն իր հանդեպ:

114. Մասնակիցները հետևյալ պատճառներն են նշում՝ բացատրելով կանանց առավել բնորոշ վարքը իրենց հանդեպ բռնության դեպքում՝

- ամոթ.

> *«Ամոթ է, ամբողջ գյուղը կիմանա էդ մասին, դրա համար էլ չեն ասի»:*
>
> ***Լուսակերտ, կանանց խումբ***

- վախ, թե աջակցություն և միջամտություն խնդրելու դեպքում, բռնությունն իր հանդեպ կավելանա.

> *«Կինը վախենում է որևէ տեղ դիմել, քանի որ դրանից հետո իր վիճակը կարող է ավելի վատանալ»:*
>
> ***Գյումրի, տարեց կանանց խումբ***

- իրենց իրավունքների և ուղղորդման մեխանիզմների վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակ.

> *«Կանայք սովորաբար ինֆորմացիա չունեն, թե ուր կարող են դիմել աջակցություն ստանալու համար»:*
>
> ***Երևան, երիտասարդ կանանց խումբ***

- զոհին բնորոշ ապատիա.

> *«Հաճախ կանայք ոչինչ չեն նախաձեռնում, որովհետև իրենց համար դա դարձել է սովորական երևույթ, իրենք միայն փակ օղակ են տեսնում, որից ելք չկա»:*
>
> ***Երևան, տղամարդկանց խումբ***

- անվստահություն միջամտող ֆորմալ կառույցների, հատկապես իրավապահ մարմինների կողմից աջակցություն ստանալու հավանականության և արդյունավետության հանդեպ.

> *«Եթե կինը ոստիկանություն դիմի, հարցը չի լուծվի, որովհետև նրանք «ամեն գործ փակում են»»:*
>
> ***Գյումրի, տղամարդկանց խումբ***

- ամուսնալուծված կնոջ խարանից խուսափելու ցանկություն.

115. Ըստ մասնակիցների, գոյություն ունի ակնհայտ հասարակական ճնշում ամուսնալուծված կանանց հանդեպ: Երբեմն կինը չունի գնալու որևէ տեղ, նույնիսկ հարազատ ծնողների տուն, վախենում է և չի կարողանում դուրս գալ բռնության շղթայից.

> *«Ես ամուսնացել եմ առանց սիրելու: Նա ինձ առաջարկեց հետը Երևան գնալ, ես էլ համաձայնեցի: Երևանը երբեք չէի տեսել և միշտ երազել էի՝ գոնե մեկ անգամ այնտեղ լինել: Այդպես էլ «ամուսնացա»: Ընտանիքս երես թեքեց ինձնից, իսկ մեծ քույրս ընդհանրապես դադարեց հետս խոսել: Նրանք չէին կարող հասկանալ, թե ես ինչու այդ մարդու հետ «փախա»՝ չկար ոչ տուն, ոչ ապագայի ակնկալիք: Ես ինչպե՞ս կարող էի վերադառնալ:*
>
> ***Երևան, բռնություն վերապրած կանանց խումբ***

116. Թեև այս գործոնների մասին նշվում է բոլոր խմբերում, անկախ բնակության վայրից, սեռից և տարիքից, այդուհանդերձ որոշակի առանձնահատկություններ նկատվում են մայրաքաղաքի և **Շիրակի և Գեղարքունիքի** մասնակիցների ընկալումներում: Այսպես, մարզային խմբերում մասնակցիները շատ ավելի քիչ են հակված դիմել ոստիկանություն, քան մայրաքաղաքի խմբերը: Ամոթով պայմանավորված լռելն ավելի շատ է շեշտում Շիրակում, քան Երևանում: Այդուհանդերձ, Երևանում երիտասարդ տղամարդկանց խմբում մասնակիցները ևս շեշտում են ամոթի գործոնը, հատկապես սեռական բռնության դեպքում: Նրանք կարծես համակարծիք են այն մտքին, թե հաճախ կանայք փորձում են թաքցնել սեռական բռնության դեպքերը՝ համարելով, որ դա «ամոթ» է և հրաժարվել որևէ միջամտությունից՝ միայն թե այդ դեպքի մասին իր մտերիմներն ու շրջապատը չիմանան: Թերևս այն հանգամանքը, որ կանանց խմբերում այս մասին ընդհանրապես չի խոսվել, անուղղակիորեն հաստատում է տղամարդկանց այս դիտարկումը:

117. Հատկանշական է, որ իրավունքների և ուղղորդման մեխանիզմների վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակի մասին հավասարապես նշվում է թե՛ մարզում, թե՛ մայրաքաղաքում: Իրազեկվածության շուրջ պատկերացումները տարբերվում են նաև Երևանի տղամարդկանց և կանանց խմբերում. տղամարդկանաց խումբն ավելի տեղեկացված է ուղղորդման մեխանիզմների մասին, քան կանանց խումբը: Նրանք նշում են մի քանի ֆորմալ կառույց, որոնց կինը կարող է դիմել՝ ոստիկանություն, Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին, որոշ ՀԿ-ներ, հատկապես եթե դրանք ունեն թեժ գիծ.

> *«Կարող են օգտակար լինել նաև թաղապետարանների երեխաների ու կանանց իրավունքները պաշտպանող հանձնաժողովները»:*
>
> ***Երևան, երիտասարդ տղամարդկանց խումբ***

118. Ի տարբերություն այս խմբի՝ երիտասարդ կանանց խմբում մասնակիցների մեծամասնութունը տեղեկացված չէ հրատապ արձագանքման և աջակցություն տրամադրող այլ կառույցների և դրանց դիմելու մեխանիզմների վերաբերյալ.

> *«Ես, օրինակ, չգիտեմ ինչպես վարվել, ում դիմել, ինչ մարմինների դիմել, եթե ես բռնության ենթարկվեմ»:*
>
> ***Երևան, երիտասարդ կանանց խումբ***

119. **Բռնություն վերապրած կանանց խմբերում** բռնության դեպքում կնոջ վարքի վերաբերյալ կարծիքները կիսվում են: Մի մասը, որ դեռ բնակվում է բռնարարի հետ, պնդում է, թե կինը չպետք է բարձրաձայնի բռնության մասին, այլ հակառակը, թաքցնի բռնության փաստը հանուն երեխայի և հասարակության կողմից ընդունելի համարվելու համար.

> *«Կինը չի կարող դիմել ոստիկանություն, քանի որ հասարակությունը դա չի ընդունի»:*
>
> ***Գյումրի, բռնություն վերապրած կանանց խումբ***

120. Այդուհանդերձ, կան նաև մասնակիցներ, ովքեր հավատացած են, որ հենց հանուն երեխայի չպետք է լռել ու հանդուրժել, այլ հակառակը՝ ֆորմալ գործընթաց սկսել և ապահարզան պահանջել: Նման կանայք, որպես կանոն, կարողացել են ֆինանսապես անկախ լինել՝ ինքնուրույն կամ սոցիալական միջավայրի աջակցությամբ.

> *«Կինը կարող է հեռանալ և ապահովել իր անվտանգությունը: Երբ ես ամուսնուս հետ էի, ոչ մի բան չէի կարողանում անել: Իսկ հիմա ես կարող եմ աշխատել և ապահովել երեխաներիս»:*
>
> ***Գյումրի, բռնություն վերապրած կանանց խումբ***

«Անչափ մեծ է բռնության ենթարկված կանանց աշխատաշուկայում ընդգրկելու խնդիրը: Պետք է լինեն ուսումնական հաստատություններ, որոնք նրանց կօգնեն ստանալ գոնե միջին մասնագիտական կրթություն, հետագայում իրենց և իրենց երեխաների կյանքի մինիմալ կարիքները հոգալու համար»:

Երևան, բռնություն վերապրած կանանց խումբ

121. Բռնություն վերապրած կինը, եթե անգամ որոշում է դիմել իրավապահ մարմիններին, շատ հաճախ հրաժարվում է իր իսկ հաղորդումից.

«Կանայք հաճախ ծայրահեղ իրավիճակներում զանգահարում են ոստիկանություն, սակայն երբ սուր պահն անցնում է, իրենք չեն շարունակում բողոքել և նահանջում են»:

Երևան, երիտասարդ կանանց խումբ

122. Բոլոր խմբերում սա համարվում է բռնություն վերապրած կնոջը բնորոշ վարքագիծ:

123. Բռնություն վերապրած կանայք ևս փաստում են այս մասին՝ պատճառաբանելով իրենց նման վարքը երեխաների սոցիալ-տնտեսական կարիքներն ինքնուրույն բավարարելու անհնարինությամբ և հույսով, թե բռնարարը կարող է փոխվել: Սակայն, կանայք, որոնք հեռացել են բռնարարից, պնդում են, որ հետադարձ հայացք նետելով իրենց փորձառության վրա, հաղորդումից այլևս չէին հրաժարվի.

«Ամուսինս խմիչք շատ էր սիրում, բազմիցս իմ հանդեպ բռնություն է կիրառել: Ոստիկանները գանում էին, մեկ ժամ հետո բաց էին թողնում: Հարևաններն էին ահազանգում, մեկ անգամ էլ ես եմ դիմում գրել, բայց դիմումս հետ վերցրի, չէի ուզում երեխաներս անհեր մեծանային: Հիմա շատ եմ ափսոսում, որ հետ եմ վերցրել»:

«Ես աղջկաս միշտ ասում եմ, հենց ամուսինդ ձեռք բարձրացրեց վրադ, անմիջապես կբաժանես, որովհետև մի անգամ բռնություն կիրառողը կշառնակի նաև երկրորդ անգամ»:

Երևան, բռնություն վերապրած կանանց խումբ

124. Կինը պետք է հեռանա բռնարարից և փորձի ինքնուրույն ապահովել իր ու իր երեխաների անվտանգությունն ու կենցաղը: Հատկանշական է, որ ի տարբերություն վերոնշյալ վարքի դրսևորումներին, այս դրսևորման վերաբերյալ դիտարկումները գերազանցապես ըղձական դիսկուրսային ձևաչափով են արտահայտվում, որը մեկ անգամ ևս հաստատում է այն հանգամանքը, որ մասնակիցների մեծամասնության համար ընտանիքի պահպանումն ավելի մեծ արժեք է, քան բռնության դեմ անհանդուժողականությունը: Միակ բացառությունը ընտանեկան բռնության փորձառություն ունեցող այն կանայք ենք, ովքեր հեռացել են բռնարարից:

125. Միևնույն ժամանակ, անգամ այս ըղձական դիսկուրսը ցույց է տալիս ընկալումների ու պատկերացումների փոփոխություն, քանի որ մասնակիցները, որոնք ակնկալում են նման վարք, այնքան էլ սակավաթիվ չեն, իսկ ընդունելի վարքի վերաբերյալ ակնկալիքի փոփոխությունն ի վերջո կարող է հանգեցնել իրական վարքագծային փոփոխության:

5.4.2. Բռնարարի վարքը բռնության կիրառումից հետո

126. Բռնության փորձառություն չունեցող գրեթե ոչ մի խմբում, բացառությամբ Գյումրիում տղամարդկանց խմբի, բռնության գործադրումից հետո բռնարարի վարքի մասին կարծիքներ չեն հնչել: Միայն նշված խմբում մասնակիցներից մեկը պատմեց դեպքի մասին, երբ տղամարդն ինքը կնոջը ծեծի ենթարկելուց հետո դիմել էր ոստիկանություն.

«Ես դեպք գիտեմ, որ ամուսինը կնոջը ծեծելուց հետո ինքը գնաց ոստիկանություն ու խոստովանեց, որ ծեծել է, բայց կինը ժխտեց այդ բանը, և հիմա իրենք խաղաղ ապրում են»:

Գյումրի, տղամարդկանց խումբ

127. Մասնակիցներն ավելի շատ քննարկում են բռնարարի փոփոխության հավանականության խնդիրը բռնության դրվագ(ներ)ից հետո: Ըստ մասնակիցների մեծամասնության՝ *բռնարարը երբեք չի փոխվում*, քանի որ ագրեսիվ վարքագիծը նրա մոտ կարծրացած է և պատասխանատվության ենթարկվելուց և իր արարքի պատժելիության գիտակցումից հետո անգամ նա շարունակելու է բռնություն կիրառել: Նման ընկալումն ավելի տարածված է բռնություն վերապրած կանանց ֆոկուս խմբերում.

«Բռնություն կիրառող մարդը չի փոխվում»:

Գյումրի, բռնություն վերապրած կանանց խումբ

128. Բոլոր խմբերում մասնակիցները համակարծիք են, որ անգամ բռնության դեպքերից հետո, բռնարարը շարունակում է սպառնալ բռնության զոհին, որի պատճառով կանայք հրաժարվում են աջակցությունից և միջամտությունից, որը ենթադրում է բարձրաձայնել բռնության մասին.

«Եթե նույնիսկ կինը գնա երեխայի հետ, նրան ամուսինը հանգիստ չի թողնի»:

Գյումրի, բռնություն վերապրած կանանց խումբ

«Ամուսինս էլ բազմիցս սպառնացել է, որ եթե գտնի ինձ, գլուխս միանգամից ճղելու է»:

Երևան, բռնություն վերապրած կանանց խումբ

129. Բռնություն վերապրած կանայք, անկախ բնակության վայրից, շեշտելով բռնարարի պարբերական և շարունակական բռնության հանգամանքը, նշում են նաև նրա կողմից պարբերաբար կրկնվող ներման խնդրանքները և փոխվելու խոստումները, հատկապես եթե կինը սպառնում է կամ որոշ ժամանակով իսկապես հեռանում է նրանից: Այս խոստումների պատճառով կանայք շարունակում են մնալ իրենց ամուսինների հետ, մի քանի անգամ առանձնանալու կամ ամուսնալուծվելու որոշում կայացնելուց, անգամ իրականում առանձնանալուց հետո.

«Հաճախ կանայք չեն կարողանում ազատվել իրենց ամուսնուց, քանի որ տղամարդը կարող է շարունակ ներողություն խնդրել կնոջից ու խոստանալ, որ էլ բռնություն չի կիրառի: Սակայն, երբ կինը ներում է և հաշտության է գնում, որոշ ժամանակից հետո նա նորից է նույն վարքը ցուցաբերում»:

Երևան, բռնություն վերապրած կանանց խումբ

«Վեց տարի դժոխքում եմ ապրել: Ամուսինս խնդրում էր, աղաչում, որ հետ գամ, որ իբր կփոխվի: Նույնիսկ Երևան ենք տեղափոխվել, վարձով տուն վերցրել, որ փորձենք կեսուրիցս առանձին ապրել, բայց մի քանի օր հետո նորից սկսում էր ծեծել: Ու էսպես մի քանի անգամ»:

Մարտունի, բռնություն վերապրած կանանց խումբ

130. Թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ, անկախ բնակության վայրից, կարծում են, որ այն հազվադեպ դեպքերում, երբ հնարավոր է փոխել բռնարարի վարքը, ոչ մի արտաքին միջամտություն արդյունք չի կարող տալ, եթե բռնարարը չի գիտակցում իր սխալն ու չի ցանկանում փոխվել: Սակայն սա ավելի բնորոշ է բռնության առաջին դեպքերին: Շարունակական բռնության դեպքում բռնարարի վարքը փոխելու բոլոր ջանքերն ապարդյուն են, ըստ մասնակիցների՝

«Եթե բռնությունը հոգեբանորեն ամրացած է տղամարդու մեջ որպես վարքագիծ, ապա նա կշարունակի բռնություն կիրառել: Միայն այն դեպքում, եթե նա շատ ուզենա վերջ տալ բռնությանը, կարող է և դադարեցնի դա»:

Գյումրի, տղամարդկանց խումբ

131. Սա թերևս ամենահատկանշական արդյունքն է, որը պետք է հաշվի առնել բռնարարի վերականգնման ծրագրեր մշակելիս:

5.5. Ընկալումներ ընտանեկան բռնությանը միջամտելու վերաբերյալ

5.5.1. Ընկալումներ միջամտության վերաբերյալ

132. Ինչպես արդեն նշվեց ընտանեկան բռնությանը նպաստող գործոնների քննարկման ժամանակ, ընտանիքում բռնությանը միջամտելու վերաբերյալ մեծամասնության կարծիքները բոլոր խմբերում հիմնականում համընկնում են. միջամտությունը նպատակահարմար է միայն բռնության ծայրահեղ դրսևորումների դեպքում, որովհետև շատերը հավատացած են, որ միջամտության, հատկապես ֆորմալ ինստիտուտների միջամտության դեպքում, ընտանիքի ապագան այլևս վտանգված է:

133. Այդուհանդերձ, կան նաև կարծիքներ գրեթե բոլոր խմբերում, թե ընտանեկան բռնության առաջին դրվագից հետո միջամտության արդյունավետության հավանականությունն ավելի բարձր է, եթե այն կատարվում է ամուսինների կողմից հարգանք վայելող անձի կողմից.

«Սկզբնական փուլում այդ միջամտությունը կարող է արդյունավետ լինել, սակայն այլ պարագայում դա կարող է նաև վնաս հասցնել»:

Երևան, երիտասարդ կանանց խումբ

134. **Գեղարքունիքի գյուղերում** կարևորվում է նաև գյուղապետի դերը, թեև ոմանք շեշտում են նրա անձնական հեղինակությունը, մյուսները՝ «օրենքի ներկայացուցիչ» լինելը.

«Գյուղապետը հարգանք ունի: Կխոսեն, կբացատրվեն և կհաշտվեն»:

Ներքին Գետաշեն, կանանց խումբ

135. Հատկանշական է, որ միջամտության վերաբերյալ ընդհանուր մոտեցումը բռնություն ենթարկված կանանց խմբի և այլ խմբերի մասնակիցների պարագայում գրեթե չի տարբերվում, թեև բռնություն վերապրած կանանց խմբում մասնակիցների ավելի զգալի մասն է հակված չմիջամտելուն, ինչն անուղղակիորեն հաստատում է նրանց փորձառության ընթացքում արդյունավետ միջամտություն չստանալու հանգամանքը: Մեկ այլ հանգամանք ևս տարբերվում է այս երկու խմբերում. բռնություն վերապրած կանայք շատ ավելի քիչ են վստահում ֆորմալ կառույցներին և չեն հավատում միջամտության հավանական արդյունավետությանը, քան բռնության փորձառություն չունեցող մասնակիցները.

«Օրենքը մեր երկրում չի գործում և կինը պաշտպանված չէ: Հենց այդ պատճառով էլ մեր գյուղում սպանության երկու դեպք է տեղի ունեցել. մինչև ամուսինը կնոջը չսպանեց, ոստիկանները չեկան»:

«Իմ ամուսինը բազմիցս ծեծել է ինձ, դանակով վերք բացել քրոջս ոտքին, և այսօր էլ սպառնում է, որ ինձ գտնելու պարագայում կսպանի: Այդ մարդը, սակայն, ազատության մեջ է»:

Երևան, բռնություն վերապրած կանանց խումբ

136. Մի կարծիք ևս, որը հատուկ է բոլոր խմբերին, **միջամությունը բռնության տեսակով պայմանավորելն** է: Շատերը կարծում են, թե միջամտությունն ավելի հեշտ է ֆիզիկական, քան այլ տեսակի բռնության դեպքում.

> *«Ավելի հեշտ է միջամտել, եթե բռնությունը ֆիզիկական է կամ սեռական, և ավելի դժվար է, եթե դա հոգեբանական է»:*
>
> ***Երևան, երիտասարդ կանանց խումբ***

137. Բռնության ոչ ֆիզիկական դրսևորումների դեպքում թերևս ավելի բարդ է հստակորեն որոշել միջամտության պատշաճ ժամանակն ու եղանակը, քանի որ խոսքն ընտանիքի մասին է, իսկ միջամտությունը, հատկապես ֆորմալ կառույցների դեպքում, ենթարդում է խնդրի հանրայնացում այս կամ այն աստիճանով:

138. Ակնհայտորեն միջամտության վերաբերյալ ընդհանուր առմամբ բացասական կարծիքի հիմնական պատճառը ընտանիքի արժեքն է, որն, ըստ մասնակիցների, այլև հնարավոր չէ պահպանել, միջամտության պարագայում: Թերևս երկրորդ հիմնական պատճառը, հատկապես ֆորմալ ինստիտուտների միջմատության դեպքում, վերջիններիս հանդեպ վստահության ցածր մակարդակն է, որի մասին ավելի մանրամասն՝ ստորև:

5.5.2. Բռնություն վերապրած անձանց համաձայնության խնդիրը

139. Չնայած միջամտության վերաբերյալ ընդհանուր առմամբ բացասական կարծիքին՝ կարծիքները տարբերվում են բռնություն վերապրած անձանց համաձայնության խնդրի շուրջ: Այսպես, Երևանում երիտասարդ կանանց խումբը տարակարծիք էր այն հարցի վերաբերյալ, թե արդյոք պետք է միջամտել ընտանիքում, որտեղ բռնություն վերապրածը չի գիտակցում, որ ենթարկվում է բռնության, չի բարձարաձայնել բռնության մասին կամ անգամ գիտակցելով, հրաժարվում է որևէ միջամտությունից՝ կարծելով, թե դա կարող է վնասել իրեն, երեխաներին կամ ընտանիքին: Խմբի մի մասը կարծում էր, թե պետք է ամեն դեպքում միջամտել և պաշտպանել բռնություն վերապրածին.

> *«Եթե կինը նույնիսկ նախընտրում է ոչ մի տեղ չդիմել, նա միևնույնն է օգնության կարիք ունի»:*
>
> *«Հարկավոր է աջակցել, եթե նույնիսկ ինքը չի գիտակցում դա»:*
>
> ***Երևան, երիտասարդ կանանց խումբ***

140. Մյուս մասը, սակայն, հակադարձում է, թե անհատի անձնական կարծիքը միշտ պետք է առաջնային լինի, և եթե չկա համաձայնություն, որևէ կերպ միջամտել պետք չէ.

> *«Դա իր ընտրությունն է: Եթե կինը չի ուզում, որ իրեն աջակցեն, ապա պետք չէ միջամտել: Ավելի լավ է հրաժարվել այդ մտադրությունից»:*
>
> ***Երևան, երիտասարդ կանանց խումբ***

141. Բռնություն վերապրած կանանց խմբերում նույնպես տարբեր կարծիքներ կան այս խնդրի շուրջ:

5.5.3. Իրազեկվածությունը ծառայությունների վերաբերյալ

142. Ֆոկուս խմբերում քննարկումներից կարելի է ընդհանրացել, որ մեծ մասամբ, անկախ բնակության վայրից, տարիքից և սեռից շատ քչերն են տեղեկացված բռնության դեպքում ուղղորդման մեխանիզմների, ինչպես նաև ծառայություն և աջակցություն տրամադրող կառույցների մասին:

143. Բոլոր խմբերում գոյություն ունի ընդհանրական, վերացական պատկերացում «ինչ-որ» կազմակերպությունների մասին, որոնք աջակցում են բռնություն վերապրած անձանց, թեև ոչ մի խմբում չի նշվում կոնկրետ կազմակերպության մասին:

144. Իստիտուցիոնալ կառույցներից առաջինը, որի մասին նշում են մասնակիցները և որտեղ ենթադրում են, որ պետք է դիմել ընտանեկան բռնության ծայրահեղ դրսևորումների դեպքում, ոստիկանությունն է: Ոմանք նշում են ՀԿ-ների թեժ գծերի մասին, թեև որևէ մասնակից չգիտի կոնկրետ թեժ գիծ, ուր անհրաժեշտության դեպքում կարելի է զանգահարել:

145. Մասնակիցներից շատերը գիտեն, որ կանանց համար ապաստարաններ կան, սակայն միայն Երևանի երիտասարդ կանանց խմբի մասնակիցներից մեկը նշեց կոնկերտ ապաստարանի մասին՝

> *«Կինը կարող է դիմել նաև այն կազմակերպություններին, որոնք ապաստարան են տրամադրում: Օրինակ՝ ես գիտեմ, որ կա մի այդպիսի տեղ, որը կոչվում է 'Light house': Ես լսել եմ, որ այդտեղ շատ լավ պայմաններ են ստեղծված կանանց և երեխաների համար»:*

146. Մասնակիցները տեղեկացված չեն նաև, թե ինչպես կարելի է դիմել ապաստարան, եթե նման կարիք լինի:

147. Հատկանշական է, որ բռնություն վերապրած անձանց աջակցություն տրամադրելու համատեքստում մասնակիցները նշում են կոնկրետ մասնագետների, ում կարելի է և կամ պետք է դիմել, թեև այս մասնագետների ինստիտուցիոնալ ներակայացուցչության ընկալում որևէ խմբում չկա: Ամենահաճախ նշվող մասնագետները, ըստ քննարկումներում արծարծվող հաճախականության, հետևյալն են՝ սոցիալական աշխատող, հոգեբան, իրավաբան, բժիշկ և մի խմբում միայն՝ քահանա:

5.6. Միջամտության մասին ընկալումներն՝ ըստ դերակատարների

5.6.1. Ոչ ֆորմալ դերակատարներ

148. Ինչպես նշվել է *«Բռնություն վերապրած անձի վարքը»* բաժնում, եթե բռնություն վերապրած անձն այնուամենայնիվ համաձայնվում է դիմել աջակցության, ապա առաջին օղակը, որին նա հակված է դիմել միջամտության համար, **ոչ ֆորմալ դերակատարներն** են՝ *ընտանիքի հարազատները, մասնավորապես ամուսինների ծնողները, ընկեր(ուհի)ները, ավելի հազվադեպ՝ քավորը,* թեև հստակորեն նշվում է նաև միջամտության արդյունավետության փխրուն հավանականության մասին: Հատկանշական է, որ ավանդական հասարակություն լինելով հանդերձ, ավանդական ինստիտուտներն աստիճանաբար կորցնում են իրենց գործառույթները նոր իրողություններում: Օրինակ՝ մասնակիցներից մեկը նշում է, որ քավորն ըստ էության հայկական ավանդական մշակույթում ընտանեկան կոնֆլիկտների ժամանակ պետք է ստանձնի անաչառ ու անկողմնակալ միջնորդի դերը, սակայն նրա ժամանակակից գործառույթներում նման ակնկալիք այլևս գրեթե չկա: Արդյունքում, ժամանակակից իրողության մեջ անվանդական սոցիալական կապիտալի հիմնական գործառույթներից մեկը՝ անկողմնակալ աջակցությունն ընտանիքին, արժեզրկվել է, սակայն նոր՝ նեղ մասնագիտական ինստիտուտներն առայժմ չեն կարողանում լրացնել այդ բացը, քանի որ ո՛չ հասանելի են սոցիալապես անապահով խմբերի համար, ո՛չ էլ վերջիններս բավարար չափով իրազեկված են նման ծառայությունների մասին:

149. Ոչ ֆորմալ ինստիտուտների միջամտության առումով որոշակի առանձնահատկություն է նկատվում մասնակիցների ընկալումներում՝ ըստ բնակության վայրի: Այսպես, թե՛ քաղաքում, թե՛ գյուղում շեշտվում է գյուղերում համայնքի առավել ազդեցիկ և արձագանքող լինելու և ընտանեկան բռնության համեմատաբար քիչ դեպքեր գրանցվելու հանգամանքը, քանի որ համայնքը, անգամ առանց միջամտության, ընտանիքի և ամուսինների հարաբերությունների վերաբերյալ իր ակնկալիքներով զսպող դերակատարություն ունի:

150. Մեկ այլ առանձնահատկություն նշվում է **Շիրակի** մասնակիցների կողմից: Մեծամասնության կարծիքով՝ եթե միջամտեն կնոջ ծնողները, հատկապես մայրը, ապա դա ավելի կսրի ընտանեկան լարված մթնոլորտը, և բռնության հավանականությունը կմեծանա, մինչդեռ տղայի մոր անկողմանակալ միջամտությունը, շատերի կարծիքով, կարող է նվազեցնել լարվածությունը և ընդհանրապես կանխել բռնությունը.

> *«Սկեսուրները կարող են օգնել ու դրական դեր խաղալ ընտանեկան ընդհարումների ժամանակ»:*
>
> ***Գյումրի, բռնություն վերապրած կանանց խումբ***

151. **Գեղարքունիքում** առավել ակնհայտ է միջամտության արդյունավետության հանդեպ անվստահությունը: Հատկապես Մարտունիում կազմակերպված ֆոկուս խմբում, որին մասնակցում էին բռնություն վերապրած կանայք թե՛ Մարտունիից, թե՛ հարակից գյուղերից, ակնհայտ էր ընդհանուր մի միտում՝ կնոջ նկատմամբ բռնության դրսևորումների հանդեպ հանդուրժողականությունը համարվում է հանրայնորեն ընդունելի, և այս վերաբերմունքը վերարտադրվում է որևէ արդյունավետ միջամտության, կնոջը որևէ կերպ բռնությունից պաշտպանելու հանդեպ խորը թերհավատության միջավայրում: Հատկանշական է, որ այս խմբում որևէ ցանկություն, առաջարկ կամ պահանջ չինչեց կնոջը պաշտպանելու առումով: Եթե այլ խմբերում մասնակիցները որոշակի ակնկալիքներ ունեին այս կամ այն կառույցից կամ անհատից, ապա այս խմբում մասնակիցները դժվարանում էին որևէ առաջարկով հանդես գալ, որը փաստում էր, որ հարմարվածության աստիճանը բավականին բարձր է:

152. Ընտանեկան բռնությանն ականատես լինելու դեպքում որևէ կերպ անձամբ միջամտելու վերաբերյալ կարծիքները ևս տարբերվում են, թեև մեծամասնությունը կարծում է, թե չի միջամտի, եթե անձամբ իրեն չխնդրեն, քանի որ կարծում են, որ. ա) բռնարարը կարող է բռնություն կիրառել նաև իրենց նկատմամբ (սա ավելի տարածված տեսակետ է կանանց խմբերում), բ) բռնության ենթարկվող կինն ինքը կարող է որոշել, թե երբ պետք է դիմել ոստիկանություն:

153. Երևանի երիտասարդ տղամարդկանց խմբում մասնակիցներից միայն երեքը խոսեցին անձնական փորձից, երբ ստիպված են եղել միջամտել, ըստ իրենց, ընտանեկան կամ զուգընկերոջ կողմից բռնության, երբ տղամարդիկ փորձել են հարվածել կամ բռնի տեղափոխել կնոջը, իսկ մի դեպքում՝ կնոջն ու երեխային: Դեպքերից երկուսին միջամտել են ոստիկանները, սակայն միայն այն դեպքում, երբ ֆիզիկական բռնության վտանգ է ծագել բռնարարի և միջամտող տղամարդու միջև: Մինչ այդ, ո՛չ ոստիկանները, ո՛չ միջադեպին ներկա այլ անձինք որևէ կերպ չեն փորձել միջամտել, քանի որ ակնհայտորեն զուգընկերների միջև է եղել լրավածությունը և/կամ բռնությունը՝ հիմնավորելով, թե. «Իր կինն է, իրենք իրենց հարցերը կլուծեն»:

154. Երևանի երիտասարդ կանանց խմբում մասնակիցներից միայն մեկը նշեց անձամբ միջամտելու փորձի մասին, սակայն շեշտեց, որ երկրորդ անգամ թերևս չի միջամտի, քանի որ.

> *«Ես մի անգամ փորձեցի միջամտել, բայց կինը սկսեց իմ վրա գոռգոռալ, թե քո ինչ գործն ա, ինչու ես խառնվում ու ես ստիպված նահանջեցի: Այլևս երբեք նման բան չեմ անի»:*

155. Շիրակում միայն տարեց կանանց խմբի մասնակիցներից մեկը նշեց, որ ինքը դիմել է ոստիկանություն իր աղջկա դեմ բռնության կիրառման դեպքում և համապատասխանաբար, իրեն գոհացնող աջակցություն ստացել՝ առանց մանրամասնելու դրա բնույթը:

156. Մասնակիցների զգալի մասը անձամբ միջամտելուց կամ միջամտություն նախաձեռնելուց խուսափելը բացատրում է հետևյալ կերպ. քանի որ ընտանեկան բռնությունն ինքնին տեսանելի չէ, դժվար է կողմնորոշվել, թե երբ պետք է միջամտել, որովհետև դեպքերն այնքան անհատական են, որ համոզվածություն չի կարող լինել, թե միջամտությունը կարող է պաշտպանել բռնության զոհին ու կանխել բռնարարին: Թեև բոլորը համաձայնվեցին այն մտքի հետ, թե ֆիզիկական բռնության դեպքում միջամտությունն արդեն պարտադիր է, բռնության այլ տեսակների դեպքում, հատկապես տնտեսական և հոգեբանական, նրանք ակնհայտորեն վարանում են միջամտության հարցում, քանի որ պարզ չէ, թե տուժողն ինքն ինչպես կվերաբերվի այդ միջամիտությանը: Ոմանք նշեցին այն մասին, որ լինում են դեպքեր, երբ տուժողները կտրուկ հրաժարվում են որևէ միջամտությունից:

157. Թերևս նման վերաբերմունքը միջամտության հանդեպ բացատրվում է նաև այն հանգամանքով, որ մասնակիցները իրազեկված չեն ուղղորդման մեխանիզմների և առաջին արձագանքի համար պատասխանատու ֆորմալ կառույցների վերաբերյալ, իսկ պետական կառույցների հանդեպ վստահության ցածր մակարդակի մթնոլորտում միջամտության նախաձեռնության հավանականությունն էլ ավելի է նվազում:

5.6.2. Իրավապահ մարմիններ

158. Ընտանեկան բռնությունը կանխելու, բռնություն գործադրողին պատժելու և բռնություն վերապրած անձին պաշտպանելու գործառույթներ իրականացնող պետական կառույցների թվում բոլոր ֆոկուս խմբերում մասնակիցներն առանձնացնում են իրավապահ մարմինների դերը, իսկ առավել հաճախ քննարկվող կառույցը ոստիկանությունն է: Սա թերևս անուղղակիորեն փաստում է այն հանգամանքի մասին, որ ոստիկանությունն ավելի հաճախ է արձագանքում ընտանեկան բռնության դեպքերին, քանի որ բոլոր խմբերում կա առնվազն երկու մասնակից, որ տեղյակ է կամ ականատես է եղել ոստիկանության միջամտության, մինչդեռ հաջորդ փուլի համար պատասխանատու մարմինները՝ քննչական կոմիտե և դատարան, գրեթե չեն նշվում: Սա թերևս հաստատում է նաև պաշտոնական վիճակագրությունը, ըստ որի՝ դատարան է ուղղորդվում թվով ավելի քիչ գործ:

159. Մասնակիցների զգալի մասն իրազեկված չէ, թե ինչպիսի իրավական արձագանք է նախատեսվում ընտանեկան բռնության դեպքերի համար: Միայն Երևանի երիտասարդ տղամարդկանց խմբում մասնակիցներից մի քանիսը կարծում են, որ բռնությունը, որպես երևույթ, Հայաստանում *քրեականացված* է և ենթադրում են, որ անկախ նրանից, թե որտեղ է դա կատարվում, ընտանիքում, թե դրանից դուրս, ենթադրվում է, որ այն պետք է *պատժվի քրեական օրենսգրքով*: Ոմանք, սակայն, հակադարձում են, նշելով որ բռնությունը պատժվում է միայն այն դեպքում, երբ տեսանելի է: Օրինակ՝ եթե սպանություն է տեղի ունեցել, ապա այն չի կարող անարձագանք մնալ, սական պարբերաբար կրկնվող ֆիզիկական բռնությունը կնոջ նկատմամբ հաճախ անտեսանելի է և այդ իսկ պատճառով՝ քրեականորեն ոչ պատժելի:

160. Գրեթե բոլոր խմբերում մասնակիցներից ոմանք նշում են նաև այն մասին, որ հաճախ լսել կամ ականատես են եղել դեպքերի, երբ անգամ ֆիզիկական բռնության դեպքում *բռնարարը պատասխանատվության չի ենթարկվում*, որովհետև *ոստիկանները հակված են տուժողի դիմումին ընթացք չտալ*, փորձել համոզել նրան, որ հետ վերցնի այն, որպեսզի «ընտանիքը չքանդվի»: Մասնակիցներից մի քանիսը նշում են անգամ դեպքերի մասին, երբ *ոստիկանն ու տղամարդը համաձայնության են գալիս դիմումին ընթացք չտալու շուրջ*: Հատկանշական է, որ ոստիկանության նման արձագանքը մասնակիցները պայմանավորում են ոչ թե իրավապահ մարմինների գործառույթներով՝ օրինակ, ոստիկանների միջամտելու դժկամությամբ, ինչը պայմանավորված է բացահայտված դեպքերի թվով, այլ ոստիկանների սոցիալ-մշակութային ընկալումներով:

161. Մասնակիցները հաճախ են անդրադառնում դեպքերի, երբ ոստիկանը, ստիպված լինելով արձագանքել տուժողի բողոքին, փորձում է կանխել բռնությունը՝ սպառնալով բռնարարին կամ փորձելով նրանից համաձայնություն կորզել, որ այլևս բռնություն չի կիրառի՝

> *«Ոչ մի ոստիկան մի խփելու համար ամուսնուն չի մեկուսացնում: Փոխարենը բարոյախրատական ճառ է կարդում գլխին ու բաց թողնում»:*
>
> ***Երևան, երիտասարդ տղամարդկանց խումբ***

162. Բռնություն վերապրած կանայք հատկապես կարևորում են ոստիկանության կողմից կիրառվող պատժամիջոցների արդյունավետության խնդիրը: Շեշտվում է, որ բռնությունը դադարեցնելու համար ոստիկանությունը չպետք է բռնարարին ձերբակալելուց հետո անմիջապես բաց թողնի, հատկապես քանի որ բռնարարը հաճախ ոստիկանությունում կերպարանափոխվում է, կարող է նույնիսկ լացել ոստիկանին համոզելու և ազատ արձակվելու համար: Երբեմն էլ բռնարարը փորձում է կաշառել ոստիկանին.

> *«Ամուսինս լացում էր, համոզում, որ էլ էդպիսի բան չի անի, բաց էին թողնում»:*
>
> ***Երևան, բռնություն վերապրած կանանց խումբ***

163. Նրանց կարծիքով, ոստիկանն անգամ չի փորձում բռնարարին պատժելու ուղիներ փնտրել և հնարավորություն տալ զոհին իր առօրյա կենսագործունեությամբ զբաղվել, այլ միանգամից առաջարկում է կնոջը կացարան տեղափոխվելու տարբերակը.

> *«ԱՄՆ-ում բռնություն գործադրած ամուսինը չի կարող մոտենալ կնոջը և երեխային ավելին, քան 50-100մ շառավղով հեռավորությունն է: Ինչու՞ նմանատիպ պահանջ մեզ մոտ դրված չէ: Ինչու՞ ոստիկանությունը ոչինչ չի անում, երբ հավաքում և փրամադրում ես հետապնդման դեպքի վերաբերյալ բոլոր ապացույցները»:*

164. Ըստ մասնակիցների մեծամասնության՝ ոստիկանները բռնության դեպքերին հաճախ արձագանքում են *ոչ թե որպես իրավապահ մարմնի ներկայացուցիչ, այլ որպես անհատ*, որպես հայ ավանդական տղամարդ կամ անգամ կին: Վերջիններս, ինչպես շատ հայ կանայք, մտածում են, որ կինը պետք է հանդուրժի բռնությունն իր հանդեպ՝ հանուն ընտանիքի: Փողոցում զուգընկերների միջև կոնֆլիկտի ժամանակ հրաժարվում են անգամ միջամտել՝ փաստարկելով, թե դա երկուսի նեղ անձնական խնդիրն է: Ըստ մի մասնակցի՝ արձագանքման դասական սցենար է հետևյալը.

> *«Նկատելով, որ տղամարդը քաշքշում է կնոջը, հայհոյում, գոռգոռում, ոստիկանը մոտենում է.*
>
> *- Ի՞նչ է պատահել:*
>
> *- Ոչ մի բան, կինս ա:*
>
> *- Հա՞, լավ, - ու հեռանում է»:*
>
> ***Երևան, երիտասարդ տղամարդկանց խումբ***

165. Պետական կառույցների և հատկապես իրավապահ մարմինների հանդեպ ընդհանուր անվստահության մթնոլորտում մասնակիցները նշում են նաև մասնավորապես ընտանեկան բռնության դեպքում ոստիկանությանը չդիմելու հիմնական երկու պատճառ.

- ոստիկանություն դիմել նշանակում է բացառել ընտանիքը պահպանելու հավանականությունը.
- ոստիկանություն դիմելով՝ կնոջ ու երեխաների վիճակն ավելի է վատթարանում, որովհետև ոստիկանությունը չի կարողանում ապահովել նրանց անվտանգությունը, անգամ ամուսինների բաժանումից/ապահարզանից հետո:

166. Երկրորդ պատճառն ավելի է շեշտվում բռնություն վերապրած կանանց ֆոկուս խմբերում.

> *«Ոստիկանության միջամտությունը կարող է ազդել երեխաների վրա, և նրանք կարող են տուժել, երբեք չվերականգնվել այդ հոգեկան վիճակից»*
>
> ***Գյումրի, բռնություն վերապրած կանանց խումբ***

167. Նման դիտարկումը թերևս փաստում է ոչ միայն ոստիկանության վերաբերմունքի, ոստիկանության կողմից ներկա իրավական գործիքների կիրառման պրակտիկայի փոփոխության անհրաժեշտության մասին, այլև ոստիկանների բռնություն վերապրած անձանց հետ աշխատանքի կարողությունների բարելավման անհրաժեշտության մասին:

168. Ոստիկանության միջամտության հանդեպ ընդհանուր առմամբ բացասական վերաբերմունքով հանդերձ՝ այն սակավաթիվ մասնակիցները, որոնք կիսվեցին ոստիկանության հետ անմիջական առնչության իրենց փորձով, ավելի դրական են գնահատում ոստիկանության դերը: Մասնավորապես, Գյումրիում տղամարդկանց խմբում մի քանի մասնակից նշում են, որ բռնության կանխման առումով ոստիկանության միջամտությունը կարող է արդյունավետ լինել.

> *«Ոստիկանությունը բռնության դեպքում կարող է օգտակար լինել, կարող է բռնացողին ձերբակալել, օրինակ»:*

169. Ի տարբերություն ոստիկանության հանդեպ սակավաթիվ մասնակիցների կողմից արտահայտված դրական վերաբերմունքի՝ դատարանի գործունեության վերաբերյալ գնահատականները, թեև կրկին միայն մի քանի մասնակիցների կողմից արտահայտված, միանշանակորեն բացասական են.

> *«Դատարանը բռնության զոհի հանդեպ սովորաբար անարդար որոշում է ընդունում՝ փողի կամ այլ շահերի համար»:*
>
> ***Գյումրի, տղամարդկանց խումբ***

170. Դատարանի հանդեպ նմանատիպ վերաբերմունք կա նաև Լուսակերտում և Երևանում: Բացի այդ, դատավորների վերաբերմունքը ամուսնու դեմ հայտ ներկայացրած կնոջ հանդեպ կարող է խիստ կանխակալ և մեղադրական լինել՝

> *«Դատավորն ինձ հարցնում է՝ ինչո՞ւ չես փորձում ընտանիքդ պահել: Ակնհա՞յտ չէ, որ եթե կինը դատարան է դիմել, ուրեմն ընտանիքը պահել հնարավոր չէ: Իսկ ընդհանուր առմամբ դատարանում կենցաղային մակարդակի պատկերացումներ են, թե կինը ինչպիսին պետք է լինի»:*
>
> ***Երևան, բռնություն վերապրած կանանց խումբ***

171. Մասնակիցներից մեկը նշեց, որ ամուսնալուծության և երեխայի խնամքի կազմակերպման հարցերը կարգավորող դատական գործընթացը չափազանց երկար է տևում: Մինչդեռ լինում են հրատապ դեպքեր, երբ ընթացակարգերը պետք է ավելի ճկուն և արագ լինեն:

5.6.3. Պետական այլ կառույցներ

172. Հատկանշական է, որ պետական կառույցների միջամտության (հատկապես բռնությունը կանխելու և բռնություն վերապրած անձանց աջակցություն ցուցաբերելու առումով) վերաբերյալ ակնկալիքների մասին քննարկում ծավալվել է հիմնականում երևանյան խմբերում, մինչդեռ Շիրակում նման ակնկալիքներ գրեթե չկան: Ակնկալիքները հիմնականում երկու նախարարություններից են՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և ՀՀ կրթության և գիտության նախարարություն: Առաջինից ակնկալվում է աջակցություն բռնություն վերապրած անձանց, թեև առանց մանրամասնելու, թե ինչպիսի աջակցություն է անհրաժեշտ, երկրորդից՝ կարծրատիպերի փոփոխության և իրավունքների վերաբերյալ իրազեկվածության միջոցառումներ.

> *«Սոցիալական ապահովության նախարարությունը կարող է մեծ դեր ունենալ բռնության հետ կապված խնդիրների լուծման հարցում: Կրթության նախարարությունը պետք է ապահովի մարդու իրավունքների ուսուցում, արժեհամակարգի ու վարքի նորմերի ձևավորում, սկսած մանկապարտեզներից՝ սերունդների դաստիարակության հարցում հաջողության հասնելու նպատակով»:*
>
> ***Երևան, երիտասարդ տղամարդկանց խումբ***

173. ՀՀ ԿԳՆ-ին վերագրվող նշված գործառույթի իրականացման ակնկալիքի մասին նշվում է նաև Երևանի երիտասարդ կանանց խմբում:

174. Երևանի երիտասարդ կանանց խմբում և Գյումրու տղամարդկանց խմբում մասնակիցներից ոմանք որպես աջակցություն տրամադրող կառույց նշում են նաև Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը, թեև ոչ ոք հստակ պատկերացում չունի, թե ինչպես պետք է ՄԻՊ-ն աջակցի բռնություն վերապրած անձին:

5.6.4. Հասարակական կազմակերպություններ

175. Մասնակցիներից ոմանք նշեցին, թե հասարակական կազմակերպությունները կարող են համապատասխան տեղեկատվության աղբյուր լինել, իսկ երբեմն նաև մասնագիտական ծառայություններ մատուցել անվճար: Մի քանիսն ավելացրեցին, թե ՀԿ-ների միջամտությունն արդյունավետ է միայն այն դեպքում, երբ տուժողներն անմիջականորեն դիմում են նրանց, մասնավորապես շահերի պաշտպանության նպատակով:

176. Եթե կանանց հանդեպ բռնության դեպքում ՀԿ-ների և քաղաքացիական հասարակության այլ կառույցների կամ պետական մարմինների միջամտության վերաբերյալ կարծիքները տարբերվում էին, ապա երեխաների հանդեպ բռնության դեպքերի ժամանակ գրեթե բոլորը համակարծիք են, թե միջամտությունն անհրաժեշտ է: Նման կարծիքը հիմնավորվում է բռնություն վերապրած անձանց՝ *բռնությանն արձագանքելու կարողության վերաբերյալ մասնակիցների ընկալմամբ.* ըստ մասնակիցներից շատերի՝ ամուսինները, որպես չափահաս և գիտակից մարդիկ, թերևս կարող են փոխհամաձայնության եզրեր և միջոցներ գտնել նաև առանց որևէ միջամտության, մինչդեռ իր ծնողների, տատիկ-պապիկների կամ եղբայր-քույրերի կողմից բռնության ենթարկվող երեխան ինքնուրույն պաշտպանության գրեթե որևէ այլ միջոց, բացի ընտանիքից դուրս առկա միջոցները, այլևս չունի:

177. Բռնություն վերապրած կանանց խմբում ՀԿ-ների հանդեպ ավելի շատ վստահություն կա, քան պետական մարմինների.

> *«ՀԿ-ներին դիմելը ավելի ճիշտ է, քան պետական կառույցներին»:*

178. ՀԿ-ներից մասնակիցներին ակնկալում են հետևյալ աջակցությունը.

- բռնություն վերապրած կանանց իրավունքների պաշտպանություն.
- կանանց տնտեսական անկախության հաստատման համար հնարավորությունների ընձեռում:

179. Միաժամանակ, գրեթե բոլոր խմբերում նշվում է, որ ՀԿ-ների մասին համապատասխան տեղեկատվություն չկա:

5.6.5. Մասնագիտական միջամտություն

180. Բոլոր խմբերում ընտանիքում բռնությունը կանխելու գործառույթի արդյունավետության հանդեպ վստահությունը ոչ թե կառույցների, այլ անհատ մասնագետների միջամտության հանդեպ է: Թերևս միակ լուծումը, որի արդյունավետությանը վստահում են այն մասնակիցները, ովքեր կարծում են, թե միջամտությունն ընդհանրապես կարող է արդյունավետ լինել, *սոցիալական աշխատողի* և *հոգեբանի* ավելի ակտիվ և երկարատև ներգրավվածությունն է խնդիրներ ունեցող ընտանիքի կյանքում: Այս առումով մասնակիցներն ընդգծում են սոցիալական աշխատողի գործառույթների վերանայման և կարողությունների զարգացման անհրաժեշտությունը.

> *«Մի սոցաշխատողն ունի 5000-ից ավելի ընտանիք: Պա՞րզ չի, որ ինքը չի կարող անհրաժեշտ ուշադրություն դարձնել առանձին ընտանիքի»:*

181. Գյումրիի ֆոկուս խմբերի մասնակիցները, որոնք հիմնականում սոցիալապես խոցելի խմբերից էին՝ միայնակ մայրեր, 50+ գործազուրկ կանայք, որոնց հիմնական գործառույթը թոռնիկների խնամքում զավակներին աջակցելն է, գործազուրկ տղամարդիկ, որոնցից մի քանիսն աշխատանքային միգրանտ են, շեշտում են երեխաների խնամքի, դաստիարակության և կրթության հարցում սոցիալական աջակցության (դասապատրաստում, սնունդ, հոգեբանական աջակցություն) կարևորությունը՝ ընդգծելով նման աջակցության դրական ազդեցությունը նաև ընտանեկան բռնության կանխման առումով:

182. Բռնություն վերապրած կանայք, ովքեր հոգեբանի կողմից աջակցություն են ստացել, խիստ կարևորում են այս միջամտությունը և ընդհանրապես, այն կանայք, ովքեր երկարատև աշխատել են հոգեբանի հետ թե՛ ընտանեկան կոնֆլիկտների ընթացքում, թե՛ բռնության դրվագներից հետո, քննարկման ընթացքում շատ ավելի ինքնավստահ էին և կարծես փորձել էին խորհել, վերլուծել իրենց փորձառությունն ու դասեր քաղել.

«Պետք է ստիպել տղամարդուն, որ նա քեզ հարգի: Ես ինքս հոգեբանի աջակցությամբ սահմաններ եմ գծել և վայելում եմ դա: Նա արդեն սկսել է հարգել ինձ, հաշվի նստել ինձ հետ»:

Երևան, բռնություն վերապրած կանանց խումբ

183. Շատերը նշում են, սակայն, թե հոգեբանական աջակցությունն ավելի արդյունավետ կարող է լինել, եթե տղամարդը ևս ներգրավված լինի և նման աջակցություն տրամադրվի ընտանեկան կոնֆլիկտների առաջացման վաղ փուլում: Սակայն, նշվում է նաև, որ տղամարդիկ ավելի թերահավատ են հոգեբանների աշխատանքի կարևորության հանդեպ և կարող են հրաժարվել, անգամ թույլ չտալ կնոջն օգտվել նման ծառայություններից: Գյուղաբնակ մասնակիցները նույնպես կարևորելով հոգեբանական աջակցությունը՝ նշում են, որ քաղաքում մարդիկ ավելի հակված են դիմել հոգեբանի, քանի գյուղում, որտեղ «հոգեբանին ու հոգեբույժին խառնում են իրար» (Ներքին Գետաշեն):

5.7. Շարունակական աջակցություն ընտանեկան բռնություն վերապրած անձանց

184. Բոլոր խմբերում մասնակիցների մեծամասնության կարծիքով՝ բռնության միջավայրից դուրս գալու միակ ելքը կնոջ ինքնուրունությունն է, ինքնաբավությունը՝ ապահովելու իր ու երեխաների կյանքի որակը, ինչին և պետք է միտված լինի աջակցությունը:

185. Երևանի երիտասարդ կանանց խմբի սակավաթիվ մասնակիցներ կարծում են, թե կինը ինքը պետք է ապահովի իր անկախությունն ու ինքնուրույնությունը.

«Կինը ինքը պետք է հզորանա ու իր անկախությունը ապահովի»:

«Կինը պետք է ինքը իր մեջ ուժ գտնի բռնությունից պաշտպանվելու համար»:

Երևանի երիտասարդ կանանց խումբ

186. Սակայն խմբի այլ մասնակիցներ, ինչպես նաև բռնություն վերապրած կանանց մեծամասնությունը մատնանշում է, թե բռնության զոհ դարձած կինը սովորաբար այնպիսի հոգեբանական և սոցիալ-տնտեսական վիճակում է գտնվում, որ ինքնուրույն, առանց որևէ աջակցություն չի կարող ապահովել կյանքի բարեկեցիկ որակ:

187. Բռնություն վերապրած կանայք, մասնավորապես, ինքնուրույն, ֆինանսապես անկախ դառնալու համար անհրաժեշտ աջակցության առումով նշում են մի շարք հիմնական կարիքներ՝ աշխատանք, մասնագիտություն, մշտական կացարան, բժշկական օգնություն, երեխայի խնամք, էմոցոնիալ վերականգնում՝ երկարատև հոգեբանական խորհրդատվության միջոցով, որոնք բավարարելով՝ իրենք հնարավորություն կունենան ստեղծել արժանապատիվ կյանք իրենց ու երեխաների համար:

188. Մասնակիցների մեծամասնությունն առավելապես կարևորում է բռնություն վերապրած կանանց աշխատանքով ապահովելու խնդիրը: Մասնակիցներից մեկը մի քանի ամիս ժամանակավոր կացարանում երեխայի հետ ապաստանելուց հետո դուրս էր եկել և բախվել ընտանիքի կարիքներն ապահովելու խնդրին.

«Ես երեխայիս հետ ապրում եմ վարձով բնակարանում, բնակարանը կիսում ենք մեկ այլ ընտանիքի հետ: Ամռանը աշխատում եմ երկու տեղ, հսկայական լողավազաններ եմ մաքրում և, 120.000 դրամ վաստակելով, հազիվհազ կարողանում եմ ընտանիքիս ծախսերը հոգալ: Ձմռանը վաստակում եմ ավելի քիչ և չգիտեմ՝ ինչպես կատարել կոմունալ վճարումներն ու ապրել»:

Երևան, բռնություն վերապրած կանանց խումբ

189. Ըստ մասնակիցների՝ ապաստարանում բռնություն վերապրած անձը կարող է ապրել միայն որոշակի ժամանակահատվածում, սակայն դրանից հետո նա նորմալ կենսագործունեության պետք է վերադառնա և առաջնային խնդիրը զբաղվածության հարցն է.

> *«Ես հիմա ապաստարանում եմ ապրում, սակայն փորձում եմ աշխատելու տարբերակներ գտնել: Առողջական խնդիրներ՝ զոբ և ողնաշարի ցավեր ունեմ, սակայն ցույց չեմ տալիս, գնում և ջերմոցում աշխատում եմ, որ գոնե մի օգուտ կարողանամ տալ»:*
>
> ***Երևան, բռնություն վերապրած կանանց խումբ***

190. Խնդրահարույց է նաև երեխաների խնամքն ու աշխատանքը զուգորդելու հարցը և դրա համար երեխայի խնամքի ցերեկային կենտրոններ են անհրաժեշտ:

191. Աշխատանք ձեռքբերելու և ընտանիքի նվազագույն պահանջները բավարարելու հարցում, ըստ մասնակիցների, կարող են օգտակար լինել մասնագիտական վերապատրաստումները.

> *«Եթե ես մասնագետ, թեկուզ վարսահարդար կամ դիմահարդար լինեի, ինձ համար շատ ավելի հեշտ կլիներ գումար վաստակել»:*
>
> ***Երևան բռնություն վերապրած կանանց խումբ***

192. Մասնակիցները բարձրաձայնում են նաև բնակարանային պայմանների խնդիրը՝ նշելով, որ բռնություն վերապրած կինը, որպես կանոն, թողնում է բնակարանը և ապրելու որևէ տեղ չունի:

> *«Խորհրդային միության տարիներին ամուսնալուծվող զույգը պետք է բաժաներ բնակարանը, և ամուսինը պարտավոր էր բնակարանի մեկ սենյակը տրամադրել կնոջը: Հիմա ինչո՞ւ նման օրենք չկա»:*
>
> ***Երևան, բռնություն վերապրած կանանց խումբ***

193. Բռնություն վերապրած կանայք նշում են, թե իրենք և/կամ իրենց երեխաները բժշկական օգնության կարիք են ունենում, քանի որ շարունակական բռնության հետևանքով, բազմաթիվ հիվանդություններ են ձեռք բերում, որոնց բուժումը հաճախ ենթադրում է նեղ մասնագիտական և երկարատև միջամտություն, մինչդեռ այն սովորաբար մատչելի չէ, և իրենք չեն կարողանում օգտվել նման ծառայություններից.

> *«Փոքր երեխաս էլ նյարդային խնդիրներ ունի, հատակին է պառկում, հարվածում ու լաց լինում: Առողջական խնդիրներ՝ զոբ և ողնաշարի ցավեր ունեմ, բայց ցույց չեմ տալիս, գնում և ջերմոցում աշխատում եմ, որ գոնե մի օգուտ տամ: Մեզ բուժվել է պետք, բայց դրա համար գումար է պետք...»*
>
> ***Երևան, բռնություն վերապրած կանանց խումբ***

194. Թեև ոչ մի խմբում մասնակիցներ չեն առանձնացնում իրավական աջակցության անհրաժեշտությունը, սակայն ֆոկուս խմբերում մի քանիսը նշում են, որ անձնական փաստաթղթերի վերականգման, ամուսնուն «թողած» սեփականության հանդեպ իրավունքի հետ կապված խորհրդատվության կարիք ունեն:

195. Հատկանշական է, որ բռնություն վերապրած այն կանայք, ովքեր դեռևս շարունակում են ապրել բռնարարի հետ, ընդհանրապես չեն խոսում նման աջակցության կարիքի մասին: Նրանց հիմնական կարիքը տեղեկատվության պակասն է.

> *«Ես չգիտեմ ում դիմել, ինչ անել, որ օգնեն ամուսնուս, երեխաներիս: Ամուսինս շատ է սիրում երեխաներին, բայց հոգեկան խնդիրներ ունի ու հենց խմում է, սկսում է ծեծել ինձ, երեխեքին... Ես վախենում եմ, երբ տեսնում եմ, թե աչքիս առաջ ոնց է տղաս փոխվում, դառնում հոր նման»:*

Երևան, բռնություն վերապրած կանանց խումբ

5.8. Ընկալումներ ընտանեկան բռնությունը կանխելու վերաբերյալ

196. Ընտանեկան բռնությունը կանխելու վերաբերյալ առաջարկները պայմանավորված են բռնության առաջացմանը նպաստող գործոնների և դրանց կարևորության ընկալմամբ: Այսպես, երևանյան խմբերում շեշտադրվում է *դաստիարակության, կրթության և իրազեկման միջոցով կանխարգելումը:*

197. Տղամարդկանց զգալի մասի կարծիքով՝ ամուսինների միջև լարվածությունը նվազեցնելու և բռնությունը կանխելու լավագույն տարբերակը երկուսի միջև *հաղորդակցությունն է, առանց որևէ մեկի միջամտության.*

> *«Ամուսինները պետք է խոսեն իրար հետ, ոչ թե պնդեն, թե «իմ ասածով ա լինելու»: Կինը պետք ա վստահ լինի, որ ինքը տղամարդու հետ հավասար իրավունքներ ունի ու այդ դիրքից ելնելով միայն՝ խոսի ամուսնու հետ»:*

198. Սակայն մասնակիցներից մեկը նշում է, որ ընտանիքներում, ուր հարաբերություններն ի սկզբանե հավասար հիմքերի վրա են, ուր որոշումները կայացվում են համատեղ, կոնֆլիկտները սովորաբար հենց այդպես էլ լուծվում են: Մինչդեռ լինում են այնպիսի դեպքեր, երբ առօրեական հաղորդակցությունն անգամ չի ստացվում, հատկապես երբ կան խնդիրներ, օրինակ՝ ամուսինը հարբեցող է, սոցիալական ու կենցաղային դժվարություններ կան ընտանիքում, ամուսինն ու կինն իրենց ընտանիքից ու շրջապատից ժառանգել են ավանդական կարծրատիպերն ու կին-տղամարդ փոխհարաբերության վարքի օրինակները: Նման դեպքերում անհրաժեշտ է դիմել *ինստիտուցիոնալ, մասնագիտացված օգնության*, օրինակ՝ հոգեբանի, սեքսոպաթոլոգի և այլն: Սակայն միևնույն ժամանակ շեշտվեց, որ հայաստանյան մշակույթում նման մոտեցումն ընդհանրապես տարածված չէ, որովհետև.

> *«Դե մենք ամեն ինչի մասնագետ ենք, էլ ի՞նչ դիմենք մասնագետի»:*

199. Կանանց խմբում անուղղակի լուծում են համարում նաև *համայնքային միջոցառումները*, օրինակ՝ մանկապարտեզում կամ դպրոցում որևէ հանդիպում կամ քննարկում, որտեղ անուղղակիորեն կարելի է խոսել ընտանեկան բռնության մասին, օրինակ՝ կնոջ և տղամարդու դերերի, ամուսինների հարաբերությունների, կոնֆլիկտների լուծման և ծնողավարության մասին: Վերջինս, ծնողավարության հմտությունները շեշտվում են նաև Շիրակի խմբերում:

200. Երևանյան խմբերում շեշտվում է արմատական փոփոխության համար անհրաժեշտ համագործակցությունը տարբեր կառույցների միջև.

> *«Հարկավոր է սկսել արմատներից՝ այն հարցից ,թե ինչպես է մեր հասարակությունը ընկալում բռնությունը: Հանրային կարծիքն ու գիտակցությունը փոխելու համար պետք են ինստիտուցիոնալ լուծումներ, անհրաժեշտ է փոխել մտածելակերպը: Պետք է լինի համագործակցություն, ոչ թե մրցակցություն: Հարկավոր է ստեղծել շահագրգռված կազմակերպությունների ու անձանց ցանց»:*
>
> ***Երևան, երիտասարդ տղամարդկանց խումբ***

201. Այս խմբերն ընդգծում են նաև *լրատվամիջոցների հնարավոր դրական դերը* ընտանեկան բռնություն կանխելու գործում, մասնավորապես դեպքերի լուսաբանման, իրազեկման և կարծրատիպերի այլակերպման հարցում.

> *«Ինձ հաջողվեց հասնել դատարանի վճռի բեկանմանը ու ստանձնել տղայիս խնամակալությունը մեծ մասամբ ՀԼՄ-ների կողմից իրականացված բանիմաց ու հետևողական լուսաբանումների շնորհիվ»:*

Երևան, բռնություն վերապրած կանանց խումբ

202. Մարզային խմբերում ընտանեկան բռնությունը կանխելու համար առանցքային է համարվում *զբաղվածության*, ու հատկապես տղամարդու զբաղվածության խնդրի լուծումը.

> *«Այ, որ գործ լինի, տղամարդն աշխատի, տուն բերի, ամբողջ օրը զբաղված լինեն, բռնություն էլ չի լինի»:*
>
> ***Գյումրի, կանանց խումբ***

203. Բոլոր խմբերում մասնակիցների մի մասը, իսկ բռնություն վերապրած կանանց մեծամասնությունը, հավատացած է, որ բռնությունն ընտանիքում հնարավոր է կանխել միայն բռնարարին *ավելի խիստ ու հետևողական պատասխանատվության* ենթարկելով և այդպիսով փոխելով այն տարածված պատկերացումը՝ թե բռնությունն ընտանիքում օրենքով պատժելի չէ, քանի որ այն ներընտանեկան խնդիր է: Այս մասնակիցները հակված են կարծել, թե ընտանեկան բռնության կանխարգելմանը միտված օրենքի նախագծի ընդունումը կարող է ավելի արդյունավետորեն կանխել ընտանեկան բռնությունը:

204. Քաղաքային համայնքների մասնակիցները կարևորում են նաև *սոցիալական աշխատողի և հոգեբանի հետ հետևողական աշխատանքը*՝ խնդիրներ ունեցող ընտանիքներում բռնությունը կանխարգելելու և կոնֆլիկտների էսկալացիան կանխելու առումով:

205. Այս մասնակիցները շեշտում են նաև կնոջ *իրազեկվածության* անհրաժեշտությունը՝ ընդգծելով, որ կնոջը պետք է կրթել և տեղեկացնել իր իրավունքների մասին:

206. Բոլոր խմբերում մասնակիցների զգալի մի մաս անխտիր կարևորում է *կրթության* դերը ընտանեկան բռնությունը կանխարգելելու գործում՝ շեշտելով, որ դեռ մանկապարտեզից երեխաները պետք է դաստիարակվեն և կրթվեն կնոջ և տղամարդու հավասարության սկզբունքներով, ավելի բարձր տարիքում պետք է ֆորմալ գիտելիք տրվի ընտանեկան փոխհարաբերությունների կառուցման մասին:

207. Բոլոր մասնակիցներն, առանց բացառության, համոզված են, որ ընտանեկան բռնությունը կանխելու *հիմնական խոչընդոտը իրավապահ մարմինների հանդեպ վստահության խնդիրն* է. վստահությունը չափազանց ցածր է:

208. Այդուհանդերձ, քննարկումներից հստակ է, որ մասնակիցների շրջանում ընտանեկան բռնությունը կանխելու ակնկալիքները որոշակիորեն ձևավորված չեն, ինչը թերևս հուշում է, որ մասնակիցներն իրականում խնդիրը չեն ընկալում որպես սոցիալական խնդիր, իրազեկված չեն տարբեր կառույցների գործառույթների մասին և այդ իսկ պատճառով հստակ չեն պատկերացնում, թե որ կառույցն ինչպես կարող է աջակցել բռնություն վերապրած անձին, ինչ ծառայություն կարող է և պետք է մատուցի:

6. Ոլորտում կարևորագույն լիազորություններ ունեցող, գործառույթներ իրականացնող և ծառայություններ մատուցող կառույցների պատկերացումները և ընկալումները ընտանեկան բռնության կանխարգելման քաղաքականության գործիքների մասին. հարցազրույցների արդյունքները

6.1. Իրազեկվածություն

6.1.1. Ընտանեկան բռնության սահմանումը

Հարցազրույցների ընթացքում մասնավորապես փորձ է արվել վեր հանել պետական կառույցներում ընտանեկան բռնության վերաբերյալ գոյություն ունեցող ֆունկցիոնալ կամ գործառութային սահմանումները, եթե այդպիսիք գոյություն ունեն, ինչպես նաև կառույցների ներկայացուցիչների ընկալումներն ընտանեկան բռնության վերաբերյալ:

209. «Ընտանեկան բռնությունը» սահմանվում է երեք փաստաթղթերով՝ 2014թ. Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենքով, 2011թ. Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագրով և 2014թ. նոյեմբերի 17-ի՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանով.

- «ընտանեկան բռնություն՝ ընտանիքի մեկ անդամի կողմից մյուսի նկատմամբ ֆիզիկական կամ սեռական կամ հոգեբանական բնույթի բռնի գործողությունների (բռնության) կիրառում կամ տնտեսական միջոցներից զրկում» (*Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենք*).
- «ընտանիքում տեղի ունեցող ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնություն, այդ թվում՝ ծեծ, աղջիկ-երեխաների նկատմամբ սեռական ոտնձգություն, օժիտի հետ կապված բռնություն, ամուսնու կողմից բռնաբարություն, կանանց սեռական օրգանների խեղում և կանանց համար վնասակար այլ ավանդապաշտական գործողություններ, ոչ-ամուսնական բռնություն և շահագործման հետ կապված բռնություն» (*Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիր*)
- «… ֆիզիկական և հոգեբանական բռնի գործողությունները, որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում, կամ նախկին (կամ ներկա) ամուսինների կամ զուգընկերների միջև՝ անկախ նրանից, թե կատարողը բնակվում է կամ բնակվել է տուժողի հետ նույն բնակարանում, թե՝ ոչ» (*ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրաման*)

210. Այսպիսով, ընտանեկան բռնության առավել համապարփակ սահմանումը տրվում է ՀՀ սոցիալական աջակցության մասին օրենքում, իսկ երկու այլ փաստաթղթերում բացակայում է բռնության այս կամ այն տեսակը: Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագրում ներառված չէ տնտեսական բռնությունը, իսկ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանում անդրադարձ է արվում միայն ֆիզիկական և հոգեբանական բռնությանը՝ թերևս առաջին տեսակում ներառելով նաև սեռական բռնությունը:

211. Հարցազրույցների ընթացքում պարզ է դառնում, որ Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենքին հղում են անում ՀՀ ԱՍՀՆ-ն և հարակից պետական կառույցները, ինչպիսիք են մարզպետարանների Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները, սոցիալական աջակցություն տրամադրող ՊՈԱԿ-ները, հետազոտության մասնակից այլ գերատեսչությունները, ոստիկանությունը և քննչական կոմիտեն: Իրավապահ մարմինների հիերարխիկ կառուցվածքի ներքևում գտնվող կառույցներում, օրինակ, ոստիկանության մարզային բաժանմունքներում, հղում այս օրենքին արդեն չի արվում:

212. Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագրին հղում ընդհանրապես չի արվում այս համատեքստում, ինչը թերևս փաստում է տարբեր փաստաթղթերով սահմանվող քաղաքականության հատվածականության մասին:

213. ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանն առանցքային փաստաթուղթ է համարվում Քննչական կոմիտեում և բոլոր հարցվածները փաստաթղթին հղում են անում՝ կարևորելով դրա դերը կառույցի կողմից ընտանեկան բռնությանն արձագանքելու գործում:

214. Ըստ փորձագետների՝ *պետական կառույցներում ընտանեկան բռնության մեկ ընդհանուր սահմանում կիրառելը բավականին բարդ խնդիր է*, քանի որ կոնկրետ սահմանումը պայմանավորված է ոչ միայն երևույթին արձագանքելու տվյալ կառույցի գործառույթներով, այլև այդ կառույցի ընդհանուր առաքելությամբ և խնդիրներով: Այսպես՝ ըստ ՀՀ ԱՍՀՆ-ի ներկայացուցչի՝

> *«Արդարադատության ոլորտի ներկայացուցիչները հանցակազմը որոշելու համար պետք է գործ ունենան չափելի երևույթների հետ: Եթե ֆիզիկական բռնությունը ակնհայտ է և ինչ-որ իմաստով չափելի, ապա նույնը չի կարելի ասել հոգեբանական և տնտեսական բռնության մասին: Որոշ դեպքերում հնարավոր է տնտեսական միջոցներից զրկման դեպքերը հայտնաբերել, սակայն հոգեբանական բռնության դեպքում խնդիրը ավելի է բարդանում: Այն ակնհայտ է դառնում, եթե հանգեցնում է ֆիզիկական բռնության, կյանքին կամ առողջությանը վնասի:*
>
> *Արդարադատության ոլորտի հիմնական գործառույթները կանխարգելելն ու հանցագործություն կատարած անձին պատասխանատվության ենթարկելն է: Եվ կան հստակ չափանիշներ, թե որոնք են համարվում թեթև (օրինակ՝ երկու ապտակ) կամ ծանր հանցագործություններ (օրինակ՝ դանակահարություն): Ընտանեկան բռնությունն էլ է նույն տրամաբանությանը ենթարկվում»:*

215. Այս կարծիքը կիսում են նաև արդարադատության ոլորտի ներկայացուցիչները՝

> *«Ընտանեկան բռնություն» տերմինը քրեաիրավական կատեգորիա չէ. այն բաժանվում է մի քանի մասերի: Ընտանեկան բռնությունը ենթադրում է քրեաիրավական պատասխանատվություն, եթե կիրառվել է բռնություն, խոշտանգում, առողջությանը վնաս պատճառող, կյանքին սպառնալիք հանդիսացող գործողություններ, սեռական բնույթի ոտնձգություններ: Քրեաիրավական միջոցները բացառիկ են, և հնարավորության դեպքում պետք է փորձել խնդիրը կանխել մինչ քրեաիրավական դաշտ մտնելը:*
>
> ***ՀՀ գլխավոր դատախազություն***

216. Այդուհանդերձ, իրավապահ մարմինների ներկայացուցիչները ևս կարծում են, որ հոգեբանական և տնտեսական բռնության դրսևորումները երբեմն կարող են հանգցնել ծանր հետևանքների, որոնց դեպքում արդեն կիրառելի են քրեաիրավական միջոցներ: Սակայն մինչ այդ, իրավական գործիքներ, որոնք այդ կառույցներին թույլ կտան կանխել հոգեբանական կամ տնտեսական բռնությունը, ներկա պրակտիկայում գոյություն չունեն.

> *«Անկասկած, տնտեսական բռնությունը ծայրահեղ դրսևորումներ է երբեմն ստանում., օրինակ՝ տղամարդը ֆինանսապես ճնշում է կնոջը, որ հանկարծ չինքնուրույնանա, երբեմն նույնիսկ արգելում խանութ գնալ կամ պատուհանից նայել: Այս ամենին տալ իրավական գնահատական, սակայն, ներկա պայմաններում հնարավոր չէ»:*
>
> ***Երևանի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժին***

217. Հասարակական կազմակերպություններն ընտանեկան բռնությունը սահմանելու համար առաջնորդվում են այս ոլորտում Եվրոպայի խորհրդի հիմնական փաստաթղթերից մեկով՝ Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիայով (Ստամբուլի կոնվենցիա), ըստ որի «բ. *ընտանեկան բռնություն նշանակում է ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության գործողությունները, որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում կամ նախկին կամ ներկա ամուսինների կամ զուգընկերների միջև, անկախ նրանից, թե արդյոք կատարողը բնակվում է կամ բնակվել է տուժողի հետ նույն բնակարանում*» (Հոդված 3): Թեև հարցված կազմակերպությունները քաջատեղյակ են նաև ՀՀ սոցիալական աջակցության մասին օրենքի սահմանմանը, սակայն սահմանումների, ընտանեկան բռնության դրսևորումների մասին խոսելիս ավելի հաճախ հղում է արվում Ստամբուլի կոնվենցիային:

218. ՄԻՊ-ի գնահատմամբ՝ ընտանեկան բռնության սահմանումները օրենսդրական շրջանակում հիմնականում համապատասխանում են Ստամբուլի կոնվենցիայի չափանիշներին: Սակայն, առավել ակնհայտ խնդիրներ են առկա պետական կառույցների, հատկապես իրավապահ մարմինների աշխատակիցների ընկալումների մակարդակում.

> *«Ընտանեկան բռնությունը հաճախ նույնացվում է ընտանիքի շրջանակներում կիրառվող ֆիզիկական բռնության հետ: Բռնության զոհերի հետ խոսելիս, սակայն, ակնհայտ է դառնում, որ վերջիններս բազմիցս ենթարկվել են ոչ միայն ֆիզիկական, այլև տնտեսական և հոգեբանական բռնության: Դրանք սովորաբար որպես բռնություն չեն ընկալվում»:*

219. Ընկալումները, որոնք ձևավորվում են հայաստանյան հասարակությանը հատուկ մշակութային միջավայրում, որը հաճախ բնութագրվում է որպես հայրիշխանական, ավանդական, պայմանավորում են իրավապահ մարմինների աշխատակիցների վերաբերմունքն ընտանեկան բռնության և դրան արձագանքելու հանդեպ՝ հաստատելով ընտանեկան բռնության դրսևորումների դեպքում այդ մարմիններին դիմելու վերաբերյալ ֆոկուս խմբերի մասնակիցների կարծիքները, թե հաճախ ոստիկանն ու դատավորը խնդրին արձագանքում են որպես միայն ներընտանեկան խնդիր:

6.1.2. Հանրային իրազեկվածություն

220. Ըստ փորձագետների՝ վերջին տասնամյակում ընտանեկան բռնության վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը բավականին բարձրացել է, շնորհիվ ՀԿ-ների աշխատանքի, մասնավորապես ամբողջ հանրապետությունում կազմակերպվող տարբեր մասնագիտական և ոչ մասնագիտական խմբերի համար կազմակերպվող դասընթացների շնորհիվ, ԶԼՄ-ների աշխատանքի շնորհիվ, որոնք բարձրաձայնում են ընտանեկան բռնության դեպքերի մասին, թեև այստեղ որոշակի վերապահումներ կան, որոնց մասին կխոսվի ստորև, ինչպես նաև վերջին հինգ տարվա ընթացքում ոստիկանության աշխատանքի շնորհիվ:

221. Հանրության ավելի իրազեկված լինելու դրսևորումներ են համարվում.

- ընտանեկան բռնությունը որպես խնդիր ընդունելու հանգամանքը, որը դեռևս տաս տարի առաջ ժխտվում էր. նախկինում մեծամասնությունը չէր ընդունում, որ ընտանեկան բռնությունը Հայաստանում ոչ թե եզակի, այլ տարածված երևույթ է: Ընդ որում, խոսքը ոչ միայն ֆիզիկական բռնության, այլ բռնության այլ տարատեսակների մասին է.
- այն հանգամանքը, որ երևույթը համարվում է անընդունելի երևույթ, մինչդեռ ոչ այնքան վաղուց այն դիտարկվում էր որպես զուտ ներընտանեկան, առօրեական խնդիր.
- ոստիկանության տվյալները. մարդիկ ավելի շատ են հակված դիմել իրավապահ մարմիններին իրենց հանդեպ ընտանիքում գործադրված բռնության բողոքներով:

222. Այդուհանդերձ, գրեթե բոլոր փորձագետների կարծիքով, դեռևս մեծածավալ աշխատանքի կարիք կա՝ հանրային իրազեկման մակարդակը բարձրացնելու նպատակով, քանի որ արված աշխատանքի արդյունքում ընտանեկան բռնության հանդեպ հանրային վերաբերմունք դեռևս ձևավորված չէ: Եթե մասնավոր դեպքերում ընտանեկան բռնության այս կամ այն դրսևորումը համարվում է անընդունելի, ապա որպես երևույթ հասարակության կողմից այն միանշանակորեն դատապարտելի, անհանդուրժելի և անընդունելի երևույթ դեռևս չի համարվում.

> *«Մեր ավանդույթների պատճառով վատ վերաբերմունք ձևավորված չէ երևույթի հանդեպ: Եթե նույնիսկ այն ընկալվում է որպես բացասական երևույթ, ապա այդ մասին չի բարձրաձայնվում»:*
>
> ***Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ***

223. Ոլորտում լիազորություններ ունեցող և ծառայություններ մատուցող կառույցների ներկայացուցիչների այս գնահատականը հաստատվում է նաև ֆոկուս խմբերի արդյունքներով:

224. Առանձին փորձագետներ հանրային վերաբերմունք ձևավորելու գործում կարևորում են տեղայնացված ուղերձների մշակման խնդիրը՝ շեշտելով, որ ընտանեկան բռնության դեմ պայքարի և այն կանխելու համար անհրաժշետ է մշակել ուղերձներ, որոնք խարսխված կլինեն հայաստանյան իրողությունների, մշակութային առանձնահատկությունների և հանրային արժեքների վրա: Մասնավորապես, նրանց կարծիքով՝ իրազեկման քարոզարշավների հաջողության գրավականն ընտանեկան բռնության կանխման անհրաժեշտության մասին խոսելն է առողջ ընտանիքի համատեքստում, ի տարբերություն կնոջն ու տղամարդուն հակադրելու արմատական-ֆեմինիստական մոտեցումներին՝

> *«Իրազեկումը և քարոզարշավը պետք է ուղղված լինեն «առողջ ընտանիքի» գաղափարին, բանավեճեր պետք է կազմակերպվեն, որոնք ուղղված կլինեն ոչ միայն գենդերային հավասարության, այլև առավել լայն հասարակական խնդիրներին: Օրինակ՝ կանանց և տղամարդկանց հավասարությունը կարելի է դիտարկել ընդհանուր իրավահավասարության խնդիրների շրջանակներում: Ճիշտ մոտեցում ցուցաբերելու դեպքում հնարավոր է հասնել վերաբերմունքի փոփոխության: Մանկապարտեզից և դպրոցից սկսած՝ պետք է մշակույթ ձևավորել: Այլապես, մենք կունենանք այն, ինչ արտահայտում է հետևյալ իրավիճակը. մի բանաստեղծ ինձ անեկդոտ է պատմում. «Հարևանը բղավոց է լսում՝ օգնեցե՛ք, օգնեցե՛ք, գնում, տեսնում է՝ հարևանը կնոջը ծեծում է, ասում է՝ լավ էլ ծեծում ես, էլ ինչ օգնենք»:*
>
> ***Հանրային խորհուրդ***

225. Ոմանք շեշտում են նաև իրազեկման քարոզարշավներում հայ ավանդույթների ճիշտ ներկայացման անհրաժեշտությունը՝ նշելով, որ այն, ինչ հայաստանյան հանրությունն այսօր ընկալում է որպես ազգային արժեք և ավանդույթ, իրականում բավականին ձևախեղված, մահմեդականության և ռուսական մշակույթի ազդեցությամբ այլակերպված նորմեր են, որոնք չեն արտացոլում հայ մշակութային արժեքներն ու ավանդույթները, մասնավորապես կին-տղամարդ փոխհարաբերությունների և ընտանեկան դերերի համատեքստում.

> *«Մեր ավանդույթներից են, օրինակ, 10-11րդ դարերում համայնքի կյանքը կանոնակարգող առաքելական եկեղեցու կողմից կազմված կանոնագրքում ամրագրված վարքի կանոնները: Այն կնոջ և տղամարդու միջև հավասարություն ենթադրող կանոնների ցանկ է: Օրինակ՝ «Մի շնացի՛ր» պատվիրանը խախտելու կամ ամուսնալուծության դեպքում ավելի խիստ պատիժ էր սահմանվում տղամարդու, քան կնոջ համար: Հայ ավանդական ընտանիքում ո՞ր տան մեծը թույլ կտար տղային մատով դիպչել իր կնոջը: Մենք շեշտում ենք, որ մենք պետք է վերադառնանք մեր ավանդույթներին, իսկ այնպիսիք, ինչպիսիք են «Бьет – значит любит», ոչ մի կապ չունեն մեր արժեքների ու ավանդույթների հետ, այլ սովետական ժամանակաշրջանում ռուսական ազդեցության հետևանք են»:*
>
> ***ՀԱԵ Քրիստոնեական դաստիարակության կենտրոն***

226. Հանրային իրազեկվածության մակարդակը բարձրացնելու համար փորձագետները շեշտում են ԶԼՄ-ների հետ աշխատանքի կարևորությունը: Այս գործում կարևորվում է մի քանի մոտեցում. ա) լրագրողների կարողությունների զարգացում. բ) հեռուստատեսային ծրագրերի պատրաստման և ֆիլմերի ընտրության չափանիշների ներդրում, որոնք պետք է բացառեն ընտանեկան բռնությանը նպաստող գործոնների վերարտադրությունը. գ) անմիջական աշխատանք պետական կառույցների, մասնավորապես ՀՀ ԱՍՀՆ-ի հետ, որոնց գործառույթներն անմիջականորեն ներառում են ընտանեկան բռնությանն արձագանքելու և այն կանխելու խնդիրները:

227. Մի շարք փորձագետներից կարևորում են ընտանեկան բռնության դեպքերի լուսաբանման համար անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների զարգացումը՝ մասնավորապես շեշտելով դեպքի նախաքննության ընթացքում դեպքի մանրամասների բացահայտման էթիկական խնդիրների անհրաժեշտությունը: Նշվում է, որ երբեմն լրագրողներն այնպիսի մանրամասներ են հրապարակում ընտանիքի վերաբերյալ, որոնք հանգեցնում են երկրորդային զոհացման կամ խաթարում են բռնություն վերապրածի հանրային կերպարը:

228. Ինչպես ֆոկուս խմբերի մասնակիցներից շատերը, այնպես էլ հարցազրույցների մասնակիցները կարևորում են ԶԼՄ-ների դերը ընտանեկան բռնությունը կանխելու գործում՝ նշելով, որ հեռուստահաղորդումների և ֆիլմերի ընտրությունը, հատկապես հանրային հեռուստատեսությամբ, պետք է հիմնված լինի մարդու հիմնարար արժեքների հանդեպ հարգանքի վրա և բացառի կնոջ հանդեպ խտրական վերաբերմունքը.

> *«Անչափահասների կողմից բռնության կիրառմանն ընդհանրապես շատ է նպաստում հեռուստատեսությունը, որը տարբեր հեռուստասերիալներով գովազդում է այսպես կոչված «գողական» աշխարհը: Ընդհանրապես, այս հեռուստասերիալները, որոնք հիմնականում ռուսական կա թուրքական բնօրինակների կրկնօրինակությունն են, քարոզում են այս մշակույթներին հարիր արժեքներ, և մենք աստիճանաբար հետ ենք վարժվում մեր ավանդական արժեքներից»:*
>
> ***Ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժին***

229. Պետական կառույցների հետ աշխատանքում առանցքային է համարվում համապատասխան ուղերձների հեռարձակումը, որը հնարավորություն է ընձեռում հանրությանը հասցնել այս ոլորտում քաղաքականության իրականացման առաջնահերթություններն ու մոտեցումները.

> *«Նախկինում ԱՍՀՆ-ը ուներ սեփական հեռուստատեսային նախագիծը, որ կոչվում էր «Սոցիալական ժամ»: Այն թույլ էր տալիս տարին մի քանի անգամ հանրությանը ճիշտ տեղ հասցնել որոշակի մեսիջներ: Միջնորդավորված լուսաբանման պարագայում դրանք հաճախ կորչում են»:*
>
> ***Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն***

6.2. Աջակցություն ընտանեկան բռնություն վերապրած անձանց

230. Հարցազույցների արդյունքները վերլուծելիս՝ ընտանեկան բռնություն վերապրած անձանց տրամադրվող աջակցությունը կարելի է դասակարգել ըստ արձագանքման հրատապության:

231. *Անմիջական և հրատապ արձագանք ընտանեկան բռնության դեպքերին*, եթե զոհը, բռնություն հրահրողը կամ երրորդ որևէ անձ բարձրաձայնել է դրանց մասին: Նման արձագանք տրամադրող ֆորմալ կառույցը ոստիկանությունն է, իսկ ոչ ֆորմալ կառույցների դերի և պրակտիկայի մասին տե՛ս «*Բռնություն վերապրած անձի վարքը*» բաժինը:

232. Հրատապ արձագանքը ներառում է բռնություն վերապրած անձի անվտանգության խնդիրը, որը ներկա պրակտիկայում ապահովվում է բռնարարից նրան հեռացնելով: Եթե բռնություն վերապրած անձի սոցիալական միջավայրը չի ապահովում նրան ժամանակավոր կացարանով և չի կարողանում երաշխավորել նրա անվտանգությունը, ապա դա ապահովում են հասարակական կազմակերպությունները՝ տրամադրելով նրան ժամանակավոր կացարան՝ ապաստարան: Քանի որ Հայաստանում ապաստարաններ տրամադրում են միայն կանանց խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունները, ապա նման աջակցություն տրամադրվում է միայն կանանց և նրանց խնամքի տակ գտնվող երեխաներին, իսկ եթե բռնություն վերապրած անձն, օրինակ, տարեց տղամարդ է, ապա նրան ապաստարանով ապահովող կառույց Հայաստանում գոյություն չունի:

233. *Շարունակական աջակցություն ընտանեկան բռնություն վերապրած անձին.* բռնության դեպքին արձագանքելուց հետո՝ բռնություն վերապրած անձի սոցիալ-հոգեբանական վերականգնման և հետագա կյանքի բարեկեցիկ որակն ապահովելու համար անհրաժեշտ աջակցություն:

234. Աջակցության այս երկու տեսակների պրակտիկան, խնդիրներն ու կարիքները վերհանելու համար դիտարկվել են մասնավորապես առկա *ուղղորդման մեխանիզմները* և *ենթակառուցվածքները*:

6.2.1. Անմիջական արձագանք ընտանեկան բռնության դեպքերին

235. Ընտանեկան բռնության դեպքերին անմիջականորեն արձագանքելու և բռնություն վերապրած անձին աջակցություն տրամադրելու մեխանիզմները ներառում են ընտանեկան բռնություն վերապրած անձի նույնականացման և ուղղորդման մեխանիզմները: Այս մեխանիզմները և պատասխանատու կառույցները սահմանվում են 2014 թվականին ընդունված «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ին ընդունված «Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների լիազորությունների իրականացման և սոցիալական ծառայությունների տրամադրման կարգն ու պայմանները սահմանելու մասին» N 1061-Ն որոշմամբ, որի Հավելված N 1-ի[4] 17-րդ կետով՝ «*Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի սահմանած ուղղակի և անուղղակի չափորոշիչների կիրառմամբ «ենթադրյալ» ընտանեկան բռնության ենթարկված անձի հայտնաբերման դեպքում [մարզպետարանի, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանումները՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունը և սոցիալական աջակցության տարածքային բաժինը] տալիս է եզրակացություն նախնական նույնացման մասին և ընտանեկան բռնության ենթարկված անձին ուղղորդում է որպես ժամանակավոր օթևան՝ կացարան տրամադրող կազմակերպություն:*»

236. 2014 թվականին «Սոցիալական աջակցության մասին» օրենքն ընդունելուց հետո մշակվեցին «Ընտանեկան բռնության ենթարկված անձանց նախնական նույնացման չափորոշիչներ» և «Ընտանեկան բռնության ենթարկված անձանց ուղղորդման ուղեցույց», որոնք համապատասխանաբար հաստատվել են ՀՀ ԱՍՀ նախարարի՝ 2015թ. հոկտեմբերի 20-ի Ն 144-Ա/1 և 2015թ. դեկտեմբերի 10-ի Ն 177-Ա/1 հրամաններով: Այս մեխանիզմները պետք է հիմք ծառայեին սոցիալական ծառայություններ մատուցող առնվազն պետական կառույցների՝ ՀՀ ԱՍՀՆ-ի ենթակայության տակ գտնվող սոցիալական ծառայությունների գործունեության համար, սակայն հարցազրույցների ընթացքում պարզվում է, որ այս գործիքները գործնականում դեռևս համատարած կիրառվում չեն գտել: Թեև վերապատրաստումներ են իրականացվել սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների և բաժինների աշխատակիցների համար, սակայն թե՛ ընդգրկվածության, թե՛ գործնական կիրառման առումով դեռևս բավականին լայնածավալ աշխատանքներ են անհրաժեշտ, որպեսզի սոցիալական աշխատողների համար այս գործիքները դառնան ֆունկցիոնալ, աշխատանքային գործիքներ:

> *«Ընտանեկան բռնության ենթարկված անձանց նախնական նույնացման չափորոշիչները և ուղղորդման ուղեցույցը նախատեսված են ԱՍՀՆ ենթակայության տակ գործող սոցիալական ծառայությունների համար:... Վերջին շրջանում նախարարությունը էական ռեսուրսներ էր ներդրել և Երևանի ու Արարատի մարզում սոցիալական ծառայությունների աշխատակիցների համար վերապատրաստման դասընթացներ էր կազմակերպել: Մասնակիցների հետաքրքրությունը, սակայն, մեծ չէր, նրանց միայն 30%ն էր լսում մատուցվող նյութը:»*
>
> ***Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն***

237. Նմանատիպ, թեև ընդգրկունության առումով ավելի սահմանափակ գործիք է մշակվել նաև 2014թ. ՀՀ ԱՆ, Վերարտադրողական առողջության, պերինատալոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտի և ՄԱԿ-ի բնակչության զարգացման հիմնադրամի ջանքերով՝ «Սեռական բռնության ենթարկված անձանց բժշկական օգնության կազմակերպման և տրամադրման սկզբունքները» կլինիկական ուղեցույցը: Սակայն հարցազրույցների մասնակիցները չեն նշում գործնականում այս ուղեցույցի կիրառման մասին:

238. Իրավապահ մարմինների համար մշակված և վերադասի կողմից հաստատված համանման ուղեցույցներ գոյություն չունեն, թեև կան բռնություն վերապրած անձանց որոշակի խմբերի հետ

[4] «Հայաստանի Հանրապետության մարզպետարանի, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանումների՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալության և սոցիալական աջակցության տարածքային բաժնի լիազորությունների իրականացման և սոցիալական ծառայությունների տրամադրման կարգն ու պայմանները»

աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ ուղեցույցներ՝ գերազանցապես մշակված միջազգային գործընկերների աջակցությամբ, օրինակ՝

- Ղամբարյան, Ա., Թումասյան, Դ. 2015թ., Երեխաների սեռական անձեռնմխելության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները. Ձեռնարկ քննիչների համար. Երևան.
- Թումասյան, Դ., Գրավեսոն, Ք. 2016թ., Օրենքի հետ առնչվող երեխաների նկատմամբ վերաբերմունքի ընդհանուր կանոններն ու առանձնահատկությունները. Ձեռնարկ քննիչների համար. Երևան.
- Թումասյան, Դ., Յորդաշ, Ու. 2017թ., Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը. Երևան:

239. Բռնություն վերապրած անձի նույնականացման և ուղղորդման չափանիշներ և մեխանիզմներ են առաջարկում ծառայություն մատուցող ՀԿ-ները, օրինակ՝ «Կանանց աջակցման կենտրոն. 2016. Ընտանեկան բռնությունից տուժածների հետ աշխատանքի ուղեցույց. Երևան»: Սակայն այս ուղեցույցների կիրառման վերաբերյալ տեղեկություններ հարցազրույցների ընթացքում չեն հավաքվել (տե՛ս «Մեթոդաբանություն» բաժինը):

240. Ուղղորդման պրակտիկային օժանդակող մեկ այլ ռեսուրս է առաջարկում ՀՀ ԱՍՀՆ Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտը, որը քարտեզագրել է ոլորտում ծառայություններ մատուցող կազմակերպությունները և այս տեղեկատվությունը հասանելի դարձրել ՀՀ ԱՍՀՆ պաշտոնական կայքում: Սակայն ինչպես նշում է ինստիտուտի ներկայացուցիչը՝ քարտեզը «պարբերական թարմացման կարիք ունի»:

241. Մեկ այլ ձեռնարկ է մշակվել «Սոցիալական արդարություն» ՀԿ-ի կողմից, որի նպատակն է նպաստել ընտանեկան բռնություն վերապրած անձի իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև ընդհանուր ինֆորմացիոն դաշտում տեղեկատվություն ապահովել բռնություն վերապրած անձանց աջակցություն տրամադրող հասարակական կառույցների վերաբերյալ.

> *«Վստահորեն կարող եմ ասել, որ շտեմարանում տեղ գտած բոլոր ՀԿ-ներն էլ կարող են «զոհի մատից փուշ հանել», եթե դեռևս գործում են: Ընդ որում ՀԿ-ները դասակարգված են ըստ գործունեության տեսակի, տեղակայման տարածքի ու թիրախ խմբի: Այսինքն, հեշտությամբ կարելի է գտնել Արաբկիրում բնակվող երեխայի համար անհրաժեշտ ծառայությունը մատուցող ՀԿ-ն:»*
>
> ***«Սոցիալական արդարություն» ՀԿ***

242. Երեխաներին և ընտանիքին հասանելի սոցիալական ծառայությունների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն է առաջարկում նաև *Երեխաներին և ընտանիքներին աջակցող սոցիալական ծառայությունների շտեմարանը (*Մ. Անտոնյան, Մ. Պետրոսյան, Ե. Հարությունյան, Ա. Սարգսյան. 2015*)*, որն ուղղված է երեխաների պաշտպանության ոլորտի մասնագետներին ու շահագրգիռ բոլոր դերակատարներին: Այն ներառում է ոլորտում գործող կառույցների կողմից իրականացվող ծրագրերի, տրամադրվող ծառայությունների մասին տվյալներ և օգտակար այլ տեղեկություններ:

243. Հատկանշական է սակայն, որ ծառայություն մատուցողները, օրինակ՝ ոստիկանության աշխատակիցները, որոնք բարձրաձայնում են նման տեղեկատվության կարիքի մասին, նմանատիպ շտեմարաններին ծանոթ չեն: Հարցազրույցներից ակնհայտ է դառնում, որ տեղեկությունների ամբողջականացման, համակարգման, թարմացման և դրանց մատչելությունն ու հասանելիությունն ապահովելու համար «մեկ պատուհանի» սկզբունքի կիրարկման զգալի կարիք կա:

244. Ընտանեկան բռնության դեպքերում ուղղորդման պրակտիկան թերևս կարելի է բաժանել երկու խմբի՝ երբ տեղի է ունենում ֆիզիկական բռնության շարունակական դրսևորում և ընտանեկան բռնության այլ դրսևորումներ (տե՛ս «Բռնություն վերապրած անձի վարքը» բաժինը): Երկրորդ դեպքում ուղղորդում որպես այդպիսին գրեթե չի լինում, կամ եթե լինում է, ապա տուժողն անձամբ կամ ՀԿ-ի միջնորդությամբ դիմում է սոցիալական աջակցություն տրամադրող պետական կամ հասարակական կառույցներ, հիմնականում այլ համատեքստում (օրինակ՝ հոգեկան հիվանդության, մտավոր

զարգացման, հոգեբանական խնդիրների, աղքատության հետևանքների մեղմացման), և ոչ թե ընտանեկան բռնության արդյունքում տուժելուն միտված աջակցություն ստանալու համար:

245. Իսկ առաջին դեպքում, երբ ընտանիքի անդամը տուժել է բռնության ֆիզիկական դրսևորման արդյունքում, ուղղորդման պրակտիկայի հետագիծը հետևյալն է. *բռնություն վերապրած անձը դիմում է հանրային կառույց՝ հիմնականում մարզպետարան կամ ՏԻՄ կառույց, ՀԿ կամ ոստիկանություն*:

246. Եթե ընտանեկան բռնություն վերապրած անձն անձամբ կամ որևէ կառույցի միջնորդությամբ դիմում է մարզպետարան՝ մասնավորապես Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին, կախված անձի վիճակից՝ աշխատակիցն նրան ուղղորդում է համապատասխան կառույցներ՝ ոստիկանություն, պոլիկլինիկա, հոգեբանական կենտրոն, հոգեբուժարան: Ըստ փորձագետների՝ թերևս ամենամեծ խնդիրն այս դեպքում հրատապ արձագանքի կազմակերպումն է, ինչին խոչընդոտում է վարչարարությունը՝ զգալիորեն դանդաղեցնելով գործընթացը: Արդյունքում, կրկին ելնելով մասնավոր դեպքի առանձնահատկություններից, բաժնի աշխատակիցը երբեմն որոշում է շրջանցել վարչարարությունը և հիմնվել սեփական սոցիալական կապիտալ վրա.

> *«Մեզ դիմելուց հետո արագ արձաքանքելու համար հաճախ հիմնվում ենք մեր իսկ կապերի վրա, որովհետև պետական կառույց լինելով, մենք չենք կարող անմիջապես արձագանքել և աջակցել բռնության ենթարկված անձին, եթե փորձենք առաջնորդվել առկա կանոնակարգմամբ: Օրինակ՝ որպեսզի ես որևէ տեղեկատվություն ստանամ որևէ կառույցից/հասցեատերից, ես, որպես պետական կառույց, պետք է հարցում ներկայացնեմ, որը պետք է հասցեատի փոխմարզպետը կամ մարզպետը: Մինդեռ հենց այդ պահին բռնության ենթարկված կինը մնացել է փողոցում, իսկ հարցումը ձևակերպելը, ուղարկելը, պատասխան ստանալը տևում է առնվազն հինգ օր:»*
>
> ***Շիրակի մարզպետարանի Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին***

247. Մեկ այլ խնդիր, որի մասին նշում են փորձագետները, ընտանեկան բռնություն վերապրած անձանց համար հասանելի *ծառայությունների և դրանց մասին տեղեկատվության մատչելիությունն* է, որը հատկապես սուր է դրսևորվում գյուղական համայնքներում.

> *«Ոստիկանությունը պետք է լինի միջամտություն իրականացնող վերջին մարմինը, մինչ այդ հսկայական աշխատանք պետք է տանեն հոգեբանը և սոցիալական աշխատողը: Մինչդեռ այժմ գոյություն ունեցող ծառայությունները բավարար չեն, հիմնականում գործում են քաղաքային համայնքներում, հասանելի և մատչելի չեն, ինչպես նաև դրանց վերաբերյալ տեղեկատվությունը հաճախ հասանելի չէ:»*
>
> ***Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ***

248. Հատկանշական է, որ ուղղորդման շղթայում դերակատարների վերաբերյալ տեղեկատվության պակասի մասին նշում են նաև իրավապահ մարմինների ներկայացուցիչները, թեև ինչպես նշվել է ավելի վաղ, տեղեկատվական որոշ ռեսուրսներ արդեն մշակված են.

> *«Գործերի հետաքննության ժամանակ երբեմն կարիք է լինում տուժածին ուղղորդելու դեպի որևէ մասնագիտական կառույց, հաճախ հոգեբանական: Գյումրիում երեխաներին հաճախ ուղղորդում ենք հոգեբանական կենտրոն, որի հետ համագործակցությունը շատ դրական է և արդունավետ: Դեպք ենք ունեցել, երբ սեռական բռնության ենթարկված անչափահասին ուղղորդել ենք UMCOR, քանի որ այնպիսի վիճակում էր, որ մեր հոգեբանական կենտրոնի աջակցությունն էլ արդեն բավարար չէր: Անհրաժեշտ կառույցների ցանկ չունենք, սովորաբար առաջնորդվում ենք մեր կամ մեր կոլեգաների տեղեկատվությամբ, օրինակ՝ վերոնշյալ դեպքում UMCOR-ին հղում արեց 6-րդ վարչությունը: Համապատասխան կառույցների մասին տեղեկանում ենք նաև վերապատրաստումների ժամանակ:»*
>
> ***Ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժին***

249. Իրավապահ մարմնին դիմելուց հետո արձագանքը հիմնականում չի տարբերվում անձի հանդեպ կատարված իրավախախտումների այլ դեպքերով ընդհանուր պրակտիկայից: Արձագանքը բավականին գծային է. հիմնականում մասնավոր՝ բռնություն վերապրած անձի կողմից հաղորդում ոստիկանություն, այնուհետև ոստիկանության կողմից հետաքննության իրականացում, արդյունքում՝ իրավապահ մամինների կողմից քրեական գործի հարուցում, հարուցման մերժում կամ կարճում, այնուհետև նախաքննություն՝ Քննչական կոմիտեի աշխատակիցների ներգրավմամբ, որն սկսվում է քրեական գործ հարուցելուց հետո և ավարտվում մեղադրական եզրակացություն կազմելով և գործը դատարան ուղարկելու մասին որոշում կայացնելով կամ քրեական գործի վարույթը կարճելով:

Պատկեր 2. Իրավապահ մարմինների արձագանքի գործող պրակտիկան



250. Ուղղորդման այս գծայնությունը, սակայն, կարող է խախտվել, եթե գործընթացում ներգրավվում է հասարակական կազմակերպություն: Երբեմն հենց ՀԿ-ներն են, որ ընտանեկան բռնություն վերապրած անձին ուղղորդում են ոստիկանություն՝ իրենց գործունեության ընթացքում բացահայտելով ընտանեկան բռնության դեպք: ՀԿ-ների ներգրավվածությունը միայն հաղորդման գործընթացով չի սահմանափակվում, այլ կարող է շարունակվել իրավապահ մարմինների արձագանքի այլ փուլերում. պրակտիկայում կան դեպքեր, երբ ՀԿ-ն տրամադրում է ապաստարան, քանի որ պետական ապաստարան դեռևս չկա, ինչպես նաև մասնագիտական աջակցություն, մասնավորապես հոգեբանական և փաստաբանական աջակցություն քրեական գործի վարույթի ողջ ընթացքում:

251. Հատկանշական է, որ առողջապահական, կրթական և սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցներից դեպի ոստիկանություն ուղղորդման դեպքերը սակավաթիվ են: Առաջնային բուժօգնության օղակի՝ պոլիկլինիկայի ղեկավարության և բժշկի հետ հարցազրույցից պարզ է դառնում, որ բժիշկները հաճախ են առնչվում բռնություն վերապրած հաճախորդների հետ կամ հաճախորդների հետ, ովքեր կանխատեսում են հավանական բռնություն իրենց ընտանիքներում, հատկապես տարբեր նյութերից կախվածությամբ տառապող ընտանիքի անդամների կողմից: Սակայն, ըստ փորձագետների, չնայած ոստիկանության հետ սերտ համագործակցությանը, բժիշկները հակված չեն այս մասին տեղեկացնել ոստիկանությանը՝ ելնելով հաճախորդի հետ հարաբերությունների գաղտնիության սկզբունքից, ինչպես նաև փոխադարձ վստահությունը չխաթարելու համար.

> *«Բժշկին դիմած մարդիկ դեպքերի գերակշիռ մեծամասնությունում պնդում են, որ պահպանվի իրենց տրամադրած տեղեկատվության գաղտնիությունը: Բարձր գնահատելով բժշկի հանդեպ եղած վստահությունը՝ այդպես էլ վարվում ենք»:*
>
> ***Երևանի թիվ 1 պոլիկլինիկա***

252. Հանրակրթական հաստատությունները ևս ձեռնպահ են մնում ընտանեկան բռնության դրսևորումների վերաբերյալ դեպի ոստիկանություն ուղղորդում կատարելուց, թեև նշվում է, որ սոցիալական մանկավարժը կամ հոգեբանը, համապատասխան կարողություններ ունենալու դեպքում կարող են ուղղորդման մեխանիզմի մաս լինել.

> *«Մեկ սոցիալական մանկավարժը կամ մեկ հոգեբանը սպասարկում է 700 հոգանոց դպրոց: Սակայն խնդիրը միայն մասնագետների քանակի մեջ չէ, մասնագիտական*

կարողությունների զարգացման անհրաժեշտություն կա: Այլապես, համապատասխան մեթոդիկաների տիրապետելու պարագայում սոցիալական աշխատողները կարող են արագ պարզել, թե դպրոցում ինչ խնդիրներ կան: Այս առումով հարկ է նշել, որ մասնագետներն աշխատանքային կոնկրետ գործիքների կարիք ունեն»:

Կրթության ազգային ինստիտուտ

253. Սոցիալական մանկավարժների և հոգեբանների՝ որպես ուղղորդման շղթայում որոշակի դերակատարում ունեցող ինստիտուտների դերի կարևորության մասին նշում է նաև ՀՀ ԱՍՀՆ-ն.

«Դպրոցներում կայացած չեն հոգեբանների և սոցիալական մանկավարժների ինստիտուտները, մինչդեռ պրոֆեսիոնալ աշխատանքի պայմաններում վերջիններս կարող են հայտնաբերել ընտանեկան բռնության դեպքեր և համապատասխան ուղղորդում կատարել: Օրենքի նոր նախագիծը նման մեխանիզմներ ևս նախատեսում է:»

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

254. Այդուհանդերձ դպրոցները՝ երեխային համապատասխան աջակցություն տրամադրելու համար ծնողներին ուղղորդում են դեպի սոցիալական, հոգեբանական և կրթական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, և պրակտիկայում քիչ չեն դեպքերը, երբ ենթադրելով ընտանիքում երեխայի հանդեպ բռնության դրսևորումների առկայության մասին, դպրոցի աշխատակիցներն այդ մասին հաղորդում են վերոհիշյալ կառույցներին՝ փորձելով ընտանիքի համար աջակցություն ապահովել այս կերպ, թեև որևէ ֆորմալ՝ իրավական կամ գործնական, մեխանիզմ այս առումով գոյություն չունի, և այս պրակտիկան իրականացվում է ըստ անհատական հայեցողություն և այն համայնքներում, որտեղ համապատասխան ռեսուրսներ և այդ ռեսուրսների մասին իրազեկվածություն կա:

255. Ոստիկանություն չդիմելու դրդապատճառները սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցների մոտ հիմնականում նույնն են, թեև նրանք կիսում են նաև ֆոկուս խմբերում հնչեցված մտահոգությունը՝ ոստիկանության միջամտության արդյունավետության հանդեպ անվստահության առումով.

«Մենք աշխատանքի բերումով պետք է համագործակցենք ոստիկանության հետ, բայց իհարկե վստահության խնդիր կա: Նախ, երբեմն մեր շահառուների վստահությունը շահելու համար ենք ստիպված խուսափում ոստիկանությանն անմիջականորեն դիմելուց: Կան դեպքեր, երբ մենք ոչ թե կօգնենք նրանց, դիմելով ոստիկանություն, այլ հակառակը: Եթե նրանք արդեն իսկ համաձայնվել են մեզ մոտ հաճախել, մեր տված մասնագիտական խորհուրդները լսում են, ապա ոստիկանության միջամտությունից հետո դադարում են այցելել կենտրոն ու մեկուսանում են»:

«Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ

256. Ոստիկանության միջամտության արդյունավետության հանդեպ անվստահության գործոնի մասին նշում են նաև իրավապահ մարմինների ներկայացուցիչները.

«Լինում են դեպքեր, երբ զոհերը հարկադրված չեն պնդում իրենց բողոքը, սակայն դա պայմանավորված է իրավագիտակցության և իրավապահ մարմինների հանդեպ վստահության ցածր մակարդակով: Զոհը վստահ չէ, որ դիմելու պարագայում պատշաճ աջակցություն կստանա:»

ՀՀ Գլխավոր դատախազություն

257. Թեև ոստիկանության միջամտության արդյունավետության հանդեպ անվստահությունն ընտանեկան բռնության դեպքերին անմիջապես արձագանքելու պրակտիկայում ոստիկանության միջամտությունից խուսափելու կամ հրաժարվելու հիմնական գործոններից մեկն է դիտարկվում թե՛ հարցազրույցների, թե՛ ֆոկուս խմբերի մասնակիցների կողմից, այդուհանդերձ ոստիկանության ներկայացուցիչները նշում են,

թե իրենց գործունեության ոլորտում կատարված բարեփոխումների արդյունքում վստահության մակարդակը որոշակիորեն բարձրացել է, որի մասին վկայում է նաև ոստիկանություն՝ ընտանեկան բռնության վերաբերյալ հաղորդում տալու հաճախականության աճը:

258. Իրավապահ մարմիններին դիմելուց հետո գործնականում առկա առանցքային խնդիրներ են համարվում այդ մարմինների՝ *բռնություն վերապրած անձի հետ հարաբերվելու, նրա անվտանգությունն ապահովելու* և *ենթակառուցվածքային* խնդիրները: Մասնավորապես, ընտանեկան բռնություն վերապրած անձանց հետ աշխատանքի ընթացքում առկա են հետևյալ խնդիրները.

- իրավապահ մարմնի աշխատակցի անհատական ընկալումներով և պատկերացումներով պայմանավորված վերաբերմունք բռնություն վերապրած անձի հանդեպ, որի արդյունքում ընտանեկան բռնության դեպքը դիտարկվում է որպես ներընտանեկան խնդիր և փորձ է արվում հաշտեցնել բռնարարին և բռնություն վերապրած անձին.
- երկրորդային զոհացման վտանգ. բռնություն վերապրած անձի հետ աշխատելիս իրավապահ մարմնի աշխատակիցները հազվադեպ, միայն բռնության ծայրահեղ դրսևորումների դեպքում (ավելի հաճախ այն դեպքում, երբ զոհը երեխա է), են դիմում այլ մասնագիտական, աջակցության, մասնավորապես հոգեբանի և/կամ սոցիալական աշխատողի: Մինչդեռ ոչ բոլոր աշխատակիցներն ունեն համապատասխան գիտելիքներ՝ աշխատելու ընտանեկան բռնություն վերապրած անձի հետ, հաշվի առնելով նրա սեռը, տարիքը, ընտանեկան հարաբերությունների ողջ համատեքստը.

> *«Երկրորդային զոհացումից խուսափելու համար որոշակի ռեսուրսներ և մասնագիտական կարողություններ են անհրաժեշտ: Այս առումով օգտակար օրինակ է երեխաների հետ հարցազրույցների անցկացման մեխանիզմների մշակումը Քննչական կոմիտեի կողմից, որոնք կիրառելի են նաև ընտանեկան բռնության զոհերի հետ աշխատանքում: Այս դեպքում ոչ թե մանկավարժներ, այլ հոգեբաններ են ներգրավվում: Իհարկե, մասնագետների թվի պակաս կա այս առումով և ընտանեկան բռնության դեպքում մենք պարտադրված չենք հոգեբան ներգրավել: Այս ուղղությամբ օրենքի փոփոխություն է անհրաժեշտ իրականացնել:»*
>
> ***Քննչական կոմիտեի քրեական գործերի քննության աջակցության վարչություն***

- ենթակառուցվածքների անհամապատասխանություն կամ ընդհանրապես բացակայություն, մասնավորապես ոստիկանության և քննչական վարչության բաժիններում հիմնականում բացակայում են հարցաքննության համար նախատեսված առանձնասենյակներ, երեխաների համար նախատեսված խաղասենյակներ և նրանց տարիքային խմբերի համար հարմարեցված հարցաքննության համար նախատեսված առանձնասենյակներ, ապաստարաններ.

> *«...ապաստարանների կարիք կա, որովետև մենք անգամ չգիտեինք դրանց գոյության մասին և հիմա էլ՝ բռնության ենթարկված անձինք անձամբ են դիմում այդ ապաստարաններին, մենք չենք ուղղորդում: Բացի այդ, ապաստարանները պետք է պետական լինեն, որովհետև, […] երբ գործը գնաց դատարան, կինը ստիպված էր լքել ապաստարանը, քանի որ Կանանց աջակցության կենտրոնն այլևս չէր կարող նրան ու երեխային ապաստարան տրամադրել, մինչդեռ բռնության ենթարկված անձն ու նրա խնամքի տակ գտնվողները պետք է ապաստարանում մնան առնվազն մինչև դատավճռի իրականացումը, որպեսզի խուսափեն սպառնալիքներից ու հետապնդումից:»*
>
> ***Լոռու մարզային քննչական վարչություն***

259. Ժամանակավոր օթևանի՝ ապաստարանների անհրաժեշտությունը շեշտում են թե՛ պետական մարմինների, թե՛ ՀԿ-ների ներկայացուցիչները: Մասնավորապես, նշվում են հետևյալ խնդիրները՝

- ապաստարանների անհրաժեշտություն բոլոր մարզերում.
- շարունակական, առանց ընդհատումների գործունեություն, որը ենթադրում է կայուն ֆինանսավորման աղբյուր.

- բռնություն վերապրած անձին ապաստարան տեղափոխելու հետ կապված գործառույթների հստակեցում և ռեսուրսների սակավություն, օրինակ՝ մեքենայի և վառելանյութի անհրաժեշտություն.

> *«Թերևս միակ խնդիրը գիշերային հրատապ դեպքերն են: Ոստիկանները հաճախ մեզ մոտ են բերում կանանց, թեև սա նրանց անմիջական պարտականությունը չի, սակայն լինում են դեպքեր, երբ մենք ենք ստիպված լինում տեխափոխել կանանց: Ցավոք, չկան պետական ապաստարաններ, որտեղ կարելի է գոնե ավելի կարճ ժամանակով տեղավորել կանանց կամ գոնե գիշերակացով կամ առաջնային օգնությամբ ապահովել:»*
>
> ***«Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ***

- ապաստարանում մասնագիտական կարողությունների ապահովում, օրինակ՝ բուժաշխատողի, հոգեբանի և իրավաբանի.
- ապաստարանների գործունեությունը կարգավորող չափանիշների, ներառյալ անվտանգության և հիգիենայի ապահովման անհրաժեշտություն:
- գործնականում բռնություն վերապրած անձի պաշտպանության, նրա անվտանգությունն ապահովելու մեխանիզմների բացակայություն. փորձագետների մեծամասնության կարծիքով՝ բռնությունն ընտանիքում սովորապար պատեհական չի լինում, այլ շարունակական, ինչպես կարծում են նաև ֆոկուս խմբերի մասնակիցները և բռնության դրսևորումների էսկալացիայի ժամանակ բռնության զոհը երբեմն դիմում է ոստիկանություն՝ ակնկալելով աջակցություն իր անվտանգությունն ապահովելու համար: Քիչ չեն դեպքերը, երբ բռնարարը հետապնդում է զոհին և ըստ էության, ոստիկանությունը, որն առաջին իրավապահ ատյանն է, որը տեղեկանում է ընտանեկան բռնության դեպքի մասին, զոհի պաշտպանության իրականացման մեխանիզմներ չունի, բացի բռնություն կիրառողի խափանման միջոցները, օրինակ՝ բնակության վայրը չլքելու վերաբերյալ ստորագրություն կամ վարչական տուգանք: Սակայն, հաճախ անգամ այս միջոցները կիրառելի չեն, եթե տուժողը հետ է վերցնում իր բողոքը կամ չկան հանցակազմի ապացույցներ.

> *«Ընտանեկան բռնության զոհերին պաշտպանելու գործուն մեխանիզմներ ոստիկանը չունի: Գալիս, հաղորդում են տալիս նախկին ամուսնու պարբերական հետապնդումների մասին, սակայն դիմողի գործ չհարուցելու ցանկության կամ ապացույցների բացակայության պայմաններում չենք կարող անձին մեկուսացնել: Շուրջօրյա վերահսկողություն էլ չի կարող իրականացվել ռեսուրսների սահմանափակության պատճառով:»*
>
> ***ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Գավառի բաժին***
>
> *«Օրենքի նախագիծը նախատեսում է նաև պաշտպանական միջոցների կիրառում, սակայն դեռևս մշակված չէ պաշտպանության ենթակա անձին բնակության այլ վայր տեղափոխելու մեխանիզմը:»*
>
> ***ՀՀ Գլխավոր դատախազություն***

260. Նշված խնդիրները թեև հատուկ են բռնություն վերապրած բոլոր անձանց դեպքում, սակայն որոշ խմբերի առանձնահատկություններից ելնելով՝ փոխվում է նաև այս խնդիրների բնույթն ու առաջնությունը: Մասնավորապես, *հաշմանդամություն ունեցող անձնանց դեպքում թիվ մեկ խնդիր է դառնում բռնության արձագանքի ծառայությունների անմատչելիությունը.*

> *«Ընտանեկան բռնության դեպքերին արձագանքելու առումով՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար առաջին խնդիրը հենց դիմելու անմատչելիությունն է՝ ինչպե՞ս դիմել ոստիկանություն, բուժօգնության որևէ կառույց: Այս ծառայությունները ֆիզիկապես անմատչելի են: Ավելին, հաշմանդամություն ունեցող անձինք ավելի քան կախված են*

իրենց ընտանիքներից, մեծամասամբ ֆինանսապես են կախված ընտանիքից, չունեն ինքնապաշտպանության միջոցներ, չկա նրանց համար մատչելի ապաստարան:»

«Դիսըբիլիթի ինֆո» տեղեկատվական հասարակական կազմակերպություն

261. Հանրային կարծրատիպերով պայմանավորված վերաբերմունքն ավելի ընդգծված է արտահայտվում հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատանքում: Այսպես, եթե բռնության զոհը կին է և արձագանքման գործընթացում նրա հետ վերաբերվում են, հիմնվելով կնոջ դերի հայրիշխանական, ավանդական ընկալումների վրա, ապա եթե այդ կինն ունի նաև հաշմանդամություն, այս ընկալումներին են ավելանում նաև հաշմանդամություն ունեցող անձի վերաբերյալ առկա ընկալումները, ինչի արդյունքում նա դառնում է կրկնակի խտրականության զոհ.

Արձագանքման պրակտիկայում բավականին լուրջ խոչընդոտներ են կարծրատիպերը, որոնք հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկատվության պակասի կամ անճշգրտության պատճառով ձևավորվել են մեծամասնության մոտ: Տարբեր ոլորտի մասնագետներ անտեղյակ լինելով հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրներին՝ նրանց հետ հարաբերվում են՝ հիմնվելով տարածված կարծրատիպերի վրա, օրինակ՝ որ այս մարդիկ չունեն սեռական կյանք, որ նրանց ամբողջ խնամքն ապահովվում է և այլ կարիքներ չեն կարող լինել:

«Դիսըբիլիթի ինֆո» տեղեկատվական հասարակական կազմակերպություն

262. Առաջին և չորրորդ խնդիրների մասին նշում են նաև ֆոկուս խմբերի մասնակիցները: Երկրորդ և երրորդ խնդիրների վերաբերյալ դիտարկումների բացակայությունը, անգամ բռնություն վերապրած կանանց խմբերում, թերևս փաստում է քաղաքացիների՝ իրենց իրավունքների, ինչպես նաև ընտանեկան բռնության դրսևորումների վերաբերյալ իրազեկվածության ոչ բավարար մակարդակի մասին:

263. Այդուհանդերձ, թեև առողջապահական, կրթական և սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցներից դեպի ոստիկանություն ուղղորդման պրակտիկան դեռևս հայեցողական է, սոցիալական աջակցության ոլորտի բարեփոխումների համատեքստում ենթադրվում է սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների դերի զգալի փոփոխություն՝ ընտանեկան բռնության դրսևորումներին արձագանքելու առումով: Այսպես, համալիր սոցիալական ծառայությունների համակարգի շարունակական ներդրման ընթացքում, սոցիալական աշխատողները դառնում են ուղղորդման առաջնային օղակը՝ ստանձնելով դեպք վարողի պարտականությունները:

264. Թեև այս մոտեցումը պետությունը որդեգրել է դեռևս 2015 թվականին, սակայն գործնականում այս կառույցները ուղղորդման շղթայում նման գործառույթներ դեռևս չեն իրականացնում: Փոխարենը, նման գործառույթ են իրականացնում մարզպետարանների Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները.

«Պրակտիկայից ելնելով՝ պետք է նշեմ, որ գործակալությունը, որը պետք է ընտանեկան բռնության դեպքի վարողը հանդիսանա, այսօր համապատասխան կարողություններ չունի, որպեսզի կարողանա իրականացնել նման գործառույթ: Ըստ օրենսդրության՝ նրանք պետք է դեպքը հայտնաբերեն, արձանագրեն և ուղղորդեն մարզպետարան՝ որոշում կայացնելու համար: Սակայն իրականում այսօր մեր բաժինն է գործակալության աշխատակիցներին ասում, թե ինչպես պետք է փաստաթղթավորել դեպքը: Գործակալության աշխատակիցների զգալի մասը նախկինում զբաղվել է միայն կենսաթոշակների և նպաստների բաժանմամբ և համապատասխան գիտելիք և հմտություն չունեն արդյունավետորեն արձագանքելու ընտանեկան բռնության դեպքերին: Թվում է, թե օրենսդրորեն մեր բաժնի ծանրաբեռնվածությունը թեթևացել է, սակայն պրակտիկայում հակառակն է տեղի ունեցել. եթե նախկինում մենք էինք զբաղվում դեպքերի փաստաթղթավորվմամբ, արագ ամեն ինչ անում էինք, հիմա ստիպված ենք երկու-երեք անգամ ավելի ժամանակ ու ռեսուրս տրամադրել գործակալության հետ դեպքերի փաստաթղթավորումն ապահովելու համար:»

265. Սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների և բաժինների աշխատակիցների անհրաժեշտ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման խնդիրների մասին տե՛ս «Ինստիտուցիոնալ կարողություններ» բաժինը:

6.2.2. Շարունակական աջակցություն ընտանեկան բռնություն վերապրած անձանց

266. Ընտանեկան բռնության հետևանքների ազդեցությունը երկարաժամկետ է: Ավելին, այն իր հետքն է թողնում բռնություն վերապրած անձի ողջ կյանքի ընթացքում: Այդ իսկ պատճառով հրատապ արձագանքից բացի, ընտանեկան բռնություն վերապրած անձանց անհրաժեշտ է շարունակական աջակցություն, որպեսզի նրանք կարողանան ոտքի կանգնել և ինքնուրույն ապահովել իրենց և խնամակալության տակ գտնող ընտանիքի այլ անդամների բարեկեցությունը:

267. Նման աջակցության պետական մեխանիզմներ, որոնք անմիջականորեն միտված կլինեին ընտանեկան բռնություն վերապրած անձանց, չկան, թեև պետական աջակցություն նրանց տրամադրվում է սոցիալական ծառայությունների տեսքով՝ այլ շրջանակման ներքո:

268. Հասարակական կազմակերպությունները կարևորում են հիմնականում երկու խնդիր՝ *մշտական կացարանով ապահովում և մասնագիտության ձեռքբերում*, երկու նախապայման, որոնք, ըստ փորձագետների, թույլ կտան բռնություն վերապրած անձանց ձեռք բերել ֆինանսական անկախություն և սեփական ուժերով ապահովել իրենց կյանքի որակը: Այդ կազմակերպությունները փորձում են իրենց դիմած կանանց ապահովել առնվազն մասնագիտական հմտություններով՝

> *«Բացի կացարանով ապահովելը, մենք ունենք մասնագիտական հմտություններ տրամադրող լսարաններ, որտեղ ապաստանած կանայք կարող են այստեղ բնակվելու ընթացքում նաև մասնագիտություն ձեռք բերել, օրինակ՝ վարսահարդարի, կոսմետոլոգի:»*
>
> ***«Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ***

269. Սակայն, հարցազրույցների ընթացքում ընտանեկան բռնություն վերապրած անձանց տրամադրվող աջակցության մասին անդրադարձները հիմնականում վերաբերում են անմիջական, հրատապ աջակցությանը, և սակավաթիվ են այն փորձագետները, որոնք անդրադառնում են շարունակական աջակցության խնդրին: Սա թերևս փաստում է մի շարք հանգամանքների մասին: Նախ, առաջին տեսակի աջակցության խնդիրները բազմաթիվ են և պահանջում են հրատապ և կարճաժամկետ արձագանք: Երկրորդ, շարունակական աջակցության տրամադրման խնդիրը շատ ավելի համակարգային, համալիր և ռեսուրսատար գործողություններ է պահանջում, և քանի որ գործող պրակտիկան պատեհական բնույթ ունի՝ սահմանափակված է բռնություն վերապրած անձանց ծառայություններ տրամադրող հասարակակական կազմակերպությունների կարողություններով, այս խնդիրը քաղաքականության ձևավորման դիսկուրսում գրեթե չի արծարծվում: Երրորդ, շարունակական մասնագիտական և/կամ սոցիալական աջակցություն բռնություն վերապրած անձինք ստանում են սոցիալական խոցելիության այլ շրջանակներում և ընտանեկան բռնության ենթարկվելու հանգամանքը չի տարբերակվում.

> *«Մենք ընտանիքը դիտարկում ենք որպես ամբողջականություն. յուրաքանչյուր առանձին դեպքում փորձում ենք հասկանալ՝ որ խնդիրն է առաջնային, և սկզբնապես դա ենք հասցեագրում: Մի պարագայում դա կարող է բռնությունը լինել, մեկ այլ պարագայում՝ սոցիալական անբավարար պայմանները: Ընդհանրապես, մեր բաժնի վրա դրված պարտականությունների ամբողջականության մեջ ընտանեկան բռնության խնդիրն առաջնային չէ: Եթե ընտանիքի իրավիճակի ուսումնասիրությունից պարզվի, որ այս խնդիրն առանցքային է, միայն այդ դեպքում կարող ենք ուղղակիորեն անդրադառնալ դրան:»*

6.3. Բռնություն գործադրողի հետապնդում և վերականգնում

270. Եթե բարձրաձայնված բազմաթիվ խնդիրներով և թերություններով հանդերձ բռնություն վերապրած անձանց համար առկա են աջակցության որոշ մեխանիզմներ և պրակտիկա, ապա բռնություն գործադրողի հետապնդման և վերականգնման պրակտիկան գերազանցապես սահմանափակվում է քրեակատարողական մեխանիզմների կիրառմամբ, այն էլ հիմնականում այն դեպքում, երբ կիրառվել է ֆիզիկական բռնություն:

271. Ինչպես նշում են իրավապահ մարմինները, բռնարարի հետապնդում, եթե առկա է հանցագործություն, իրականացվում է ՀՀ քրեական օրենսգրքով սահմանվող տարբեր խափանման միջոցների կիրառմամբ.

> *«Գործուն միջոց է բնակության վայրը չլքելու վերաբերյալ ստորագրություն վերցնելը, ինչի արդյունքում բռնարարը քրեական դատավարույթ իրականացնող մարմնի տրամադրության տակ է լինում և զերծ մնում վկաների վրա հնարավոր ճնշումներ գործադրելուց: Խափանման միջոցը արդյունավետ է նաև կրկնահանցագործությունից խուսափելու տեսանկյունից:»*
>
> ***ՀՀ Գլխավոր դատախազություն***

272. Բռնություն կիրառողի ազատազրկման վերաբերյալ կարծիքները տարբեր են. մի մասի կարծիքով՝ ազատազրկումը թույլ է տալիս ապահովել բռնություն վերապրած անձի անվտանգությունը, իսկ մյուս մասը կարծում է, որ բռնարարի՝ սովորաբար ընտանիքի միակ կամ հիմնական վաստակողի ազատազրկումն ընտանիքին դնում է սոցիալապես խիստ խոցելի վիճակում, և այդ իսկ պատճառով անհրաժեշտ են այլընտրանքային մեխանիզմներ, օրինակ՝ պրոբացիոն ծառայության կիրառում ընտանեկան բռնության դեպքերում.

> *«Բռնարարի ազատազրկումը ընտանեկան բռնության դեմ պայքարելու ամենաարդյունավետ ձևը չէ: Երբեմն բռնարարը տան միակ հաց վաստակողն է, և ընտանիքը նրա ազատազրկումից մեծապես տուժելու է: Այս առումով, պետք է զարգացնել այլընտրանքային պատժի ձևերը, կայացնել պրոբացիայի ինստիտուտը:»*
>
> ***«Սոցիալական արդարություն» ՀԿ***

273. Բռնարարի հետապնդման առումով մեկ այլ խնդիր, որի շուրջ սկզբունքային անհամաձայնություն կա թե՛ քաղաքականություն մշակողների, թե՛ հասարակական կազմակերպությունների միջև, *հետապնդման մեխանիզմների խստության խնդիրն* է: Ոմանք կարծում են, թե այն հանգամանքը, որ բռնությունը կիրառվել է ընտանիքում, պետք է ծանրացուցիչ հանգամանք հանդիսանա, և ընտանիքիում բռնություն կիրառողը պետք է հնարավորինս խիստ պատիժ կրի.

> *«...ներկայում սպանության գործի քննության ժամանակ կնոջ հանդեպ տարիներ շարունակ բռնություն կիրառելը ծանրացուցիչ հանգամանք չի համարվում:»*
>
> ***Հասարակություն առանց բռնության, «Ընտանեկան բռնության դեպքերը 2017-ին. օրենսդրական բացերն ու կանխարգելման միջոցները» ասուլիս 27.07.2017թ.***

274. Մյուս մասի կարծիքով՝ ընտանեկան փոխհարաբերությունների առանձնահատկություններից ելնելով, նման մոտեցման կիրառման դեպքում ընտանիքի պահպանման հավանականությունը գրեթե բացառվում է և այդ իսկ պատճառով, պետք է խուսափել չափազանց խիստ պատժամիջոցների կիրառումից: Իսկ ավելի սակավաթիվ փորձագետների կարծիքով՝ այս խնդրին լուծում տալու համար անհրաժեշտ է լուրջ փաստական-հետազոտական հիմք, քանի որ վերոնշյալ երկու կարծիքն էլ միայն զգացմունքային կամ պատեհական հիմնավորում ունեն, մինչդեռ այս կամ այն մոտեցումն ընտրելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել խնդիրը, մասնավորապես հասկանալ, թե արդյոք այն

պրակտիկան, որտեղ ընտանիքում բռնություն գործադրողի հանդեպ կիրառվել է ավելի խիստ պատիժ, արդյունավե՞տ է եղել, բռնության դեպքերն այլևս չեն կրկնվե՞լ և ընդհանրապես ինչպե՞ս են խիստ պատժամիջոցներն անդրադարձել անպատժելիության ընկալումների վրա և ինչպիսի՞ ազդեցություն են ունեցել ընտանեկան բռնության կանխարգելման վրա.

> *«Հաճախ լսվում է այնպիսի կարծիք, թե ընտանեկան բռնությունը պետք է խստորեն պատժվի: Դատաիրավական տեսանկյունից սա ընդամենը հռետորաբանություն է, որովհետև հնարավոր չէ ավելի կամ պակաս խիստ լինել, քան նախատեսվում է համապատասխան օրենսդրությամբ: Այստեղ կարելի է հարց բարձրացնել, թե արդյոք ընտանիքի անդամների հանդեպ դրսևորված բռնության դեպքերը պետք է ընդհանուր կարգով պատժվեն, թե՞ անհրաժեշտ են պատժի առավել խիստ միջոցներ: Դա պարզելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել խնդիրը, վերլուծել առկա վիճակագրական տվյալները և հասկանալ՝ խիստ պատիժները հանգեցնո՞ւմ են արդյոք կրկնահանցագործության կանխմանը, թե՞ ոչ:»*
>
> ***ՀՀ Գլխավոր դատախազություն***

275. Վերականգնման իրավական մեխանիզմներ չկան, թեև հարցազրույցներից պարզ է դառնում, որ քաղաքականության դիսկուրսում որոշակի մոտեցումներ և խնդիրներ առկա են: Այսպես, Գլխավոր դատախազության կարծիքով, հենց *քրեակատարողական հիմնարկում պետք է սկսել բռնության կիրառողի վերականգնման գործընթացը*՝ տրամադրելով ավելի լայն հնարավորություններ ստեղծագործական, գիտական և հանրօգուտ աշխատանքի համար այս հիմնարկներում, իսկ պատիժը կրելուց հետո՝ պետք է երաշխիքներ տրամադրվեն, օրինակ՝ աշխատանքով և կացարանով ապահովում, երեխաներին տեսակցելու հնարավորություն, որոնք կապահովեն նրա վերասոցիալականացումը՝ այդպիսով կանխելով բռնության նոր դրսևորումները:

276. Բռնարարի վերականգնման առումով կարևորվում է *մասնագիտական աջակցության* հանգամանքը՝ ելնելով նրա անձնային և վարքային առանձնահատկություններից, օրինակ՝ հոգեբանական կամ հոգեբուժական օգնություն, տարբեր նյութերից, այդ թվում՝ ալկոհոլից և թմրանյութերից կախվածությունից ձերբազատում: Ըստ բուժաշխատակիցների՝ նման աջակցության տրամադրման գործընթացում առկա են մի շարք խնդիրներ, մասնավորապես *խնդրի մասին բարձրաձայնելու դժկամությունը* և *առանձին դեպքերում մարդու իրավունքների և հանրային անվտանգության պաշտպանության սկզբունքների միջև հակասությունը*.

> *«Նախկինում, տեղամասում տուբերկուլյոզ հիվանդություն հայտնաբերելու պարագայում ահազանգում էինք պատկան մարմիններ և հիվանդին մեկուսացնում: Նույնը վերաբերում էր նաև ալկոհոլիզմով տառապող հիվանդներին և հոգեկան խնդիր ունեցողներին: Ներկայում հոգեկան խնդիր ունեցող անձին մեկուսացնելու և ընտանիքի անդամների անվտանգությունը ապահովելու համար տվյալ անձը կամ նրա հարազատները պետք է ստորագրություն տան: Այդ ստորագրությունը, սովորաբար, հարազատները չեն տալիս՝ չուզենալով իրենց «ընտանեկան խնդիրը» հանրային դարձնել, և դրա արդյունքում ականատես ենք լինում ողբերգական դեպքերի:»*
>
> ***Երևանի թիվ 1 պոլիկլինիկա***

277. Բռնարարի վերականգնման մեխանիզմներում ներդրում կատարելու առումով բարձրաձայնվում է նաև որոշակի հակասության մասին, հատկապես ռեսուրսների բացակայության և սակավության դեպքում: Մասնավորապես, առաջանում է ռեսուրսների բաշխման խնդիր՝ ներդնել այդ ռեսուրսները բռնություն վերապրած անձա՞նց պաշտպանության, թե՞ բռնարարի վերականգնման մեխանիզմների և պրակտիկայի զարգացման աշխատանքներում.

> *«Իհարկե, առանցնությունը պետք է տալ բռնության կանխման և բռնություն վերապրած անձանց պաշտպանության և աջակցության խնդիրներին: Գիտենք, որ մասնագիտական աջակցությունը կարող է օգտակար լինել բռնարարներից ոմանց համար, ինչպես նաև*

հասարակության համար ընդհանրապես, սակայն բռնարարի վերականգնման համար ռեսուրսներ ներդնելը, երբ դրանք բավարար չեն, կարող է լուրջ հակասության տեղիք տալ»:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ

278. Այսպիսով, ընտանիքում բռնություն գործադրողի հետապնդում իրականացվում է միայն հանցակազմի առկայության դեպքում՝ Քրեական օրենսգրքի շրջանակներում: Վերականգնման մեխանիզմները և պրակտիկա գործնականում կարծես բացակա են. այս խնդիրներն այն հիմնական բացերն են, որոնց ներկա քաղաքականությունն ու պրակտիկան պատշաճ կերպով չեն անդրադառնում:

7. Ոլորտում կարևորագույն լիազորություններ ունեցող, գործառույթներ իրականացնող և ծառայություններ մատուցող կառույցների պատկերացումները և ընկալումները ընտանեկան բռնության կանխարգելման քաղաքականության մշակման, իրականացման և վերահսկողության մասին. հարցազրույցների արդյունքները

7.1. Փաստա-վիճակագրական հենք

279. Փորձագետների կարծիքով՝ ընտանեկան բռնության վերաբերյալ փաստա-վիճակագրական համապարփակ հենք, որի վրա կարելի է հիմնվել համապատասխան քաղաքականություն մշակելիս, գոյություն չունի: Կան ընտանեկան բռնության վերաբերյալ առանձին հետազոտություններ, հատվածական, գերատեսչական վիճակագրական տվյալներ, սակայն *միասնական, համապարփակ համակարգ* առկա չէ: Հատվածական տվյալներ ընտանեկան բռնության վերաբերյալ հասանելի են հետևյալ կառույցներում.

- իրավապահ մարմիններ՝ ոստիկանություն, Քննչական կոմիտե.
- սոցիալական ծառայություններ մատուցող որոշ կառույցներ, օրինակ՝ «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ.
- հասարակական կազմակերպություններ, օրինակ՝ Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա:

280. Որպես երեխաների նկատմամբ բռնության դրսևորումների վերաբերյալ տվյալների հավաքագրման և համակարգման փորձ նշվում է դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների «Մանուկ» տեղեկատվական համակարգը, սակայն համակարգի հիմնական օգտատերերից ոմանք՝ օրինակ, մարզպետարանների Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները, նշում են համակարգի անարդյունավետության մասին:

281. Այդուհանդերձ, ըստ որոշ փորձագետների, անգամ առկա և հասանելի տվյալները ոչ միշտ է, որ դառնում են քաղաքականության մշակման հիմք.

> *«Եթե ոստիկանության վիճակագրական տվյալների համաձայն՝ տարեցները ընտանեկան բռնության երրորդ խոցելի խումբ են՝ կանանցից և երեխաներից հետո, ակնհայտ է դառնում մի շատ կարևոր խնդիր. վիճակագրությունն ու փաստերը չեն օգտագործվում քաղաքականություն և ծրագրեր մշակելիս:»*
>
> ***«Դիսըբիլիթի ինֆո» տեղեկատվական հասարակական կազմակերպություն***

282. Ընդհանրապես, փաստա-վիճակագրական հենքի վրա հիմնված ոլորտային քաղաքականության մշակման կարիքն ընդգծում են նաև միջազգային զարգացման գործընկերները.

> *«Իմ կարծիքով՝ ընտանեկան բռնության կանխարգելման առումով առկա կարևորագույն խնդիրներից մեկը փաստա-վիճակագրական ամուր, վստահելի հենքի առկայությունն է, որն ընկած կլիներ քաղաքականության մշակման գործընթացի հիմքում:»*
>
> ***ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ***

283. Ի դեպ, փորձագետներից ոմանք ևս բարձրացնում են փաստա-վիճակագրական տվյալների հուսալիության (reliability of data) խնդիրը՝ նշելով, որ թերևս Ազգային վիճակագրական ծառայությունն այն կառույցն է, որը թե՛ ունի համապատասխան կարողություններ՝ ուսումնասիրելու խնդիրն ու դրա առանձնահատկությունները, թե՛ վստահելի ու անկողմնակալ կարող է համարվել այս առումով, քանի որ խնդիրը երկրում քաղաքականացված է:

284. Տվյալների վստահելիության, ընդհանրապես փաստա-վիճակագրական տվյալների ձևավորման մեթոդաբանության, ինչպես նաև այս հենքի կիրառման առումով կարևորվում է նաև տարբեր կառույցների միջև համագործակցության խնդիրը, մասնավորապես հետազոտողների, ծառայություններ մատուցողների, վերլուծական կենտրոնների (think tank) և քաղաքականություն մշակողների միջև, գործընթացի բոլոր փուլերում՝ հետազոտության/հարցման խնդիրների մշակման, տվյալների հավաքագրման (դաշտային աշխատանքների), վերլուծության և ամփոփման, ինչպես նաև դրանց կիրառման փուլերում.

> *«Հետազոտությունների արդյունքները միայն էպիզոդիկ կիրառում ունեն, օրինակ՝ քանի որ դոնորները պահանջում են հիմնավորել ծրագրային առաջարկները, այդ տվյալները կարող են օգտագործվել այդ նպատակով: Սակայն քաղաքականության մշակման առումով ես չգիտեմ դեպքեր, երբ, օրինակ, ինձ դիմեն որևէ think tank-ից՝ մեր հետազոտական տվյալներն օգտագործելու համար:»*
>
> ***Ազգագրության և հնագիտության ինստիտուտ***

285. Նման իրավիճակում բոլոր փորձագետները կարևորում են միասնական, համապարփակ վիճակագրական համակարգի անհրաժեշտությունը՝ մանրամասնելով նաև առկա և/կամ հավանական խնդիրներն ու խոչընդոտները, մասնավորապես.

- ընտանեկան բռնության միասնական ձևակերպման բացակայությունը.

> *«Ներկայումս հնարավոր չէ հետևել միևնույն դեպքի զարգացմանը ոստիկանության, քննչական կոմիտեի և դատարանների աշխատանքի տարբեր փուլերում: Միասնական բազայի ստեղծման համար կարող է պարզագույն մեխանիզմ կիրառվել. բոլոր իրավասու մարմինները կարող են տեղեկատվություն տրամադրել տվյալների հավաքագրման համար պատասխանատու մեկ կառույցի:»*
>
> ***Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ***

- ծառայություններ մոտուցողների տարբեր գործառույթներով պայմանավորված՝ վիճակագրական տվյալների հավաքագրման և համակարգման խնդիրների բարդությունը.

> *«Բնական է, որ տարբեր մարմիններում վարվող վիճակագրությունը տարբեր հիմքերի վրա է դրվում. յուրաքանչյուր մարմին վիճակագրությունը հավաքում է ըստ իր կողմից մատուցվող ծառայությունների բնույթի: Բնական է, որ սոցիալական աջակցություն տրամադրող մարմիններում ավելի թույլ ցուցիչներ են օգտագործվում, քան ոստիկանությունում:»*
>
> ***ՔԿ Քրեական գործերի քննության աջակցության վարչություն***

- միասնական համակարգ ձևավորելու համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը.
- միասնական համակարգի վարման համար անհրաժեշտ մեթոդաբանություն, որտեղ հաշվի կառնվեն մասնավորապես՝ ա) անձնական տվյալների գաղտնիության պաշտպանության սկզբունքը, բ) դեպքերի վերաբերյալ տվյալների կրկնությունից խուսափելու անհրաժեշտությունը, գ) ծառայություններ մատուցողների միջև տվյալների փոխանցման անհրաժեշտությունն ու այդ մեխանիզմների արդյունավետությունը, դ) մարզային տարբերակված տվյալների հավաքագրումը:

286. Փաստա-վիճակագրական միասնական համակարգի արդյունավետության առումով փորձագետները կարևորում են նաև անհրաժեշտ *մասնագիտական կարողություններն* ու ընդհանրապես *մասնագետների առկայությունը*, որովհետև նման համակարգի արդյունավետությունը ենթադրում է նաև ընտանեկան բռնության դեպքերի վարման սահուն գործընթաց, մինչդեռ այն կառույցները, որոնք պետք է զբաղվեն սրանով, դեռևս պատրաստ չեն.

«Մենք դեռևս կայացման այդ մակարդակին չենք հասել, այժմ մեր առաջնահ խնդիրը դեպքի վարման գործընթացը հունի մեջ գցելն է:»

Սոցիալական աջակցության «Գյումրի-2» տարածքային բաժին

«Մեր բաժինը, իր հերթին, կարիք ունի առանձին աշխատակցի, որը կզբաղվի փվյալների բազայով և վիճակագրությամբ:»

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ, Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին

287. Վերջապես, որոշ փորձագետներ կարևորում են նաև ընտանեկան բռնության վերաբերյալ տվյալների հավաքագրման և վերլուծության փուլերից հետո հետադարձ կապի անհրաժեշտությունը.

«Միջգերատեսչական հաշվետվության ձևաթուղթ ունենք, որով տվյալներ ենք տրամադրում ընտանեկան բռնության դեպքերի և միջամտության վերաբերյալ, սակայն հետադարձ կապ չկա, այսինքն այդ տվյալների ընդհանրացումն ու վերլուծությունը մեզ արդեն չի հասնում, մինչդեռ շատ լավ կլիներ, որպեսզի մենք էլ տեղեկացված լինեինք այդ արդյունքներին:»

«Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ

288. Ըստ ՀՀ ԱՍՀՆ՝ միասնական, համապարփակ համակարգի ձևավորման խնդիրն արծարծված է «Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» օրենքի ներկա նախագծում.

«Այդ պարտականությունը դրված կլինի լիազոր մարմնի վրա, որն էլ տվյալներ կհավաքագրի ծառայություն մատուցողներից, ոստիկանությունից, արդարադատության և առողջապահության մարմիններից:»

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

289. Հատկանշական է, սակայն, որ առողջապահական կառույցների ներկայացուցիչների հետ հարցազրույցում, մասնակիցները նշում էին, որ այդ կառույցները չունեն և չեն կարող ունենալ նման գործառույթներ:

7.2. Իրավական կարգավորման շրջանակ

290. Ընտանեկան բռնությանն արձագանքի կարգավորման առկա շրջանակի վերաբերյալ փորձագիտական կարծիքները ներկայացված են սույն զեկույցի այլ բաժիններում, իսկ այս բաժնում կքննարկվեն «Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» օրենքի ներկա նախագծի վերաբերյալ փորձագիտական կարծիքները: Նախագծի քննարկման առանցքային թեմաններ են՝ ա) օրենքի նախագծի ընդունումից հետո բոլոր հարակից օրենսդրական փաստաթղթերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, բ) ընտանեկան բռնության քրեականացման, գ) մասնավոր ընդդեմ հանրային մեղադրանքի առաջադրման, դ) նախագծի ընդունման և օրենքի արդյունավետ կիրարկման համար անհրաժեշտ հանրային պահանջարկի ձևավորման և ե) նախագծի շուրջ հաղորդակցության խնդիրները:

291. Բոլոր ոլորտների փորձագետները նշում են, թե օրենքի նախագիծն ընդունելով, խնդրի իրավական կարգավորման գործընթացն ամփոփված համարել չի կարելի: Թեև շատերի կարծիքով նախագծի ընդունումն անհրաժեշտ քայլ է, սակայն դրան անմիջապես պետք է հետևեն հարակից օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում, քրեական, քրեադատավարական և քրեակատարողական օրենսդրությունում, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում.

«...միայն «Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» օրենքի ընդունումը չի կարող լրացնել ոլորտում առկա օրենսդրական բացերը: Ամեն պարագայում, կարևորը [...] օրենսդրական բարեփոխումների մի ամբողջ համալիր կյանքի կոչելն է:»

ՄԻՊ աշխատակազմ

292. Փորձագետները համոզված են, որ հակառակ պարագայում, օրենքը չի գործի:

293. Ի դեպ, օրենսդրական բարեփոխումների փաթեթում կարևորվում է նաև *տարբեր կառույցների գործառույթների և դերերի հստակեցման խնդիրը,* որովհետև օրենքի նախագիծը նախատեսում է համալիր ու համապարփակ արձագանք ընտանեկան բռնության դրսևորումներին, որը ենթադրում է բազմաթիվ դերակատարների ներգրավում և համագործակցություն: Ելնելով գործող պրակտիկայից, որտեղ երբեմն գործառույթներն ըստ օրենսդրության վերագրվում են մի կառույցի, սակայն գործնականում դրանք իրականացնում է մեկ այլ կառույց, փորձագետները շեշտում են գործառույթների և համապատասխանաբար դերերի հստակության խնդիրը:

294. Ընտանեկան բռնության քրեականացման շուրջ կարծիքները բաժանվում են երկու մասին: Ընտանեկան բռնություն վերապրած անձանց աջակցություն տրամադրող հասարակական կազմակերպությունների դիրքորոշումը միանշանակ է՝ քրեականացում: Նրանց կարծիքով՝ քրեականացումը թույլ կտա ընտանիքում կատարված բռնությունը դիտարկել որպես ծանրացուցիչ հանգամանք, այդպիսով ազդակ հղելով հանրությանը՝ ընտանեկան բռնության հանդեպ պետության անհանդուրժողականության վերաբերյալ և հետևողականորեն նպաստել պատժելիության մթնոլորտի ձևավորմանը.

«... ընտանեկան բռնությունը քրեականացնող օրենսդրության ընդունումը անհրաժեշտություն է: ... եթե լիներ ընտանեկան բռնությունը քրեականացնող օրենսդրություն, ապա ընտանիքում կիրառված բռնությունը կդիտարկվեր որպես ծանրացուցիչ հանգամանք քրեական օրենսդրության շրջանակներում և պայմանական դատապարտվածության մասին խոսք չէր կարող գնալ: Ամուսինը դեպքի[5] ժամանակ պատիժը կկրեր և խրախուսված ու մոտիվացված չէր զգա շարունակել բռնությունը:»

Ընդդեմ կանանց դեմ բռնության կոալիցիա, «Ընտանեկան բռնության դեպքերը 2017-ին. օրենսդրական բացերն ու կանխարգելման միջոցները» ասուլիս, 27.07.2017թ.

295. Նման տեսակետ ունեն նաև պետական կառույցների և ՄԻՊ աշխատակազմի որոշ փորձագետներ.

«Բռնություն գործադրողը պետք է իմանա, որ ընտանիքի անդամի հանդեպ բռնություն գործադրելը տարբերվում է փողոցում բռնություն գործադրելուց: Քանի որ ընտանեկան բռնության իրավական սահմանում չկա, թե՛ ընտանիքում, թե՛ փողոցում ծեծի դեպքում պատիժը նույն չափով է կիրառվում: Մինչդեռ եթե պատժի չափն ավելի մեծ լինի, օրինակ, ավելի շատ տուգանվեն կամ կալանքի ժամկետն ավելի մեծ լինի, մարդիկ կհասկանան, որ ընտանիքում բռնությունն անպատժելի չէ, նույնիսկ այսպես կոչված «ոչ ծանր» դեպքերում:»

ՔԿ Լոռու մարզային քննչական վարչություն

296. Ի տարբերություն այս դիրքորոշման՝ փորձագետների մյուս խումբը կարծում է, որ ընտանեկան բռնության քրեականացումն ավելի շուտ կվնասի ընտանեկան բռնության դեմ պայքարին և կանխարգելմանը, քան կնպաստի այդ գործընթացին, և այս դիրքորոշումը պայմանավորում են

[5] Թագուհի Մանսուրյանի գործը՝ http://www.aravot.am/2017/04/10/876702/

մշակութային առանձնահատկություններով, մասնավորապես հայաստանյան հանրությունում ընտանիքի հանդեպ վերաբերմունքով:

297. Թերևս հենց այս գործոնով են պայմանավորված նաև նույնքան հակասական դիրքորոշումները հանրային և մասնավոր մեղադրանքի առաջադրման խնդրի վերաբերյալ: Նրանք ովքեր հակված են քրեականացնել ընտանեկան բռնությունը, պնդում են, որ հանրային մեղադրանքի առաջադրումը պետք է պարտադիր լինի և հակառակը, նրանք, ովքեր վերապահումներ ունեն քրեականացման վերաբերյալ, կարծում են, որ ընտանեկան բռնության դեպքերը պետք է հետաքննվեն մասնավոր մեղադրանքի առաջադրման դեպքում.

> *«Ընտանեկան բռնության դեպքերը հանրային քննության առարկա դարձնելը կարող է հակառակ արդյունք ունենալ: Ընտանեկան բռնության դեպքերը երբեմն մեկանգամյա բնույթ են կրում, ընտանիքը կարողանում է վերականգնվել: Մինչդեռ հանրային քննության պրակտիկայի պարագայում տուժողը հնարավորություն չի ունենա ինքնուրույն որոշել իր ընտանիքի ճակատագիրը:»*
>
> ***ՀՀ ոստիկանության Քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչություն***

298. Փորձագետներից մեկի կարծիքով էլ՝ հանրային կամ մասնավոր մեղադրանքի առաջադրման հարցը պետք է թողնել իրավապահ մարմնի աշխատակցի հայեցողությանը, պայմանով, որ ռեսուրսներ կներդրվեն մասնագետներ պատրաստելու գործընթացում.

> *«Պետք չէ հանրային կամ մասնավոր քննության պարտադիր շրջանակներ սահմանել. յուրաքանչյուր դեպք տարբեր է: Միակ ընդհանուր կանոնը, որ կարող է կիրառվել լավ կադրեր պատրաստելն ու նրանց օրենքը յուրաքանչյուր դեպքում յուրովին կիրառելու հնարավորություն ստեղծելն է:»*
>
> ***Երևանի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժին***

299. Օրենքի նախագծի արդյունավետ կիրարկումն ապահովելու համար, որոշ փորձագետներ շեշտում են հանրային պահանջարկի ձևավորման անհրաժեշտությունը՝ նշելով, որ օրենքի ընդունումը *վերևից ներքև* գործընթաց է, պայմանավորված Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններով, սակայն անհրաժեշտ է սկսել զուգահեռ գործընթաց և բոլոր հասանելի միջոցներով նպաստել հասարակությունում համապատասխան պահանջարկի ձևավորմանը:

300. Խնդրին սերտորեն առնչվում է նաև նախագծի շուրջ հանրային հաղորդակցություն ծավալելու անհրաժեշտությունը, որը կարևորում են հատկապես ՀՀ արդարադատության նախարարությունը և միջազգային գործընկերները.

> *«Ընտանեկան բռնության կանխարգելման մասին օրենքի ընդունմանը պետք է նախորդի հետևողական ու մշակված աշխատանք հանրության հետ: Հասարակությանը պետք է հասցնել օրենքի իրական բովանդակությունն ու կարևորությունը, որպեսզի վերջինս պատրաստ լինի դրա ընդունմանը:*
>
> *Անհրաժեշտ է մարդկանց հասցնել այն ուղերձը, որ բռնությունը մեր հայկական ավանդույթի ու կենսակերպի մաս երբեք չի կազմել, դա խորթ ու անընդունելի է որևէ ներդաշնակ ու առողջ ընտանիքի համար, պետք է հասնել այն բանին, որ օրինակ հասարակությունը սկսի ծուռ աչքով նայել իր շրջապատի այն մարդուն, ով սիստեմատիկ բռնություն է գործադրում ընտանիքի անդամների նկատմամբ: Ես վստահ եմ, որ դա հիմա էլ է այդպես: Ուղղակի պետք է հասցնել մարդկանց, որ նախագիծը հենց այս հարցերի կարգավորման մասին է:»*
>
> ***Արդարադատության նախարարություն***

301. Մեկ այլ խնդիր, որին անդրադառնում է փորձագետներից մեկը, օրենքի նախագծում սոցիալապես խոցելի խմբերի (ազգային փոքրամասնությունների, տարեցների, ԼԳԲՏ անձանց, հաշմանդամություն ունեցող անձանց) կարիքներին արձագանքելու անհրաժեշտության ամրագրումն է.

> *«Այս խմբերը կրկնակի խոցելի են, և այս կերպ պետությունը կարտահայտի իր պատրաստակամությունն անդրադառնալու այս կարիքներին:*
>
> *Ի դեպ, չեմ կարծում, թե անհրաժեշտ է մանրամասնորեն անդրադառնալ այս կարիքներին հենց նախագծում, որովհետև դա կարելի է անել առանձնահատուկ կարիքներին միտված կառավարության որոշումներով կամ այլ իրավական ակտերով: Ուղղակի բոլոր համապատասխան իրավական ակտերում հղումներ են պետք այս խնդիրներին, որովհետև հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրներին արձագանքելը ենթադրում է փոխկապակցված մոտեցում»:*
>
> ***«Դիսըբիլիթի ինֆո» տեղեկատվական հասարակական կազմակերպություն***

302. Ի դեպ, որոշ փորձագետների կարծիքով, օրենքի նախագծի ընդունումը պետք է դիտարկվի որպես առաջնահերթություն, և հետո միայն, հիմնվելով օրենքի կիրարկման պրակտիկայի վրա, պետք է փորձել բարեփոխել այն.

> *«Օրենքի կիրարկումն իհարկե կարող է հանգեցնել որոշակի խնդիրների, սակայն դրանցից վախենալ պետք չէ, այլ հակառակը, գիտակցելով, որ խնդիրներ լինելու են, աստիճանաբար բարելավել կիրարկման պրակտիկան: Օրինակ, խնդիր կարող է առաջանալ, եթե ըստ նոր ընդունված օրենքի՝ ընտանեկան բռնության դեպքում ոստիկանությունը միջամտի գյուղական համայնքում, որն ավելի փակ սոցիում է, քան քաղաքային համայնքը: Սակայն անգամ նման դեպքերը պետք է օգտագործել որպես նախադեպ և ցույց տալ, թե ինչ կարող է տեղի ունենալ այն դեպքում, երբ ընտանիքը և համայնքը հրաժարվում է միջամտությունից»:*
>
> ***Քաղաքացիական հասարակության ինստիտուտ***

7.3. Ինստիտուցիոնալ կարողություններ

303. Ընտանեկան բռնությունը կանխելու և դրա դրսևորումներին արդյունավետորեն արձագանքելու համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման անհրաժեշտության և կարիքների մասին նշում են բոլոր փորձագետները:

304. Թերևս առաջնային ոլորտներից մեկը **սոցիալական ոլորտն** է, քանի որ ընտանեկան բռնության կանխարգելման գործառույթների հիմնական մասի համար պատասխանատու են հենց այս ոլորտի դերակատարները, հատկապես քանի որ վարվող պետական քաղաքականությունը նախատեսում է ընտանեկան բռնությանը սոցիալ-հոգեբանական արձագանք տրամադրել համալիր սոցիալական ծառայությունների համակարգի շրջանակներում: Այս առումով առաջնային խնդիրներից մեկը *սոցիալական աջակցության տարածքային մարմինների կայացումն է*, որին, փորձագետների կարծիքով, խոչընդոտում են.

- սոցիալական աջակցության տարածքային մարմինների աշխատակիցների ցածր վարձատրությունը, որը չի համապատասխանում նրանց աշխատանքային ծանրաբեռնվածությանը և արդյունքում մոտիվացիայի ցածր մակարդակը.
- սոցիալական աջակցության տարածքային մարմինների աշխատակիցների մասնագիտական անբավարար կարողությունների, որն առաջացել է նրանց գործառույթների փոփոխության, ինչպես նաև համապատասխան մասնագիտական կարողություններ ձեռք բերելու համար անհրաժեշտ նախապայմանների և պրակտիկայի բացակայության արդյունքում.

- մասնագիտական կադրերով անբավարար հագեցվածություն. ՍԱՏԲ աշխատակիցները մասնավորապես նշում են բաժնում հոգեբանի հաստիքի անհրաժեշտության մասին՝ ընտանեկան բռնություն վերապրած անձանց հետ արդյունավետ աշխատանք տանելու նպատակով: Հոգեբանի և սոցիալական աշխատողի հաստիքների կարիքի մասին բարձրաձայնում են նաև մարզպետարանների Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները.
- սոցիալական աշխատողների կրթության և մասնագիտական զարգացման անբավարար որակը.
- դեպքի վարման հմտությունների և ճիշտ ուղղորդում կատարելու համար անհրաժեշտ գիտելիքի պակասը.
- դեպքերի վարման համար նախատեսվող համապարփակ էլեկտրոնային համակարգի ամբողջականացում և վերջնական շահագործում, ինչպես նաև դրա կիրառման համար անհրաժեշտ հմտությունների պակասը.
- ՍԱՏԲ գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի հաճախակի փոփոխությունները, ինչի արդյունքում խաթարվում է ՍԱՏԲ ամենօրյա աշխատանքը.
- սոցիալական աշխատողի անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ մեխանիզմների բացակայությունը, հատկապես՝ տունայցերի ժամանակ.
- ՍԱՏԲ ամենօրյա աշխատանքն արդյունավետորեն կազմակերպելու համար անհրաժեշտ ռեսուրսների սակավությունը՝ մասնավորապես ավտոմեքենայի, վառելիքի, դեպքի վարման ընթացքում զրույցներ վարելու համար անհրաժեշտ առանձնասենյակների պակասը:

305. Սոցիալական ոլորտում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման առումով փորձագետները նշում են նաև ընտանեկան բռնություն վերապրած անձանց մատուցվող *ծառայությունների որակի խնդիրը*, որակի ապահովման համար *անհրաժեշտ չափորոշիչների մշակման* և ընդհանրապես *ստանդարտացման անհրաժեշտությունը*, ինչը թույլ կտար վերահսկել մատուցվող ծառայությունների որակը: Ըստ ՀՀ ԱՍՀՆ ներկայացուցչի՝ «Սոցիալական աջակցության մասին» օրենքի ընդունումից հետո արդեն իսկ մշակվել է «Ընտանեկան բռնության ենթարկված անձանց՝ որպես ժամանակավոր օթևան՝ կացարան և սոցիալական ծառայություններ տրամադրելու կարգն ու պայմանները»[6], որով սահմանվում են կացարաններին ներկայացվող ընդհանուր պահանջները: Հավելվածում նշվում է, որ «*օթևանի գործունեության համար անհրաժեշտ ընդհանուր և բնակելի մակերեսին, օթևանի անձնակազմին (աշխատողների թվին և հաստիքներին), օթևանում միաժամանակյա բնակվողների առավելագույն թվին, նրանց տրամադրվող սննդի չափաքանակին, դրա էներգետիկ արժեքին, հագուստի, սպիտակեղենի, կոշկեղենի, անկողնային և անձնական հիգիենայի պարագաների չափորոշիչներին, օթևանի անվտանգության ապահովմանը և այլ պայմաններին ներկայացվող պահանջները*» կարող են սահմանվել ՀՀ կառավարության որոշմամբ: Սակայն, նման որոշում առայժմ չկա:

306. Վերջապես, կարևորվում են նաև

- ոլորտի կառույցների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման շարունակականությունը.
- վերապատրաստումների թիրախավորվածությունը.

> *«Շատ լավ կլիներ, եթե տարբեր կազմակերպությունները, որոնք մեզ վերապատրաստման դասընթացներ են առաջարկում, նաև ծանոթ լինեին մեր նման կենտրոնների գործառույթներին ու աշխատանքներին, որպեսզի դասընթացներն ավելի թիրախավորված լինեին»:*
>
> ***«Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ***

[6] Հավելված N 3 ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման՝ «Ընտանեկան բռնության ենթարկված անձանց՝ որպես ժամանակավոր օթևան՝ կացարան և սոցիալական ծառայություններ տրամադրելու կարգն ու պայմանները»

307. Վերապատրաստումների բովանդակության թիրախավորվածության մասին բարձրաձայնում են նաև մարզպետարանների Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները.

> *«Վերապատրաստումների բովանդակության առումով, թերևս պետք է շեշտեմ մի քանի հմտություններ և գիտելիքներ, որոնք խիստ անհրաժեշտ են մեր գործունեությունն ավելի արդյունավետորեն կազմակերպելու համար, մասնավորապես.*
>
> *- Հաղորդակցության հմտություններ՝ ինչպես հաղորդակցվել երեխայի, տարեցի, կնոջ հետ ովքեր ենթարկվել են բռնության, ինչպես խուսափել երկրորդային զոհացումից.*
>
> *- Հոգեբանական բազային գիտելիքներ.*
>
> *- Հոգեկան խնդիրներ ունեցող մարդկանց հետ աշխատանքի հմտություններ, որովհետև ընտանեկան բռնության դեպքերը երբեմն հենց նման մարդկանց մասկացությամբ են տեղի ունենում.*
>
> *- Թիմային աշխատանքի հմտություններ.*
>
> *- Մարդու և երեխայի իրավունքներ:*
>
> *- Վերապատրաստումներ իհարկե լինում են, սակայն հիմնականում գենդերային հիմնահարցերի իրազեկման վերաբերյալ, որը կարծում եմ արդեն բավարար է և կարիք կա նոր գիտելիքների ու հմտությունների:»*
>
> ***Շիրակի մարզպետարանի Ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին***

- մասնագիտական գրականության ձևավորման.
- ծառայությունների մատուցման որակի մոնիտորինգի խնդիրները:

308. **Արդարադատության ոլորտում** կարևորվում է իրավապահ մարմինների՝ ընտանեկան բռնություն վերապրած անձանց հետ աշխատանքի հմտությունների ձևավորումը՝ համատեղ վերապատրաստումների միջոցով, ինչպես նաև իրավաբանական կրթության բովանդակությունում ընտանեկան բռնության թեման առանձնացնելու անհրաժեշտությունը.

> *«Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ոստիկանների, քննիչների, դատավորների և դատախազների՝ զոհերի հետ աշխատանքի հմտություններին: Ներկայում նրանք զոհերի հետ աշխատանքի ընթացքում համապատասխան հոգեբանական աջակցություն տրամադրելու կարողություններ չունեն, որի արդյունքում հնարավոր կլինի խուսափել կրկնազոհացումից:»*
>
> ***ՄԻՊ աշխատակազմ***

309. Շեշտվում է նաև բռնություն վերապրած անձանց հետ աշխատանքի համար անհրաժեշտ ենթակառուցվածքների անհրաժեշտությունը, օրինակ՝ առանձնասենյակներ և հատուկ սենյակներ երեխաների համար:

310. Կարևորվում են նաև *բազմամասնագիտական պարբերական հանդիպումները*, ինչը կնպաստեր ուղղորդման մեխանիզմների և համապատասխան կառույցների վերաբերյալ տեղեկատվության տարածման, ինչպես նաև տարբեր խմբերի հետ աշխատանքի առանձնահատկություններին ծանոթանալուն.

> *«Չափազանց կարևոր է տարբեր մասնագետների հետ պարբերական հանդիպումները՝ մանկավարժների, դաստիարակների, հոգեբանների և այլն, որովհետև մեր գործի բնույթով մենք առնչվում ենք գրեթե բոլորի հետ՝ նորածնից մինչև տարեց, տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց հետ, ու շատ լավ կլիներ, եթե ամեն խմբի հետ աշխատող մասնագետների հետ հանդիպումների կազմակերպվեին, որոնց միջոցով*

կծանոթանայինք այդ խմբերի առանձնահատկություններին ու այդպիսով կկարողանայինք ավելի արդյունավետորեն աշխատել նրանց հետ»:

ՔԿ Լոռու մարզային քննչական վարչություն

311. Դատական համակարգում անհրաժեշտ են տուժողակենտրոն իրավական մեխանիզմներ և երեխայի լավագույն շահից բխող պրակտիկայի ձևավորում.

«Դատական գործընթացները բարելավելու անհրաժեշտություն կա. երբեմն գործի դատական քննության ընթացքում երեխան տարիներ շարունակ զրկված է լինում ծնողին տեսակցելու իրավունքից և «խորթանում է»:»

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ, Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին

312. **Կրթության ոլորտում** առկա ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման խնդիրներ են համարվում.

- ընտանեկան բռնության վերաբերյալ գիտելիքի անբավարար մակարդակը դպրոցում.
- դպրոցում սոցիալական մանկավարժի և/կամ հոգեբանի աշխատանքի ծանրաբեռնվածությունը.
- դպրոցի սոցիալական մանկավարժի համար մշակված համապատասխան աշխատանքային գործիքների բացակայությունը, որը թույլ կտար բացահայտել ընտանեկան բռնություն վերապրած երեխային և համապատասխանաբար ուղղորդել.
- ուսուցիչների վերապատրաստումների հատվածականությունը.
- դասագրքերի մշակման գործընթացի թերությունները, մասնավորապես հեղինակային կազմի ձևավորման և քննադատության (peer review) մեխանիզմների բացակայության առումով, որի արդյունքում դասագրքերի բովանդակությունը չի վերանայվում գենդերային հավասարության սկզբունքի տեսանկյունից:

313. **Առողջապահության ոլորտում** անհրաժեշտ կարողությունների առումով առանձնացվում են սոցիալապես խոցելի խմբերի հետ աշխատանքի մասնագիտական, մասնավորապես՝ հոգեբանական աշխատանքի հմտությունների կարիքը և առողջապահական ծառայություններ մատուցող կառույցներում ընտանեկան բռնություն վերապրած անձի նույնականացնելու և ուղղորդման մեխանիզմների վերաբերյալ ուղեցույցների կարիքը.

«Պոլիկլինիկայի անձնակազմի ամենօրյա աշխատանքների ընթացքում, և հատկապես հաշմանդամ ունեցող ընտանիքներին սպասարկելիս, հոգեբանի ծառայությունների անհրաժեշտություն է զգացվում: Բժիշկներին նույնպես անհրաժեշտ է փոխանցել հոգեբանական օգնություն տրամադրելու համար անհրաժեշտ կարողություններ և գիտելիք, ինչպես նաև բարելավել նրանց շփման կարողությունները: Սա կարևոր է նաև ընտանեկան բռնությունը հասցեագրելու տեսանկյունից, քանի որ շփման առաջին իսկ րոպեներից հնարավոր է հասկանալ մարդու մոտ ֆիզիկական խնդիրների կամ հոգեբանական ճնշվածության առկայության մասին:»

Երևանի թիվ 1 պոլիկլինիկա

314. **Հայ Առաքելական Եկեղեցու** պարագայում նշվում է հոգևորականի և հոգեբանի համագործակցության անհրաժեշտության մասին՝ ընտանեկան բռնություն վերապրած անձին և բռնարարին արդյունավետորեն աջակցելու նպատակով՝ թեև շեշտվում է մոտեցումների տարբերությունը.

«Հոգևորականի և հոգեբանի համագործակցության կարիք է զգացվում, թեև նրանց մոտեցումները կարող են տարբերվել. եթե հոգևորականի համար կարևորվում է ընտանիքն որ դրա առողջությունը, (թեև հովվական աշխատանքի առանցքում անհատն է),

հոգեբանի համար առանցքային է անհատը: Ամեն դեպքում, ընտանիքի հարցը եկեղեցու համար բավականին զգայուն հարց է:»

ՀԱԵ Քրիստոնեական դաստիարակության կենտրոն

315. Բոլոր ոլորտներում կարևորվում է ծառայություններ մատուցող կառույցների աշխատակիցների միջև *պարբերական և շարունակական փորձի փոխանակումը*, ինչը թույլ կտար փոխանցել պրակտիկայի ընթացքում ձեռք բերված գիտելիքն ու հմտությունները:

316. Մեկ այլ կարիք, որը նշվում է, բոլոր ոլորտներում սոցիալապես խոցելի տարբեր խմբերի՝ հաշմանդամություն ունեցող անձանց, ԼԳԲՏ, տարեցների, հոգեկան խանգարումներ ունեցող անձանց հետ աշխատանքի հմտությունների անբավարար մակարդակն է, ինչպես նաև առանձնացված վիճակագրություն վարելու կարողությունների անհրաժեշտությունը.

«Տարբեր ոլորտների մասնագետների՝ հոգեբանների, բժիշկների, իրավապահ մարմինների և ընդհանրապես, պետական կառույցների աշխատակիցների վերապատրաստման կարիք կա, թե ինչպես աշխատել հաշմանդամություն ունեցող անձանց հետ՝ հաշվի առնելով նրանց կարիքներն ու սոցիալիզացիայի առանձնահատկությունները»:

«Դիսաբիլիթի ինֆո» տեղեկատվական հասարակական կազմակերպություն

317. Եվ վերջապես, բոլոր ոլորտներին հատուկ է բռնարարի վերականգնման աշխատանքներ կազմակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական կարողությունների կարիքը:

7.4. Համագործակցություն

318. Թերևս ընտանեկան բռնության դրսևորումներին արդյունավետ բազմաոլորտային արձագանք տրամադրելու համար առաջին անհրաժեշտ նախապայմաններից մեկն ինստիտուցիոնալ համագործակցությունն է, որը թույլ է տալիս համակարգել արձագանքի տարբեր բաղադրիչները՝ արդյունավետորեն օգտագործելով առկա ռեսուրսները:

319. Միջգերատեսչական համագործակցությունը համակարգող առանցքային շրջանակային փաստաթուղթը 2015թ. սեպտեմբերի 10-ի N 1044-ն ՀՀ կառավարության որոշումն է *«Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին»*: Ինչպես նշվում է Կանոնակարգի ընդհանուր դրույթներում՝ «Կանոնակարգի նպատակը սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց (ընտանիքների) հայտնաբերումն է, անհատական սոցիալական ծրագրերի կազմումն ու դրա իրականացումը և շարունակական հսկողության ապահովումը:» Կանոնակարգի 3-րդ կետով սահմանվում են խնդրահարույց դեպքերը, որոնք կարող են նախանշել անձի (ընտանիքի)՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված լինելը կամ հայտնվելու հնարավորությունը, ներառյալ ընտանեկան բռնությունը կամ դրա սպառնալիքը:

320. Կանոնակարգը սահմանում է նաև համագործակցության կողմերը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իր ենթակառուցվածքներով, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարությունն ի դեմս՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացնող կազմակերպությունների, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը, ՀՀ արդարադատության նախարարությունը, ՀՀ մշակույթի նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարությունը, Ոստիկանությունը, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը, մարզպետարանները և ՏԻՄ-երը: Ակնհայտորեն, այս փաստաթղթով փորձ է արվել համակարգել համապարփակ ծառայությունների մատուցումը սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց:

321. Այդուհանդերձ, Կանոնակարգի մշակումից հետո ոչ բոլոր դերակատարներն են իրականացրել որոշմամբ սահմանված դրույթները.

> *«Ըստ որոշման՝ 6 ամսյա ժամկետում ներառված գերատեսչությունները պետք է մշակեին համագործակցության ընթացակարգերի նկարագրություն, մինչ այժմ սակայն դրանք չեն տրամադրվել բոլոր դերակատարների կողմից:»*
>
> ***«Սոցիալական արդարություն» ՀԿ***

322. Ըստ Կանոնակարգի՝ նախատեսվում է սոցիալական դեպքի վարման շրջանակներում բազմամասնագիտական խմբի ստեղծում և աշխատանք, սակայն ինչպես նշում են հարցազրույցին մասնակցած սոցիալական ծառայություններ մատուցող պետական կառույցները, այս խմբի աշխատանքը գործնականում բավականին բարդ է և հաճախ անարդյունավետ, որովհետև կախված համայնքից՝ *երբեմն անհնարին է լինում համալրել խումբն անհրաժեշտ մասնագետներով*, և երկրորդ, *երբեմն խմբում ներառված են լինում այնքան տարաբնույթ անդամներ*, որ աշխատանքի համակարգման խնդիրն սկսում է միջամտել դեպքի վարմանը գործընթացին.

> *«Ենթադրվում է, որ այս խումբը պետք է քննարկի ընտանեկան բռնության բացառիկ բարդ դեպքերը, սակայն իրականում նման պրակտիկա գրեթե չկա, որովհետև 40 կազմակերպություն չի կարող արդյունավետորեն աշխատել մեկ դեպքի վրա: Որոշումներ ընդունելիս պետք է այնպես կազմել դրանք, որպեսզի դրանք ֆունկցիոնալ լինեն, որը նշանակում է, օրինակ, որ նման խմբում պետք է լինեն միայն ընտանեկան բռնության դեպքերին ուղղակիորեն արձագանքող կառույցներ, մասնավորապես ոստիկանությունը, ԽՀՀ, սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնը, մարզպետարանի համապատասխան բաժինները, պոլիկլինիկան:»*
>
> ***Շիրակի մարզպետարանի Ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին***

323. Ընտանեկան բռնության դեմ պայքարի և կանխարգելման նպատակով տարբեր կառույցների՝ քաղաքականություն մշակողների, իրականացնողների և ծառայություններ մատուցողների, միջև համագործակցությունը խթանելու համար ՀՀ կառավարության կողմից մշակվել են նաև մի շարք մեխանիզմներ: Մասնավորապես, ՀՀ վարչապետի 2010թ. 30 մարտի 213-Ա որոշմամբ ստեղծվել է «Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողով», որին անդամակցում են համապատասխան նախարարություններ, միջազգային գործընկերներ և հասարակական կազմակերպութուններ: Այս հանձնաժողովի աշխատանքները ներառում են մասնավորապես ընտանեկան բռնություն վերապրած անձանց աջակցության տրամադրման խնդիրները (մանրամասների համար տե՛ս, օրինակ, Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի 2016թ. հունիսի 9-ի աշխատանքային հանդիպան արձանագրությունը[7]):

324. ՀՀ վարչապետի մեկ այլ՝ 2016թ. հունիս 28-ի 567-Ա որոշմամբ՝ «Ընտանեկան բռնության դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակման միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին», ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի կազմում ներգրավվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ առողջապահության, ՀՀ ֆինանսների նախարարությունների, ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ ոստիկանության և ՄԻՊ ներկայացուցիչներ:

325. Ըստ էության, սա օրենքի երկրորդ նախագիծն է, որի մշակման գործընթացում, առնվազն ֆորմալ առումով, չեն մասնակցում հասարարկական կազմակերպությունները: Սակայն, ինչպես նշում է գործընթացի համակարգող Արդարադատության նախարարությունը՝ նախորդ նախագծի մշակման փորձից ելնելով, այս անգամ, որոշել է հաշվի առնել բոլոր կարծիքներն ու քննադատությունները, որոնք

[7] Արձանագրություն N 13 Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 9-ի. http://mlsa.am/wp-content/uploads/2017/05/ardzanagrutyun-13.pdf

հնչել են առաջին նախագծի շուրջ ծավալված քննարկումների ընթացքում և մինչ հանրային քննարկման ներկայացնելը, օրենքի նախագիծը մշակել պետական կառույցներում, որպեսզի նախագծի հանրայնացումից հետո դրա շուրջ քննարկումները լինել ավելի շոշափելի.

> *«Օրենքի նախագիծը մշակելիս Արդարադատության նախարարությունը չէր կանխատեսել հանրության այն աստիճան բացասական արձագանքը, որին ականատես եղանք [առաջին] նախագիծը հանրայնացնելուց հետո: Սա թերևս մեր քաղաք ամենամեծ դասերից էր: Մյուս կողմից, միշտ չէ, որ մենք բավարար ժամանակ և ռեսուրսներ ենք ունենում այսօրինակ զգայուն հարցերի միջավայրային գործոնները ուսումնասիրելու, խնդիրները վերհանելու և համապատասխան արձագանք պլանավորելու համար: Այսպես, օրինագծի հանրայնացմանը հաջորդեցին Արդարադատության նախարարությանն ուղղված անհիմն, երբեմն զավեշտի հասնող ու մեղմ ասած, թեմային ոչ վերաբերելի «մեղադրանքներ:»*

326. ՀԿ-ների միջև համագործակցության արդյունավետ մեխանիզմ որպես նշվել է Երեխաների պաշտպանության ցանցը (ԵՊՑ), որը երեխաների պաշտպանությամբ զբաղվող հայաստանյան ՀԿ-ների ազգային կոալիցիա է: ԵՊՑ-ն, որը հիմնադրվել է 2005 թվականին, նպատակ ունի նպաստել դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և ընտանիքներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը և դրանց հասցեականության ապահովմանը, ինչպես նաև առաջարկել պետությանը երեխայի պաշտպանության դաշտի կանոնակարգման նոր մեխանիզմներ՝ այդպիսով նպաստելով համակարգի բարեփոխմանը: Այն ներկայում ներգրավում է երեխաների պաշտպանությամբ զբաղվող 39 անդամ-կազմակերպություն: Ըստ փորձագետների՝ ԵՊՑ-ն այն ֆորմալ կառույցն է, որը փոխարինում է կառույցի աշխատակցի սոցիալական կապիտալի հայեցողական օգտագործմանը՝ ապահովելով բազմակողմանի տեղեկատվական հոսք.

> *«Ուղղորդման և համագործակցության պրակտիկան բավականին բարելավվել է վերջերս, հատկապես Երեխաների պատշտպանության ցանցի ստեղծումից հետո, որի շրջանակներում մենք ծանոթանում և կապ ենք հաստատում տարբեր մասնագետների հետ և գիտենք, թե որ դեպքում ում կարող ենք ուղղորդել, ումից կարող ենք աջակցություն խնդրել նաև մասնագիտական առումով: Այս ցանցը հսկայական աշխատանք է կատարել իրազեկման առումով, նոր գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելու առումով:»*
>
> ***«Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ***

327. Փորձագետները նշում են արդյունավետ համագործակցության պրակտիկայի մասին, մասնավորապես հետևյալ ոլորտներում.

- <u>ընտանեկան բռնություն վերապրած անձի ուղղորդում</u>՝ թե՛ պետական կառույցները, թե՛ ՀԿ-ները նշում են հաստատված փոխադարձ արդյունավետ համագործակցության մասին, որը ձևավորվել է՝ ելնելով տվյալ դեպքի արձագանքման պրակտիկայից.
- <u>տեղեկատվություն և իրազեկում.</u> եռակողմ համագործակցություն պետական կառույցների, ՀԿ-ների և միջազգային գործընկերների միջև կոնկրետ ծրագրերի շրջանակներում և դրական համագործակցություն ԶԼՄ-ների և ՀԿ-ների միջև.

> *«ԶԼՄ-ները և ՀԿ-ները լավ տեղյակ են միմյանց գործունեության մասին և անհրաժեշտության պարագայում գիտեն՝ ում կարելի է դիմել: ԶԼՄ-ները բավականին բաց են և եթե բռնության զոհը կամ նրա շահերը պաշտպանող ՀԿ-ն դիմում է որևէ խնդիր լուսաբանելու ցանկությամբ և լրագրողը տեսնում է հետաքրքիր ու արդյունավետ ռեպորտաժ պատրաստելու հնարավորություն, ապա համագործակցությունը անպայման կկայանա: Դա վերաբերում է նաև շարունակական լուսաբանում իրականացնելու անհրաժեշտությանը, ինչպիսին, օրինակ լինում է դատական գործընթացների ժամանակ:»*
>
> ***Պանարմենիան Մեդիա Գրուպ, «Ժամը» լրատվական հեռուստահաղորդում***

- մասնագիտական վերապատրաստում. պետական կառույցների, ՀԿ-ների և միջազգային գործընկերների ջանքերով պարբերաբար կազմակերպվում են մասնագիտական վերապատրաստման դասընթացներ իրավապահ մարմինների աշխատակիցների և սոցիալական ոլորտում ծառայություններ մատուցող մասնագետների համար:

328. Այդուհանդերձ, համագործակցության նման պրակտիկան դեռևս պատեհական բնույթ ունի և մեխանիզմների ձևավորման հիմք չի դարձել:

329. Ըստ փորձագետների՝ համագործակցության առումով կարևորվում են հետևյալ խնդիրները՝

- ընտանեկան բռնության երևույթին ու դրսևորումներին արձագանքող կառույցներում ընդհանուր մոտեցման բացակայություն.

> *«Խնդիրը հասցեագրող կառույցների միջև ձևավորված միասնական մոտեցում պետք է լինի: Միասնական մոտեցման ձևավորման ճանապարհին անհրաժեշտ է կազմակերպել համատեղ դասընթացներ ոստիկանության, քննիչների և դատախազների համար»:*
>
> ***ՔԿ քրեական գործերի քննության աջակցության վարչություն***

Ընդհանուր մոտեցման խնդիրը բարձրաձայնում են նաև իրավապահ մարմինները.

> *«Ընդհանուր մոտեցումը ընտանեկան բռնությանը պետք է հիմնված լինի քաղաքացիական, քրեական, վարչական օրենսգրքերի, Սահմանադրական դատարանի որոշումների պրակտիկայի, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վրա: Այս բոլոր ինստիտուտները կոչված են ապահովելու կոնկրետ հարցի վերաբերյալ ընդհանուր իրավական պրակտիկան»:*
>
> ***ՀՀ Գլխավոր դատախազություն***

- ընտանեկան բռնությանն արձագանքող պետական կառույցների գործառույթների և ուղղահայաց հարաբերությունների հստակեցման խնդիր.

> *«Մեկ այլ խոչընդոտ, որին բախվում ենք ինստիտուցիոնալ համագործակցության առումով, պետական կառույցների անուղղակի հիերարխիկ հարաբերություններն են: Օրինակ՝ Գյումրիի գիշերօթիկ դպրոցն (նախկին մանկատուն) ուղղակիորեն ենթարկվում է ԱՍՀՆ-ին, սակայն երեխաների և իր շրջանավարտ կանանց հարցերով դիմում է մեզ: Ուղղակի կապի բացակայությունը թե՛ այս դեպքում, թե՛ մեր բաժնի և նախարարության դեպքում բարդացնում է բյուրոկրատիան և նվազեցնում արձագանքման արդյունավետությունը»:*
>
> ***Շիրակի մարզպետարանի Ընտանիքի,կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին***

- ծառայություններ մատուցող ՀԿ-ների կայունության խնդիրը. քանի որ ՀԿ-ները իրենց գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ հիմնականում ստանում են միջազգային գործընկերներից, վերջիններիս առաջնահերթությունների փոփոխությունը կամ ծրագրերի ավարտը խաթարում են մատուցվող ծառայությունների շարունակականությունը.

> *«ՀԿ-ների հետ համագործակցությունը արդյունավետ և տևական դարձնելու համար պետությունը պետք է որոշակի որակական չափանիշների համապատասխանող ՀԿ-ներին տա գործընկերոջ կարգավիճակ և սուբսիդավորում տրամադրի: Դա ՀԿ-ներին թույլ կտա կախված չլինել օտարերկրյա դոնորների դրամաշնորհներից:»*
>
> ***Երևանի Շենգավիթ վարչական շրջան***

- ընտանեկան բռնությանն արձագաքնելու արդյունավետությունը բարձրացնելու համար համագործակցության հավելյալ արժեքի անտեսում՝ սեփական գործունեության ծանրաբեռնվածության պատճառով.

> *«Երբեմն մենք այնքան ծանրաբեռնված ենք մեր իսկ աշխատանքով, որ ժամանակ չենք ներդնում գնահատելու այն աշխատանքը, որ ուրիշներն են անում: Սակայն, եթե մենք դա չանենք, չենք էլ կարող ակնկալել, որ այլոք կաշխատեն մեզ հետ: Ես նկատել եմ, որ Հայաստանում բազմաթիվ շահագրգիռ կառույցներ մրցակցում են և փորձում գնահատված զգալ: Թեև ՀԿ-ների համար կարևոր է անկախությունը, կառավարությունը կարող է ավելի մեծ դեր ունենալ նրանց աշխատանքը գնահատելու առումով և նրանց ի մի բերելու՝ հանուն ընտանեկան բռնության և երեխաների հանդեպ բռնության բազմաթիվ դժվարին խնդիրները լուծելու նպատակով»:*
>
> ***ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ***

- մասնակցային որոշումների կայացման թերի պրակտիկա.

> *«Օրենքի նախագծի քննարկման ժամանակ շատ լավ կլիներ, եթե մասնակցեին մարզային բոլոր ոստիկանական բաժանմունքները, որովհետև ընտանեկան բռնության դրսևորման մարզային ու համայնքային առանձնահատկություններ կան»:*
>
> ***Ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժին***

- պետական մարմինների և ՀԿ-ների միջև համագործակցության միակողմանիություն.

> *«Մենք բավականին լավ համագործակցում ենք պետական կառույցների հետ, հատկապես մարզպետարանների Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների հետ: Սակայն պետք է նշեմ, որ այս համագործակցությունը միակողմանի է և, որպես կանոն, սահմանափակվում է իրենց կողմից մեր ապաստարան կանանց ուղղորդելով»:*
>
> ***«Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ***

- լուծումներ չառաջարկող քննադատություններ և մեղադրանքներ.

> *«Համագործակցությունը ՀԿ-ների հետ բավական բացեր ունի: Վերջիններս մոնոպոլ են ոլորտում ծառայություններ մատուցելու առումով, ինչն էլ առիթ է հանդիսանում ցանկացած դեպքում պետական կառույցներին քննադատելու համար: Փորձ չի արվում համագործակցության եզրեր փնտրել:»*
>
> ***Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն***

- համալիր սոցիալական ծառայությունների համակարգի շարունակական ներդրման ընթացքում սոցիալական աշխատողների դերի կարևորում.
- իրավապահ մարմինների աշխատանքներին խոչընդոտելու միտում.

> *«Երբեմն համագործակցությունը չի կայանում ՀԿ-ների հետ: Օրինակ լինում են դեպքեր, երբ քննության գործընթացին օժանդակելու փոխարեն փուժողի փաստաբանը արհեստականորեն խոչընդոտում է գործընթացը»*
>
> ***ՔԿ Քրեական գործերի քննության աջակցության վարչություն***

330. Հարցազրույցների արդյունքում ակնհայտ է դառնում, որ թեև համագործակցությունը խրախուսվում է նաև պետական մակարդակում, գործնականում ինստիտուցիոնալ համագործակցության մեխանիզմների

բացակայությունը կամ անարդյունավետությունը հանգեցնում են իրավիճակի, որտեղ տարբեր կառույցների միջև *համագործակցությունը մեծ մասամբ պայմանավորված է կառույցների աշխատակիցների հայեցողական դիրքորոշմամբ և նրանց սոցիալական կապիտալի ընձեռած հնարավորությունների կիրառմամբ, ինչպես նաև միջազգային գործընկերների ֆինանսական աջակցությամբ իրականացվող ծրագրային գործողություններով*:

8. Ամփոփում

8.1. Ընկալումներ ընտանեկան բռնության դրսևորումների վերաբերյալ

331. Ընդհանուր առմամբ, ընտանեկան բռնության դրսևորումների և տեսակների մասին ընկալումները հիմնականում նույնական են՝ անկախ սեռից, տարիքից, բնակության վայրից և բռնության փորձառության հանգամանքից: Առանձնացվում են ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական բռնության տեսակները: Հատկանշական է, որ որպես ֆիզիկական բռնության հիմնական դրսևորում նշվում է ծեծը, իսկ հոգեբանական բռնության դրսևորումներում առաջնային են համարվում շարունակական կան պարբերական վիրավորանքը, անտեսումը, նվաստացումը, սպառնալիքները, գործունեության և տեղաշարժի սահմանափակումներն ու արգելքները:

332. Տնտեսական բռնության երկու հիմնական դրսևորումները տղամարդու կողմից կնոջ տնտեսական գործունեության արգելքն է և ֆինանսական միջոցներից զրկելը: Սա թերևս բռնության միակ տեսակն է, որտեղ որպես տուժող համարվում են նաև տղամարդիկ: Մասնավորապես, տղամարդկանց հանդեպ կանանց կողմից տնտեսական բռնություն է համարվում տղամարդու եկամտի տնօրինումը, առանց վերջինիս կարծիքը հաշվի առնելու, ինչպես նաև, կնոջն ու ընտանիքին ֆինանսապես ապահովելու կնոջ շարունակական պահանջները և սպառնալիքները:

333. Սեռական բռնությունը, որպես ընտանեկան բռնության տեսակ, գրեթե չի նշվում, և եթե անգամ որևէ դիտարկում լինում է սեռական բռնության մասին, այն չի քննարկվում, ինչը թերևս բացատրվում է սեռականության, սեռական հարաբերությունների մասին հայ հասարակությունում հանրային դիսկուրսի բացակայությամբ և/կամ բազմաթիվ տաբուների առկայությամբ:

334. Հատկանշական է, որ բոլոր խմբերում, ներառյալ բռնություն վերապրած կանանց, հոգեբանական բռնությունը համարվում է շատ ավելի ծանր դրսևորում, քան ֆիզիկական բռնությունը:

335. Ընտանեկան բռնության հիմնական զոհ են համարվում կանայք և երեխաները: Համարվում է, որ երեխայի հանդեպ բռնությունն ավելի թաքնված է, քան կնոջ հանդեպ բռնությունը, և շատ ավելի վտանգավոր է թե՛ կարճաժամկետ, թե՛ հատկապես երկարաժամկետ առումով, որովհետև երեխան ավելի անպաշտպան է և չի կարողանում, անգամ չի ցանկանում պաշտպանվել իր ծնողներից բռնության դրվագների դեպքում: Երկարաժամկետ առումով, նա որդեգրում է կա՛մ բռնություն կիրառողի կա՛մ զոհի վարքագծային մոդելը:

336. Հետազոտության արդյունքները վկայում են նաև ընտանեկան բռնության դրսևորումների վերաբերյալ ընկալումների որոշակի առանձնահատկություններ՝ ըստ մարզերի: Այսպես, Գեղարքունիքում, ավելի քան Երևանում և Շիրակում, հակված են կնոջից ակնկալել հանդուրժողականություն և մեղադրել նրան ընտանիքում բռնություն հրահրելու մեջ:

337. Քաղաքներում և գյուղերում ընտանեկան բռնության դրսևորումների տարածվածության մասին առկա ընկալումների համեմատությունը վկայում է, որ.քաղաքում համոզված են, թե գյուղում բռնությունն ավելի տարածված է՝ պայմանավորելով դա գյուղի ավանդական մշակույթով, ավելի ցածր կրթական ցենզով և իրավակագիտակցության ցածր մակարդակով, ինչպես նաև ընդգծված հակվածությամբ՝ թաքցնելու բռնության երևույթները: Մինչդեռ գյուղում պնդում են, թե ընտանեկան բռնության դրսևորումները գյուղում ավելի սակավաթիվ են, քանի որ ի տարբերություն քաղաքի, գյուղում բոլորն իրար ճանաչում են և սոցիալական մեխանիզմներով հնարավոր է կանխել ընտանեկան բռնությունը:

8.2. Ընտանեկան բռնության առաջացմանը նպաստող պատճառներ և գործոններ

338. Թեև ընտանեկան բռնությանը նպաստող գործոնների վերաբերյալ ընկալումները գրեթե նույնական են բոլոր խմբերում, որոշակի տարբերություն այդուհանդերձ առկա է՝ պայմանավորված մասնակիցների *բնակության վայրով, տարիքով և սեռով*: Տարբերության առանցքը գործոնների կարևորության ընկալումն է, որը պայմանավորված է այն հանգամանքով, թե ինչպես են մասնակիցները ընկալում այդ գործոնների ազդեցությունն իրենց սահմանմամբ ընտանեկան բռնության դրսևորման վրա:

339. Անկախ տարիքից, սեռից և բնակության վայրից, առաջնային է համարվում բռնության վարքագծային մոդելի վերարտադրության գործոնը: Սոցիալական միջավայրի ազդեցությունը ևս համարվում է գործոն,

որը բոլոր խմբերը կարևորում են, թեև Շիրակում և Գեղարքունիքում այն ավելի է կարևորվում, քան մայրաքաղաքում, ու թերևս այն պատճառով, որ մայրաքաղաքային խմբերն ավելի երիտասարդ են և ապրում են մայրաքաղաքին ավելի հատուկ ինդիվիդուալիստական միջավայրում, ի տարբերություն մարզերի առավել կոլեկտիվիստական, ավանդական համայնքների:

340. Ակնհայտ է, որ Երևանի մասնակիցները, որոնց սոցիալական միջավայրն ավելի բազմաշերտ և փոփոխական է, սոցիալ-տնտեսական վիճակն՝ ավելի բարեկեցիկ, շարժունակության հնարավորությունները՝ ավելի լայն, կրթական ցենզն՝ ավելի բարձր, որոնք ուրբան միջավայրին հատուկ ճկունություն ունեն ընտրություն կատարելիս, ավելի ծանոթ են գենդերային հարցերի վերաբերյալ արևմտյան մոտեցումներին և ընկալումներին, հնարավորություն են ունեցել թե՛ անձամբ մասնակցելու այս հիմնահարցերի շուրջ իրազեկման միջոցառումներին, թե՛ տեղեկացված են ավանդական և ժամանակակից լրատվամիջոցներից, գործոնների դասակարգման ընթացքում առաջնություն են տալիս ընտանեկան բռնությանը նպաստող խորքային գործոններին՝ հայրիշխանական կարծրատիպերին ու դրանց վերարտադրությանը: Մինչդեռ մարզերում, որտեղ մասնակիցների սոցիալական իրողություններն այլ են, ավելի ստատիկ սոցիալական միջավայր, գործազրկության և միգրացիայի բարձր մակարդակ, ինչպես նաև այս գործոններով պայմանավորված բարեկեցության ավելի ցածր մակարդակ, շարժունակության և նոր իրողությունների հետ ծանոթանալու ավելի սահմանափակ հնարավորություններ, առաջնային գործոն է համարվում ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը:

341. Բոլոր խմբերում նշվում են նաև հետևյալ գործոնները, թեև դրանց առաջնայնության որոշակի տարբերություններով՝ ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակ, հայրիշխանական կարծրատիպեր, դրանք վերարտադրող դաստիարակություն, կրթություն և լրատվամիջոցների ազդեցություն, ընդլայնված ընտանիքի՝ հատկապես սկեսրոջ, գործոնը, կոնֆլիկտների լուծման համար անհրաժեշտ հաղորդակցության հմտությունների բացակայություն, համապատասխան գիտելիքի և իրազեկվածության ցածր մակարդակ, անցյալում տրավմատիկ փորձառություն՝ ներառյալ պատերազմական գործողություններին մասնակցությունը, նախաամուսնական հարաբերությունների ներկա պրակտիկա, երեխայի դաստիարակության հարցում ընտանիքի անդամների միջև դերերի բաշխում, ընտանեկան բռնության անպատժելիության ընկալում, ինստիտուցիոնալ ծառայություններից օգտվելու մշակույթի բացակայություն, տարբեր նյութերի չարաշահում և կախվածություն, հոգեկան խանգարումներ, հաշմանդամություն:

342. Ի տարբերություն Երևանի, որտեղ միգրացիան չի դիտարկվում որպես ընտանեկան բռնության առաջացմանը նպաստող գործոն՝ մարզերում այն հաճախ է դիտարկվում որպես այդպիսին, թեև կարծիքները կիսվում են: Քիչ չեն մասնակիցները, որոնց կարծիքով, բացի ընտանիքի սոցիալ-տնտեսական բարեկեցությանը նպաստելուց՝ միգրացիան նաև հեշտացնում է ընտանիքում կնոջ և տղամարդու ավանդական դերերի այլակերպման գործընթացը և նպաստում այս փոփոխությունների հանդեպ տղամարդկանց կողմից ավելի հանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանը:

343. Հատկանշական է նաև երևանյան և մարզային ֆոկուս խմբերում կնոջ և տղամարդու, ինչպես նաև ընտանիքում ամուսինների դերերի վերաբերյալ ընկալումների փոփոխության միտումը: Երևանյան ֆոկուս խմբերի մասնակիցների քննարկումներն արտացոլում են կանացիության և առնականության, հետևաբար ընտանիքում ամուսինների դերերի վերաբերյալ ընկալումների փոփոխություն դեպի ավելի ազատական ընկալումներ՝ հավասար իրավունքներ և հնարավորություններ թե՛ կնոջ, թե՛ տղամարդու համար: Մինչդեռ մարզերում դեռևս նախապատվություն է տրվում կնոջ և տղամարդու ավանդական դերերին՝ անկախ փոփոխվող իրողություններին:

344. Թերևս միակ գործոնը, որի մասին հաճախ նշվում է Շիրակում, կնոջ առցանց ներկայության և սոցիալականացման գործոնն է, որն ինչպես նշվել է, հիմնականում պայմանավորված է SS կիրառման պրակտիկայի տարբերություններով: Ընտանիքում բռնության կիրառման պատճառ է համարվում նաև հաշմանդամությունը, որն ըստ էության կրկնակի խտրականություն է բռնություն վերապրած անձի հանդեպ, թեև այդ մասին բարձրաձայնելը դեռևս խնդրահարույց է հաշմանդամություն ունեցող անձանց համար, իսկ բռնություն վերապրած հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցող կառույցների ներկայացուցիչները հաճախ չեն էլ գիտակցում, որ իրենց վերաբերմունքով նպատում են կրկնակի խտրականության դրսևորմանը:

8.3. Բռնություն վերապրած անձի և բռնարարի վարքը

345. Հետազոտության արդյունքները վկայում են, որ բռնություն վերապրած անձ են համարում առավելապես կնոջն ու երեխային: Հատկանշական է, որ ֆոկուս խմբերում, որտեղ մասնակիցներն ընտանեկան բռնության անձնական փորձառություն չունեն, բռնություն վերապրած կնոջ մասին խոսելիս գերազանցապես խոսվում է կնոջ զգացմունքների և հավանական կամ նորմատիվային վարքի մասին, ավելի հազվադեպ նրան պաշտպանելու անհրաժեշտության մասին, մինչդեռ բռնություն վերապրած երեխայի դեպքում ավելի շատ շեշտվում է նրան պաշտպանելու անհրաժեշտությունը՝ առանց քննարկելու երեխայի վարքը կամ զգացմունքները:

346. Բռնություն վերապրած կանայք ևս կիսում են մեծամասնության կարծիքը, և կարևորում են թե՛ իրենց, թե՛ երեխաներին պաշտպանելու անհրաժեշտությունը՝ նշելով պաշտպանության սոցիալական և իրավական մեխանիզմների բացակայությունը և/կամ դրանց արդյունավետության հանդեպ անվստահությունը:

347. Բռնություն վերապրած կնոջ համար հատկանշական վարք է համարվում մեկուսացումը, բռնության հանդուրժումը, բռնության մասին բարձրաձայնելը միայն այն դեպքում, երբ այլևս կյանքի սպառնալիք կա կամ ընտանիքի ներսում անհնար է լուծել խնդիրը, իրավապահ մարմիններին դիմելու դեպքում դիմումից հրաժարվելը: Նորմատիվային վարք է համարվում բռնարարի հեռանալը:

348. Կնոջ հանդուրժողականության առումով ընկալումները բաժանվում են երկու խմբի՝ պայմանավարված բռնության բնույթով: Ֆիզիկական բռնության առաջին դեպքից հետո բռնություն վերապրած անձը պետք է փորձի հանդուրժել այն, փորձել լուծել խնդիրն ընտանիքի ներսում, իսկ բռնության երկրորդ և հաջորդ դեպքերից հետո հանդուրժելու վերաբերյալ կարծիքները բաժանվում են, հատկապես կանանց շրջանում: Թե՛ բռնություն վերապրած կանայք, թե՛ կանայք, ովքեր նման փորձառություն չեն ունեցել, հակված են ավելի անհանդուրժողական վերաբերմունք ցուցաբերել և կոչ անել կնոջը հեռանալ ամուսնուց, պատշտոնական ապահարզան տալ և ամեն կերպ փորձել ինքնուրույն և ֆինանսապես անկախ կյանք վարել, եթե բռնությունը շարունակական է, քանի որ վտանգված է երեխայի ապագան:

349. Հանդուրժողականության առումով տարբերվում են Երևանի և մարզերի մասնակիցները: Առաջիններն անընդունելի են համարում հանդուրժելը՝ ի տարբերություն մարզերի բնակիչների:

350. Ընտանիքում բռնության մասին բարձրաձայնելը դեռևս չի ընդունվում որպես նորմատիվային վարք: Այն ընկալվում է որպես շղթայական գործընթաց, որը պայմանավորված է մի շարք գործոններով՝ բռնության էսկալիացիայով և տարբեր փուլերում միջամտության արդյունավետությամբ: Չբարձրաձայնելու պատճառներ են համարվում ամոթը, վախը, իրավունքների և ուղղորդման մեխանիզմների վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակը, ապատիան, անվստահությունը ֆորմալ կառույցների հանդեպ, ամուսնալուծված կնոջ սոցիալական խարանից խուսափելու ցանկությունը:

351. Հատկանշական է, որ մասնակիցները դժվարանում են հստակ նշել, թե որն է այն կարմիր գիծը, որից այն կողմ բռնություն վերապրած անձը այլևս չպետք է լռի և պիտի դիմի իրավապահ մարմիններին: Ըստ էության, սահմանը բավականին էլաստիկ է, որովհետև գերակշռող մասը նախապատվություն է տալիս ընտանիքը պահպանելուն, անգամ եթե բռնությունը պարբերական է:

352. Այս հարցի շուրջ որոշակի սոցիալական ընկալման բացակայությունը և բազմաթիվ անհատական մեկնաբանությունների առկայությունը վկայում է, որ դեռևս *չի ձևավորել հանրային ընկալում ընտանեկան բռնության կարմիր գծերի վերաբերյալ*:

353. *Բռնարարի վարքի* վերաբերյալ հիմնական դիտարկումը բռնարարի վարքի փոփոխության անհավանականությունն է, ինչպես նաև բռնարարի շարունակական սպառնալիքները: Բռնություն վերապրած կանայք, անկախ բնակության վայրից, նշում են նաև նրա կողմից պարբերաբար կրկնվող ներման խնդրանքները և փոխվելու խոստումները, հատկապես եթե կինը սպառնում է կամ որոշ ժամանակով իսկապես հեռանում է նրանից:

8.4. Ընկալումներ ընտանեկան բռնությանը միջամտելու վերաբերյալ

354. Միջամտությունը նպատակահարմար է միայն բռնության ծայրահեղ դրսևորումների դեպքում, որովհետև մեծամասնության կարծիքով, միջամտության, հատկապես ֆորմալ ինստիտուտների միջամտության դեպքում, ընտանիքի ապագան այլևս վտանգված է: Միջամտության արդյունավետությունն ավելի բարձր է համարվում, եթե իրականացվում է ոչ ֆորմալ կառույցների, հատկապես տղամարդու ծնողների կողմից:

355. Մարզային առանձնահատկություններից է ՏԻՄ ղեկավարի միջամտության հանդեպ վստահությունը, ինչը թերևս բացատրվում է գյուղի համայնական մշակույթով, ներառյալ ընտանեկան կապերը:

356. Միջամտության վերաբերյալ ընդհանուր առմամբ բացասական կարծիքի հիմնական պատճառը ընտանիքի արժեքը և ոչ թե բռնության դեմ անհանդուրժողականությունն առավել կարևորելն է, իսկ ընտանիքն այլևս հնարավոր չէ պահպանել, եթե միջամտություն է իրականացվում: Թերևս երկրորդ հիմնական պատճառը, հատկապես ֆորմալ ինստիտուտների միջմատության դեպքում, վերջիններիս հանդեպ վստահության ցածր մակարդակն է:

357. Հատկանշական է, որ միջամտության վերաբերյալ ընդհանուր մոտեցումը չի տարբերվում բռնություն ենթարկված կանանց խմբի և այլ խմբերի մասնակիցների մոտ, թեև բռնություն վերապրած կանանց խմբում մասնակիցների ավելի զգալի մասն է հակված չմիջամտելուն, ինչն անուղղակիորեն հաստատում է նրանց փորձառության ընթացքում արդյունավետ միջամտություն չստանալու հանգամանքը: Մեկ այլ հանգամանք ևս տարբերվում է այս երկու խմբերում. բռնություն վերապրած կանայք շատ ավելի քիչ են վստահում ֆորմալ կառույցներին և չեն հավատում միջամտության հավանական արդյունավետությանը, քան բռնության փորձառություն չունեցող մասնակիցները:

358. Միջամության հանդեպ վերաբերմունքը պայմանավորված է բռնության տեսակով: Բռնության ոչ ֆիզիկական դրսևորումների դեպքում թերևս ավելի բարդ է հստակորեն որոշել միջամտության պատշաճ ժամանակն ու եղանակը, քանի որ խոսքն ընտանիքի մասին է, իսկ միջամտությունը, հատկապես ֆորմալ կառույցների դեպքում, ենթադրում է խնդրի հանրայնացում այս կամ այն աստիճանով:

359. Չնայած միջամտության վերաբերյալ ընդհանուր առմամբ ավելի բացասական վերաբերմունքին՝ կարծիքները տարբերվում են բռնություն վերապրած անձանց համաձայնության խնդրի շուրջ: Ոմանք կարծում են, թե պետք է ամեն դեպքում միջամտել և պաշտպանել բռնություն վերապրած անձին, իսկ մյուսները հավատացած են, որ անհատի անձնական կարծիքը միշտ պետք է առաջնային լինի, և եթե չկա համաձայնություն, որևէ կերպ միջամտել պետք չէ: Այս տեսակետները կիսում են նաև բռնություն վերապրած կանայք:

360. Ֆորմալ կառույցների վերաբերմունքն այս խնդրին ևս արտացոլում է վերոնշալ հակասական տեսակետները, մասնավորապես իրավապահ մարմինների կողմից իրավական մեխանիզմների կիրառման դեպքում, որտեղ գերակշռում է մասնավոր մեղադրանքի առաջադրման պրակտիկան:

361. Չնայած միջամտության հանդեպ ընդհանուր առմամբ բացասական վերաբերմունքին՝ առաջին օղակը, որին մարդիկ հակված են դիմել միջամտության համար, ոչ ֆորմալ դերակատարներն են՝ *ընտանիքի հարազատները, մասնավորապես ամուսինների ծնողները, ընկեր(ուհի)ները, ավելի հազվադեպ՝ քավորը,* թեև հստակորեն նշվում է նաև միջամտության արդյունավետության փխրուն հավանականության մասին: Հատկանշական է, որ ավանդական հասարակություն լինելով հանդերձ, ավանդական ինստիտուտներն աստիճանաբար կորցնում են իրենց գործառույթները նոր իրողություններում:

362. Ոչ ֆորմալ ինստիտուտների միջամտության առումով որոշակի առանձնահատկություն է նկատվում մասնակիցների ընկալումներում՝ ըստ բնակության վայրի: Այսպես, թե՛ քաղաքում, թե՛ գյուղում շեշտվում է գյուղերում համայնքի առավել ազդեցիկ և արձագանքող լինելու և ընտանեկան բռնության առավել քիչ դեպքեր գրանցվելու հանգամանքը, քանի որ համայնքը, անգամ առանց միջամտության, ընտանիքի և ամուսինների հարաբերությունների վերաբերյալ իր ակնկալիքներով զսպող դերակատարություն ունի:

363. Ընտանեկան բռնությունը կանխելու, բռնություն գործադրողին պատժելու և բռնություն վերապրած անձին պաշտպանելու գործառույթներ իրականացնող պետական կառույցների թվում առանձնացվում է իրավապահ մարմինների դերը, իսկ ամենահաճախ քննարկվող կառույցը ոստիկանությունն է:

364. Պետական կառույցների և հատկապես իրավապահ մարմինների հանդեպ ընդհանուր անվստահության մթնոլորտում մասնակիցները նշում են ընտանեկան բռնության դեպքում ոստիկանությանը չդիմելու հիմնական երկու պատճառ.

- ոստիկանություն դիմել նշանակում է բացառել ընտանիքը պահպանելու հավանականությունը.
- ոստիկանություն դիմելով՝ կնոջ ու երեխաների վիճակն ավելի է վատթարանում, որովհետև ոստիկանությունը չի կարողանում ապահովել նրանց անվտանգությունը, անգամ ամուսինների բաժանումից/ապահարզանից հետո:

365. Պետական այլ կառույցներից ակնկալիքները հիմնականում երկու նախարարություններից են՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և ՀՀ կրթության և գիտության նախարարություն: Առաջինից ակնկալվում է աջակցություն բռնություն վերապրած անձանց, թեև առանց մանրամասնելու, թե ինչպիսի աջակցություն է անհրաժեշտ, երկրորդից՝ կարծրատիպերի փոփոխության և իրավունքների վերաբերյալ իրազեկվածության միջոցառումներ:

366. ՀԿ-ներից ակնկալվում է բռնություն վերապրած կանանց իրավունքների պաշտպանություն և կանանց տնտեսական անկախության հաստատման համար հնարավորությունների ընձեռում:

367. Ընդհանուր առմամբ, ֆորմալ կառույցների միջամտության արդյունավետության հանդեպ վստահության աստիճանը շատ ցածր է, մինչդեռ անհատ մասնագետների՝ հոգեբան, սոցիալական աշխատող, միջամտության արդյունավետության հանդեպ այն բավականին բարձր է:

8.5. Աջակցություն ընտանեկան բռնություն վերապրած անձանց

368. Ընտանեկան բռնություն վերապրած անձանց տրամադրվող աջակցությունը կարելի է դասակարգել ըստ արձագանքման հրատապության՝

- *անմիջական և հրատապ արձագանք ընտանեկան բռնության դեպքերին*, եթե զոհը, բռնություն հրահրողը կամ երրորդ որևէ անձ բարձրաձայնել է դրանց մասին.
- *շարունակական աջակցություն ընտանեկան բռնություն վերապրած անձանց*. բռնության դեպքին արձագանքելուց հետո բռնություն վերապրած անձի սոցիալ-հոգեբանական վերականգնման և հետագա կյանքի բարեկեցիկ որակն ապահովելու համար անհրաժեշտ աջակցություն:

369. Ընտանեկան բռնության դեպքերում ուղղորդման պրակտիկան թերևս կարելի է բաժանել երկու խմբի՝ երբ տեղի է ունենում ֆիզիկական բռնության շարունակական դրսևորում և ընտանեկան բռնության այլ դրսևորումներ: Երկրորդ դեպքում ուղղորդում որպես այդպիսին գրեթե չի լինում, կամ եթե լինում է, ապա տուժողն անձամբ կամ ՀԿ-ի միջնորդությամբ դիմում է սոցիալական աջակցություն տրամադրող պետական կամ հասարակական կառույցներ, հիմնականում այլ համատեքստում (օրինակ՝ հոգեկան առողջության խնդիր, մտավոր զարգացման, հոգեբանական խնդիրների, աղքատության հետևանքների մեղմելու), և ոչ թե ընտանեկան բռնության արդյունքում տուժելով պայմանավորված աջակցություն ստանալու համար:

370. Առաջին դեպքում, երբ ընտանիքի անդամը տուժել է բռնության ֆիզիկական դրսևորման արդյունքում, ուղղորդման պրակտիկայի հետագիծը հետևյալն է. *բռնություն վերապրած անձը դիմում է պետական կառույց՝ հիմնականում մարզպետարան կամ ՏԻՄ կառույց, ՀԿ կամ ոստիկանություն*:

371. Հրատապ աջակցություն տրամադրելու հիմնական խոչընդոտներից մեկը վարչարարությունն է, որը բավականին դանդաղեցնում է գործընթացը, և, ելնելով մասնավոր դեպքի առանձնահատկություններից, ծառայություն տրամադրողը երբեմն որոշում է շրջանցել այն և հիմնվել սեփական սոցիալական կապիտալի վրա:

372. Իրավապահ մարմնին դիմելուց հետո արձագանքը հիմնականում չի տարբերվում անձի հանդեպ կատարված իրավախախտումների այլ դեպքերով ընդհանուր պրակտիկայից: Արձագանքը բավականին գծային է. հիմնականում մասնավոր՝ բռնություն վերապրած անձի կողմից հաղորդում ոստիկանություն, այնուհետև ոստիկանության կողմից հետաքննության իրականացում, արդյունքում՝ իրավապահ մամինների կողմից քրեական գործի հարուցում, հարուցման մերժում կամ կարճում, այնուհետև նախաքննություն՝ Քննչական կոմիտեի աշխատակիցների ներգրավմամբ, որն սկսվում է քրեական գործ

հարուցելուց հետո և ավարտվում մեղադրական եզրակացություն կազմելով և գործը դատարան ուղարկելու մասին որոշում կայացնելով կամ քրեական գործի վարույթը կարճելով:

373. Ուղղորդման այս գծայնությունը, սակայն, կարող է խախտվել, եթե գործընթացում ներգրավվում է հասարակական կազմակերպություն, որովհետև երբեմն հենց ՀԿ-ներն են, որ ընտանեկան բռնություն վերապրած անձին ուղղորդում են ոստիկանություն՝ իրենց գործունեության ընթացքում բացահայտելով ընտանեկան բռնության դեպքեր:

374. Իրավապահ մարմիններին դիմելուց հետո առանցքային են համարվում այդ մարմինների՝ *բռնություն վերապրած անձի հետ հարաբերվելու, նրա անվտանգությունն ապահովելու* և *ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների* խնդիրները:

375. Հատկանշական է, որ առողջապահական, կրթական և սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցներից դեպի ոստիկանություն ուղղորդման դեպքերը սակավաթիվ են:

376. Շարունակական աջակցության պետական մեխանիզմներ, որոնք անմիջականորեն միտված կլինեին ընտանեկան բռնություն վերապրած անձանց, չկան, թեև պետական աջակցություն նրանց տրամադրվում է սոցիալական ծառայությունների տեսքով՝ այլ շրջանակման ներքո: Այս առումով կարևորվում է երկու խնդիր՝ *մշտական կացարանով ապահովում և մասնագիտության ձեռքբերում*, երկու նախապայման, որոնք, թույլ կտան բռնություն վերապրած անձանց ձեռք բերել ֆինանսական անկախություն և սեփական ուժերով ապահովել իրենց կյանքի որակը:

8.6. Բռնություն գործադրողի հետապնդում և վերականգնում

377. Բռնություն գործադրողի վերականգնման պրակտիկան սահմանափակվում է գրեթե բացառապես քրեակատարողական մեխանիզմների կիրառմամբ, այն էլ հիմնականում այն դեպքում, երբ կիրառվել է ֆիզիկական բռնություն:

8.7. Հանրային իրազեկվածությունն ընտանեկան բռնության և դրան արձագանքելու համար առկա ծառայությունների վերաբերյալ

378. Թե՛ ֆոկուս խմբերի, թե՛ հարցազրույցների արդյունքները փաստում են, որ կատարված աշխատանքների ու հատկապես ՀԿ-ների ներգրավվածության արդյունքում որոշակիորեն բարելավվել է հանրային իրազեկվածության մակարդակը, մասնավորապես ընտանեկան բռնության վերաբերյալ ընկալումների առումով:

379. Հանրության ավելի իրազեկված լինելու դրսևորումներ են համարվում.

- ընտանեկան բռնությունը որպես խնդիր ընդունելու հանգամանքը, որը դեռևս տաս տարի առաջ ժխտվում էր.
- այն հանգամանքը, որ երևույթը համարվում է անընդունելի, մինչդեռ ոչ հեռու անցյալում այն դիտարկվում էր որպես սովորական ներընտանեկան, առօրեական խնդիր.
- ըստ ոստիկանության տվյալների՝ մարդիկ ավելի շատ են հակված դիմել իրավապահ մարմիններին իրենց հանդեպ ընտանիքում գործադրված բռնության բողոքներով:

380. Այդուհանդերձ, հանրային իրազեկման մակարդակը բարձրացնելու նպատակով մեծածավալ աշխատանքի կարիք կա, քանի որ կատարված աշխատանքի արդյունքում ընտանեկան բռնության հանդեպ միանշանակ հանրային վերաբերմունք դեռևս ձևավորված չէ:

381. Չնայած կատարված աշխատանքներին իրազեկվածության մակարդակն առկա ծառայությունների առումով մնում է անբավարար: Ինստիտուցիոնալ կառույցներից առաջինը, որի մասին նշում են մասնակիցները և որտեղ ենթադրում են, որ պետք է դիմել ընտանեկան բռնության ծայրահեղ դրսևորումների դեպքում, ոստիկանությունն է: Ոմանք նշում են ՀԿ-ների թեժ գծերի մասին, թեև ոչ ոք չգիտի որևէ կոնկրետ թեժ գիծ, ուր կարելի է զանգահարել: Մեծ մասամբ, մասնակիցները տեղյակ չեն, թե ինչպիսի իրավական արձագանք է նախատեսվում ընտանեկան բռնության դեպքերի համար:

382. Ըստ փորձագետների՝ առկա է նաև ընտանեկան բռնություն վերապրած անձանց համար հասանելի *ծառայությունների և դրանց մասին տեղեկատվության մատչելիության խնդիր*, որը հատկապես սուր է դրսևորվում գյուղական համայնքներում և սոցիալապես խոցելի տարբեր խմբերում:

8.8. Կանոնակարգման շրջանակ

383. «Ընտանեկան բռնությունը» սահմանվում է երեք փաստաթղթերով՝ 2014թ. Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենքով, 2011թ. Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագրով և 2014թ. նոյեմբերի 17-ի՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանով: ՄԻՊ-ի գնահատմամբ՝ ընտանեկան բռնության սահմանումները օրենսդրական շրջանակում հիմնականում համապատասխանում են Ստամբուլի կոնվենցիայի չափանիշներին: Սակայն, առավել ակնհայտ խնդիրներ առկա են պետական կառույցների, հատկապես՝ իրավապահ մարմինների աշխատակիցների ընկալումների մակարդակում:

384. Պետական կառույցներում ընտանեկան բռնության մեկ ընդհանուր սահմանում կիրառելը բավականին բարդ է, քանի որ պայմանավորված է ոչ միայն երևույթին արձագանքելու տվյալ կառույցի մասնավոր գործառույթներով, այլև կառույցի առաքելությամբ և խնդիրներով:

385. Ընտանեկան բռնության դեպքերին անմիջականորեն արձագանքելու և բռնություն վերապրած անձին աջակցություն տրամադրելու մեխանիզմները ներառում են ընտանեկան բռնություն վերապրած անձի նույնականացման և ուղղորդման մեխանիզմները: Այս մեխանիզմները և պատասխանատու կառույցները սահմանվում են 2014 թվականին ընդունված «Սոցիալական աջակցության մասին» օրենքով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2015թ. 10 սեպտեմբերի ընդունված «Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների լիազորությունների իրականացման և սոցիալական ծառայությունների տրամադրման կարգն ու պայմանները սահմանելու մասին» N 1061-Ն որոշմամբ:

386. 2014 թվականին «Սոցիալական աջակցության մասին» օրենքն ընդունելուց հետո մշակվեցին «Ընտանեկան բռնության ենթարկված անձանց նախնական նույնացման չափորոշիչներ» և «Ընտանեկան բռնության ենթարկված անձանց ուղղորդման ուղեցույց», որոնք համապատասխանաբար հաստատվել են ՀՀ ԱՍՀ նախարարի՝ 2015թ. հոկտեմբերի 20-ի Ն 144-Ա/1 և 2015թ. դեկտեմբերի 10-ի Ն 177-Ա/1 հրամաններով: Այս մեխանիզմները պետք է հիմք ծառայեին սոցիալական ծառայություններ մատուցող առնվազն պետական կառույցների՝ ՀՀ ԱՍՀՆ ենթակայության տակ գտնվող սոցիալական ծառայությունների գործունեության համար, սակայն հարցազրույցների ընթացքում պարզվում է, որ այս գործիքները գործնականում համատարած կիրառում չեն գտել:

387. Բռնություն վերապրած անձի նույնականացման և ուղղորդման չափանիշներ և մեխանիզմներ են առաջարկում ծառայություն մատուցող ՀԿ-ները, որոնք սակայն կիրառում են միայն ընտանեկան բռնություն վերապրած կանանց ծառայություններ մատուցող առանձին կազմակերպություններ:

388. Ընտանեկան բռնության դեմ պայքարի և կանխարգելման նպատակով տարբեր կառույցների՝ քաղաքականություն մշակողների, իրականացնողների և ծառայություններ մատուցողների, միջև համագործակցությունը խթանելու համար ՀՀ կառավարության կողմից մշակվել են նաև մի քանի մեխանիզմներ: Մասնավորապես, Միջգերատեսչական համագործակցությունը համակարգող առանցքային շրջանակային փաստաթուղթը 2015թ. սեպտեմբերի 10-ի N 1044-ն ՀՀ կառավարության որոշումն է *«Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին»*: ՀՀ վարչապետի 2010թ. 30 մարտի 213-Ա որոշմամբ ստեղծվել է «Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողով», որին անդամակցում են համապատասխան նախարարություններ, միջազգային գործընկերներ և հասարակական կազմակերպութուններ: Այս հանձնաժողովի աշխատանքները ներառում են մասնավորապես ընտանեկան բռնություն վերապրած անձանց աջակցության տրամադրման խնդիրները:

389. ՀՀ վարչապետի մեկ այլ ՝ 2016թ. հունիսի 28-ի 567-Ա որոշմամբ՝ «Ընտանեկան բռնության դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակման միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին», ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի կազմում ներգրավվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ առողջապահության, ՀՀ ֆինանսների նախարարությունների, ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ ոստիկանության և ՄԻՊ ներկայացուցիչներ:

390. «Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ փորձագիտական կարծիքներում առանձնացվում են հետևյալ առանցքային խնդիրները՝ ա) օրենքի նախագծի ընդունումից հետո բոլոր հարակից օրենսդրական փաստաթղթերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, բ) ընտանեկան բռնության քրեականացման, գ) մասնավոր ընդդեմ հանրային մեղադրանքի առաջադրման, դ) նախագծի ընդունման և օրենքի արդյունավետ կիրարկման համար անհրաժեշտ հանրային պահանջարկի ձևավորման, և ե) նախագծի շուրջ հաղորդակցության խնդիրները:

8.9. Փաստա-վիճակագրական հենք

391. Փորձագետների կարծիքով՝ ընտանեկան բռնության վերաբերյալ փաստա-վիճակագրական համապարփակ հենք, որի վրա կարելի է հիմնվել համապատասխան քաղաքականություն մշակելիս, գոյություն չունի: Կան ընտանեկան բռնության վերաբերյալ առանձին հետազոտություններ, հատվածական, ոլորտային վիճակագրական տվյալներ, սակայն *միասնական, համապարփակ համակարգ*, որտեղ կհամակարգվեն այս տվյալները, առկա չէ, սակայն առկա և հասանելի տվյալները ոչ միշտ է, որ դառնում են քաղաքականության մշակման հիմք:

392. Տվյալների վստահելիության, ընդհանրապես փաստա-վիճակագրական տվյալների ձևավորման մեթոդաբանության, ինչպես նաև այս հենքի կիրառման առումով կարևորվում է տարբեր կառույցների միջև համագործակցության խնդիրը, մասնավորապես հետազոտողների, ծառայություններ մատուցողների, վերլուծական կենտրոնների (think tank) և քաղաքականություն մշակողների միջև, գործընթացի բոլոր փուլերում՝ հետազոտության/հարցման խնդիրների մշակման, տվյալների հավաքագրման (դաշտային աշխատանքների), վերլուծության և ամփոփման, ինչպես նաև դրանց կիրառման փուլերում:

8.10. Կանխարգելում

393. Ընտանեկան բռնությունը կանխելու վերաբերյալ առաջարկները պայմանավորված են բռնության առաջացմանը նպաստող գործոնների և դրանց կարևորության ընկալմամբ: Թե՛ ֆոկուս խմբերը, թե՛ փորձագետները շեշտադրվում են *զբաղվածության, դաստիարակության, կրթության և իրազեկման միջոցով կանխարգելումը:*

394. Ընտանեկան բռնության կանխարգելման նպատակով հետազոտության ընթացքում հնչել են հետևյալ առաջարկները.

- աշխատանքով ապահում թե՛ տղամարդուն, թե՛ կնոջը.
- բռնարարի հետապնդման և պատժի հետևողական կիրառում.
- մասնագիտական ծառայությունների մատչելիություն և հասանալիություն.
- հաղորդակցության, ծնողավարության հմտությունների զարգացում.

395. Ինստիտուցիոնալ կարողությունների առումով փորձագետները առաջարկում են.

- *ներդրումներ կատարել սոցիալական աջակցության տարածքային մարմինների կայացման նպատակով, մասնավորապես արձագանքելով* հետևյալ խնդիրներին. սոցիալական աջակցության տարածքային մարմինների աշխատակիցների աշխատանքային ծանրաբեռնվածությանը համապատասխան վարձատրություն, մասնագիտական կարողություններ ձեռք բերելու համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծում, մասնագիտական կադրերով հագեցվածություն, դեպքի վարման հմտությունների և ճիշտ ուղղորդում կատարելու համար անհրաժեշտ գիտելիք և հմտություններ, դեպքերի վարման համար նախատեսվող համապարփակ էլեկտրոնային համակարգի ամբողջականացում և վերջնական շահագործում, ՍԱՏԲ գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի հստակեցում, սոցիալական աշխատողի անվտանգության ապահովում, ՍԱՏԲ ամենօրյա աշխատանքն արդյունավետորեն կազմակերպելու համար անհրաժեշտ ռեսուրսների տրամադրում.

- խնդրին արձագանքող պետական կառույցներում մասնագիտական կարողությունների զարգացում.
- ընտանեկան բռնություն վերապրած անձանց մատուցվող ծառայությունների որակի վերահսկում.
- փորձի փոխանակում՝ ներառյալ բազմամասնագիտական թիմերի պարբերական հանդիպումների միջոցով.
- ընտանեկան բռնությանն արձագանքող պետական կառույցների գործառույթների և ուղղահայաց հարաբերությունների հստակեցում.
- ծառայություններ մատուցող ՀԿ-ների կայունություն.
- մասնակցային որոշումների կայացում.
- պետական մարմինների և ՀԿ-ների միջև համագործակցություն.
- համալիր սոցիալական ծառայությունների համակարգի շարունակական ներդրման ընթացքում սոցիալական աշխատողների դերի կարևորում:

9. Հավելված 1.Ընտանեկան բռնության և այս ոլորտում լիազորություններ ունեցող, գործառույթներ իրականացնող և ծառայություններ մատուցող ֆորմալ և ոչ ֆորմալ կառույցների և ներկա պրակտիկայի վերաբերյալ հասարակության վերաբերմունքի ուսումնասիրության ֆոկուս խմբերի հարցաշար

<u>Բռնություն և բռնությանը նպաստող գործոններ.</u>

1. Գիտե՞ք այնպիսի ընտանիքներ/զույգեր, որտեղ ձեր կարծիքով բռնության դրսևորումներ կան: Ինչո՞ւ եք այդպես կարծում: Ի՞նչն եք համարում բռնություն:
2. Ինչպիսի՞ն է այդ ընտանիք(ներ)ում բռնության բնույթը. ինչպե՞ս է բռնությունը դրսևորվում: Որքանո՞վ է շրջապատի համար տեսանելի բռնությունը:
3. Արդյո՞ք նման իրավիճակները կրկնվում են, հաճախակի են, տևական են:
4. Ըստ Ձեզ, ո՞վ կամ ի՞նչն է հրահրում բռնություն: Արդյո՞ք այդ պատճառները կրկնվում են, հաճախակի են, տևական են:
5. Ձեր կարծիքով՝ արդյո՞ք հետևյալ գործոնները որևէ դեր ունեն ընտանիքում բռնության հրահրման և դրսևորման հարցում՝ միգրացիա, աղքատություն, գործազրկություն, ոչ նուկլեար ընտանիքի փաստ, ամուսնություններ տարբեր սոցիալական խմբերի և տարբեր մարզերի/համայնքների ներկայացուցիչների միջև, ընտանիքի՝ տղա երեխա ունենալու կամ չունենալու հանգամանք, SS կիրառում՝ մասնավորապես սոցիալական մեդիա, երեխայի դաստիարակության խնդիրներ, հատկապես սեռով պայմանավորված, եկամտի աղբյուր/վաստակողի մոդել, վարկային պատմություն, միայնակ մոր հանգամանք, երիտասարդ զույգերի նախաամուսնական հարաբերությունների բնույթ (dating):
6. Ինչպիսի՞ իրավիճակը/փոխհարաբերություններն ընտանիքում կարող են հանգեցնել բռնության էսկալացիայի (լարել իրավիճակը, սրել հարաբերությունները):
7. Արդյո՞ք նման իրավիճակները/փոխհարաբերությունները միշտ են հանգեցնում բռնության սրացման: Ո՞ր դեպքերում:
8. Ո՞ր դեպքերում է հնարավոր կանխել լարվածությունը և խուսափել բռնությունից: Ո՞վ/ի՞նչը/ինչպե՞ս կարող է նպաստել դրան (դերակատարները ընտանիքում/համայնքում/հասարակության մեջ):

<u>Բռնության ենթարկված անձի վարքը</u>

9. Բռնության դրսևորման դեպքում, ինչպե՞ս են վարվել բռնության ենթարկվածը, բռնություն կիրառողը և բռնություն հրահրողը (experience/practice):
10. Ըստ Ձեզ՝ ի՞նչ կարող է անել և պետք է անի բռնության ենթարկվածն իր անվտանգությունն ապահովելու, աջակցություն ստանալու և բռնություն գործադրողին պատասխանատվության ենթարկելու համար առկա ընթացակարգերի, իրավական կարգավորման, սովորույթների, ավանդույթների պայմաններում և մշակույթում: Արդյոք վերջինները տարբերվում են մարզից մարզ, համայնքից համայնք, սոցիալական խմբից սոցիալական խումբ (վերասոցիալականացում ընդլայնված ընտանիքներում):
11. Ու՞մ և ո՞ր կառույցներին կարող է դիմել բռնության զոհը կամ մյուս դերակատարները (including referral):
12. Նման դեպքերում ինչպիսի՞ աջակցություն կարող են ակնկալել: Ստացե՞լ են արդյոք աջակցություն: Արդյոք այդ աջակցությունը արդյունավետ է (ունք հանելու փոխարեն աչքը հանել): Եթե չեն դիմել, ապա՝ ինչո՞ւ:

Միջամտություն

13. Ինքներդ որևէ կերպ կմիջամտեի՞ք ընտանեկան բռնության սրացումը կանխելու, զոհին պաշտպանելու նպատակով: Ի՞նչն է Ձեզ խանգարում արդյունավետ միջամտելու, ի՞նչն է Ձեր հաջող միջամտության գրավականը:
14. Տեղյա՞կ եք արդյոք ընտանեկան բռնությանը միջամտության դեպքերի: Ո՞վ է միջամտել: Ի՞նչպիսին է եղել միջամտության արդյունքը:
15. Միջամտությունն ինչպե՞ս է ազդել բռնությունը գործադրողի, բռնության ենթարկվածի և համայնքի վրա:
16. Տեղյա՞կ եք ընտանեկան բռնության զոհերին աջակցություն առաջարկող ծառայություններից: Որքանո՞վ են դրանք հասանելի և մատչելի: Գիտե՞ք որևէ մեկին, ով երբևէ օգտվել է նման ծառայությունից: Ինչպե՞ս են նրանք գնահատում այդ ծառայությունը:
17. Ե՞րբ, ինչպե՞ս և ո՞ր դեպքերում (ո՞ր փուլում) է առավել նպատակահարմար/արդյունավետ աջակցողների և/կամ ծառայություն մատուցողների միջամտությունը: Ո՞ր դեպքերում է միջամտությունը աննպատակահարմար: Արդյոք նման աջակցությունը/միջամտությունը կարող է կանխել բռնությունը, կամ դրա սրացումը, պատասխանատվության ենթարկել բռնությունը գործադրողին և աջակցել բռնության ենթարկվածին: Արդյոք նման միջամտությունը կարող է զոհին դարձնել ավելի խոցելի, բռնություն գործադրողի մոտ սերմանել անպատժելիության զգացումը և համայնքում ձևավորել ընտանեկան բռնության հանդեպ հանդուրժողական վերաբերմունք:
18. Պետական կամ հասարակական ո՞ր կառույցները պետք է միջամտեն ընտանեկան բռնության դեպքերին: Ի՞նչն է համապատասխան կառույցներին օգնում կամ խանգարում արդյունավետ միջամտելու: Ի՞նչ կարողությունների կարիք ունեն ծառայություն տրամադրողները (գիտելիք, հմտություններ, վստահություն, լիազորություններ, օրենսդրություն, ընթացակարգեր, պայմաններ, ֆինանսական միջոցներ, կադրերի թիվ, փոխգործակցության մեխանիզմներ):
19. Ինչպիսի՞ն պիտի լինեն Ձեր կարծիքով ուղղորդման և փոխգործակցության (ասել մարդավարի) մեխանիզմները ընտանեկան բռնության դեպքերին պատշաճ կերպով արձագանքելու, զոհերին արդյունավետ պաշտպանություն, աջակցություն և վերականգնողական ծառայություններ ապահովելու, ընտանիքում և համայնքում ընտանեկան բռնության հանդեպ անհանդուրժողականություն ձևավորելու համար:

10. Հավելված 2. Փորձագիտական հարցազրույցներին մասնակցած ինստիտուտների ցանկ

Պետական մարմիններ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՀՀ առողջապահության նախարարություն
ՀՀ արդարադատության նախարարություն
ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ
ՀՀ Հանրային խորհուրդ
ՀՀ Շիրակի մարզպետարան
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
Երևան քաղաքի ավագանի
Երևանի քաղաքապետարան
Երևանի քաղաքապետարանի Շենգավիթ վարչական շրջան
ՀՀ գլխավոր դատախազություն
ՀՀ քննչական կոմիտե
Երևանի քննչական վարչության Արաբկիրի քննչական բաժին
Լոռու մարզային քննչական վարչություն
ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչություն
ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության ոստիկանության Գավառի բաժին
ՀՀ ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժին
ՀՀ ԱՍՀՆ Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ
ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ
Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության ու ազգագրության ինստիտուտ

Ոչ պետական կազմակերպություններ

Պանարմենիան Մեդիա Գրուպ
Քաղաքացիական հասարակության ինստիտուտ
Հայ Առաքելական Եկեղեցու Քրիստոնեական դաստիարակության կենտորն
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամ
«Սոցիալական արդարություն» հասարակական կազմակերպություն
Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ
«Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ
Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն
Համայնքային զարգացման և սոցիալական աջակցության կենտրոն
Երևանի քաղաքապետարանի թիվ 1 պոլիկլինիկա
Սոցիալական աջակցության «Գյումրի-2» տարածքային բաժին
Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ

11. Հավելված 3. Ընտանեկան բռնության և այս ոլորտում լիազորություններ ունեցող, գործառույթներ իրականացնող և ծառայություններ մատուցող ֆորմալ կառույցների ներկա պրակտիկայի իրավիճակային ուսումնասիրության փորձագիտական հարցազրույցի ընդհանրական հարցաշար

Փորձագետների պատկերացումներն ընտանեկան բռնության դրսևորումների վերաբերյալ

1. Ընտանեկան բռնության ո՞ր երևույթներին և դրսևորումներին եք առնչվում ձեր գործունեության ընթացքում: Ձեր կարծիքով որքանո՞վ է շրջապատի համար տեսանելի բռնությունը: Ձեր գնահատմամբ, արդյո՞ք նման իրավիճակները կրկնվում են, հաճախակի են, տևական են:
2. Ձեր կարծիքով՝ ինչպե՞ս է հասարակությունն ընկալում ընտանեկան բռնության երևույթի ազդեցությունը կյանքի տարբեր ոլորտների, հասարակության բարոյական և արժեքային կողմնորոշումների վրա:
3. Ձեր փորձից ելնելով՝ ո՞ր իրավիճակը/փոխհարաբերություններն են հիմնականում ընտանիքում հանգեցնում բռնության էսկալացիայի:
4. Ձեր փորձից ելնելով՝ ո՞ր դեպքերում եք հնարավոր համարում կանխել լարվածությունը և խուսափել բռնությունից: Ո՞ր դերակատարներն ու գործոնները կարող են նպաստել լարվածությունը կանխելուն և բռնությունից խուսափելուն (դերակատարները ընտանիքում/համայնքում/հասարակության մեջ): Ինչպե՞ս:
5. Ըստ Ձեզ՝ ո՞րն է պետության և համայնքի պատասխանատվության շրջանակը ամուսնու կամ զուգընկերոջ կողմից կատարված բռնության դեպքերում: Ո՞րն է պետության և համայնքի իրավասության շրջանակը ընտանեկան բռնության դեմ պայքարում:
6. Ընտանեկան բռնության դեմ պայքարի ոլորտում լիազորություններ և գործառույթներ ունեցող պետական կառույցներում «ընտանեկան բռնությունն» սահմանող ո՞ր փաստաթղթերն են գերակա: Ձեր կարծիքով՝ այդ կառույցներում որքանո՞վ է նույնական սահմանումը և որքանո՞վ է հետևողականորեն կիրառվում:
7. Ձեր կարծիքով՝ Ձեր ներկայացրած կառույցի առանձին ստորաբաժանումներում նո՞ւյնն է արդյոք ընտանեկան բռնության սահմանման կիրառությունը:
8. Ըստ Ձեզ՝ ի՞նչ կարող է անել և պետք է անի բռնության ենթարկվածն իր անվտանգությունն ապահովելու, աջակցություն ստանալու և բռնություն գործադրողին պատասխանատվության ենթարկելու համար՝ առկա ընթացակարգերի, իրավական կարգավորման, սովորույթների, ավանդույթների պայմաններում և մշակույթում: Արդյո՞ք վերջինները, Ձեր կարծիքով, տարբերվում են մարզից՝ մարզ, համայնքից՝ համայնք, սոցիալական խմբից՝ սոցիալական խումբ:

Կարիքների գնահատում

9. Ձեր կարծիքով՝ ինչպիսի՞ գործնական աջակցություն կարող է ակնկալել բռնության զոհը: Ձեր տեղեկություններով՝ բռնության զոհերը ստացե՞լ են արդյոք նման աջակցություն և արդյո՞ք նման աջակցությունը արդյունավետ է:
10. Ձեր կարծիքով՝ ո՞ր հիմնական պատճառներն են հաճախ խանգարում ընտանեկան բռնության զոհերին դիմելու շահագրգիռ կառույցներին պատշպանություն հայցելու նպատակով:
11. Ձեր կարծիքով՝ որո՞նք են ընտանեկան բռնության զոհերի պաշտպանությունն արդյունավետորեն կազմակերպելու հիմնական սահմանափակումները: Ի՞նչ է հարկավոր դրանք վերացնելու կամ մեղմելու համար:
12. Որքանո՞վ եք հասանելի և մատչելի համարում ընտանեկան բռնության զոհերին աջակցություն առաջարկող ծառայությունները:

13. Ինչպե՞ս են բռնության զոհերը գնահատում այդ ծառայությունների հասանելիությունը, մատչելիությունը և որակը:
14. Ինչպե՞ս կգնահատեք ընտանեկան բռնության զոհերին տրամադրվող սոցիալական, բժշկական, իրավական աջակցության և ծառայությունների առկա շրջանակը:
15. Ի՞նչ կարողությունների կարիք ունեն ծառայություն տրամադրողները (գիտելիք, հմտություններ, վստահություն, լիազորություններ, օրենսդրություն, ընթացակարգեր, պայմաններ, ֆինանսական միջոցներ, կադրերի թիվ, փոխգործակցության մեխանիզմներ):
16. Ե՞րբ, ինչպե՞ս և ո՞ր դեպքերում (ո՞ր փուլում) եք առավել նպատակահարմար/արդյունավետ համարում աջակցողների և/կամ ծառայություն մատուցողների միջամտությունը:
17. Ո՞ր դեպքերում եք միջամտությունը համարում աննպատակահարմար: Ձեր կարծիքով՝ արդյո՞ք նման աջակցությունը/միջամտությունը կարող է կանխել բռնությունը կամ դրա սրացումը, պատասխանատվության ենթարկել բռնությունը գործադրողին և աջակցել բռնության ենթարկվածին: Ո՞ր դեպքերում միջամտությունը կարող է զոհին դարձնել ավելի խոցելի, բռնություն գործադրողի մոտ սերմանել անպատժելիության զգացում և համայնքում ձևավորել ընտանեկան բռնության հանդեպ հանդուրժողական վերաբերմունք:
18. Ի՞նչն է համապատասխան կառույցներին օգնում կամ խանգարում արդյունավետորեն միջամտել ընտանեկան բռնության դեպքերին:
19. Ընտանեկան բռնության զոհերի պաշտպանության և բռնություն կիրառած անձի հետապնդումն իրականացնելու համար ինչպիսի՞ իրավական գործիքներ են առկա:
20. Ինչպե՞ս են ընտանեկան բռնության կանխարգելմանն ուղղված օրենսդրությունը և առկա նորմատիվ-իրավական ակտերն ապահովում բռնության կանխումը, աջակցության տրամադրումը և բռնություն կիրառողի հետապնդումը: Բավարա՞ր է արդյոք դրանց կիրառումը:
21. Ինչպե՞ս կգնահատեիք բռնություն կիրառած անձանց հետապնդման և վերականգնման առկա մեխանիզմները:
22. Ինչպիսի՞ն է ընտանեկան բռնության վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակը:

<u>Առկա գործառույթներ</u>

23. Ու՞մ և ո՞ր կառույցներին կարող են անմիջականորեն դիմել բռնության զոհը կամ մյուս դերակատարները: Որո՞նք են հիմնական դերակատարները:
24. Պետական կամ հասարակական ո՞ր կառույցները պետք է միջամտեն ընտանեկան բռնության դեպքերին:
25. Ուղղորդման և փոխգործակցության ինչպիսի՞ մեխանիզմներ *կան* ընտանեկան բռնության դեպքերին պատշաճ կերպով արձագանքելու, զոհերին արդյունավետ պաշտպանություն, աջակցություն և վերականգնողական ծառայություններ ապահովելու, ընտանիքում և համայնքում ընտանեկան բռնության հանդեպ անհանդուրժողականություն ձևավորելու համար:
26. Որո՞նք են Ձեր ներկայացրած կառույցի դերը և գործառույթները ընտանեկան բռնության կանխարգելման, այդ թվում՝
    - զոհերի ուղղորդման, պաշտպանության և վերականգնման գործում.
    - բռնություն գործադրողին պատասխանատվության ենթարկելու գործում.
    - այս ոլորտում պետական քաղաքականության մշակման, իրականացման և մշտադիտարկման գործում.
    - ընտանեկան բռնության, դրա պատճառների, դրսևորումների և հետևանքների բացահայտման և վերաբերյալ հանրային իրազեկման գործում.

- ընտանեկան բռնության զոհերին ծառայություններ մատուցողների կարողությունների զարգացման գործում.
- ընտանեկան բռնության դեմ պայքարի ծրագրերի իրականացման ընթացքում շահագրգիռ պետական, համայնքային և հասարակական կառույցների միջև համակարգման և միջգերատեսչական համագործակցության ապահովման գործում:

<u>Առաջարկություններ</u>

27. Ձեր կարծիքով՝ ի՞նչ է հարկավոր անել ընտանեկան բռնության վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:
28. Ուղղորդման և փոխգործակցության ինչպիսի՞ մեխանիզմներ *պետք է* լինեն ընտանեկան բռնության դեպքերին պատշաճ կերպով արձագանքելու, զոհերին արդյունավետ պաշտպանություն, աջակցություն և վերականգնողական ծառայություններ ապահովելու, ընտանիքում և համայնքում ընտանեկան բռնության հանդեպ անհանդուրժողականություն ձևավորելու համար:
29. Ինչպե՞ս կարելի է բարելավել ընտանեկան բռնության զոհերի պաշտպանության և բռնություն կիրառած անձի հետապնդումն իրականացնելու համար առկա իրավական գործիքներ և դրանց կիրառման արդյունավետությունը:
30. Ինչպե՞ս կարելի է բարելավել բռնություն կիրառած անձանց հետապնդման և վերականգնման առկա մեխանիզմները: Ինչպիսի՞ ռեսուրսներ են անհրաժեշտ:
31. Ինչպիսի՞ պետական ծրագրեր են անհրաժեշտ բռնություն կատարած անձանց վերականգնման համար: Ո՞վ պետք է իրականացնի դրանք և ինչպիսի՞ մեխանիզմներով:
32. Ի՞նչ միջոցառումներ է հարկավոր իրականացնել ընտանեկան բռնության վերաբերյալ տեղեկատվության և վիճակագրական տվյալների հնարավորինս ամբողջական հավաքագրման, հետազոտությունների և վերլուծությունների իրականացման և այս ամենի որակի բարելավման համար: Ձեր կարծիքով՝ որքանո՞վ են ընտանեկան բռնության դեմ պայքարի պետական քաղաքականությունը և ծրագրերը հիմնվում նման տեղեկատվության և վիճակագրության վրա:
33. Ձեր կարծիքով՝ ընտանեկան բռնության կանխարգելմանն ուղղված իրավական կարգավորման առկա հիմքերի, օրենսդրության և նորմատիվ-իրավական ակտերի կիրարկման մշտադիտարկման ինչպիսի՞ մեխանիզմներ են անհրաժեշտ: